Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Զարգացման ֆրանսիական գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև չհաստատված վարկային գիծ տրամադրելու մասին թիվ CAM 1029 շրջանակային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ CAM 1029**

---

# ՉՀԱՍՏԱՏՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ամսաթիվ՝ 2025 թվականի դեկտեմբերի 18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

(Վարկառու)

**եւ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

(Վարկատու)

**միջեւ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ........ 8
   1.1. Սահմանումները ........ 8
   1.2. Մեկնաբանությունը ........ 9
2. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ ........ 9
   2.1. Չհաստատված վարկային գիծը ........ 9
   2.2. Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառվող պայմանները ........ 10
3. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ........ 10
4. ՎԱՐԿԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ........ 11
   4.1. Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկը ........ 11
   4.2. Վարկի հաստատումը ........ 11
5. ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ........ 12
   5.1. Վարկը (վարկերը) ........ 12
   5.2. Գումարի չափը ........ 12
   5.3. Նպատակը ........ 12
   5.4. Մշտադիտարկումը ........ 13
   5.5. Նախապայմանները ........ 13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄԸ ........ 15
   6.1. Մասհանումների հասանելիությունը ........ 16
   6.2. Մասհանման հայտը ........ 16
   6.3. Վճարման կատարումը ........ 18
   6.4. Վարկի մասհանումը վերականգնվող Կանխավճարների միջոցով ........ 18
   6.5. Առաջին մասհանման վերջնաժամկետը ........ 22
   6.6. Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը ........ 23
   6.7. Համաֆինանսավորման հետ կապված Մասհանման պայմանները ........ 23
7. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՏՈԿՈՍԸ ........ 24
   7.1. Յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը ........ 24
   7.2. Տոկոսի հաշվարկումը եւ վճարումը ........ 27
   7.3. Ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը ........ 28
   7.4. Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկությունները փոխանցելը ........ 29


**8. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՏՈԿՈՍԻ**

**ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**................................................................ 30
8.1. Շուկայի ապակայունացումը ........................................................ 30
8.2. Հրապարակված դրույքաչափի փոխարինումը ........................................ 31
**9. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՎՃԱՐՆԵՐԸ** ........ 34
9.1. Յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի կոմիսիոն վճարները ........ 34
9.2. Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի գնահատման վճարը ....... 34
10. ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ........................................................................ 35
11. ՎԱՐԿԵՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ ............................................ 35
11.1. Վարկի շրջանակներում Կամավոր կանխավճարը ................................ 35
11.2. Վարկի շրջանակներում Պարտադիր կանխավճարը ............................ 36
11.3. Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը ........................................ 38
11.4. Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը ........................................ 39
11.5. Սահմանափակումները ............................................................... 39
12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 40
12.1. Ծախսերը եւ ծախքերը ................................................................ 40
12.2. Վարկի շրջանակներում չեղարկման համար փոխհատուցումը ............ 41
12.3. Վարկի շրջանակներում կանխավճարի մասով փոխհատուցումը......... 42
12.4. Հարկերը եւ տուրքերը ................................................................ 42
12.5. Լրացուցիչ ծախսերը ................................................................... 43
12.6. Արժույթի մասով փոխհատուցումը ................................................ 43
12.7. Վճարումների կատարման ամսաթվերը .......................................... 44
13. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎՈՂ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ..... 45
13.1. Լիազորությունները ................................................................... 46
13.2. Վավերականությունն ու որպես ապացույց ընդունելիությունը ............. 46
13.3. Պարտադիր պարտավորությունները .............................................. 46
13.4. Համաձայնագիրը չներկայացնելը կամ դրոշմատուրքերի բացակայությունը ........................................................................ 47
13.5. Ֆինանսական միջոցների փոխանցումը .......................................... 47
13.6. Այլ պարտավորությունների հետ հակասության բացակայությունը ...... 48
13.7. Կարգավորող իրավունքը եւ կիրարկումը ........................................ 48
13.8. Պարտավորությունների չկատարման բացառումը ............................ 48
13.9. Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացառումը ............................ 48

13.10. Ծրագրի փաստաթղթերը ... 49
13.11. Ծրագրի թույլտվությունները ... 49
13.12. Գնումները ... 49
13.13. *Pari Passu* դասակարգումը ... 50
13.14. Ֆինանսական միջոցների օրինական ծագումը եւ Արգելված գործելակերպերը ... 50
13.15. Էական բացասական ազդեցության բացառումը ... 51
14. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 51
14.1. Համապատասխանությունն օրենքներին եւ կարգավորումներին ... 52
14.2. Թույլտվությունները ... 52
14.3. Ծրագրի փաստաթղթերը ... 52
14.4. Ծրագրի բաղադրիչի իրականացումը եւ պահպանումը ... 53
14.5. Գնումները ... 53
14.6. Բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվությունը ... 55
14.7. Լրացուցիչ ֆինանսավորումը ... 58
14.8. *Pari Passu* դասակարգումը ... 58
14.9. Ձիջումը ... 59
14.10. Ծրագրի բաղադրիչի հաշիվը ... 59
14.11. Ստուգումները ... 59
14.12. Ծրագրի բաղադրիչի գնահատումը ... 60
14.13. Ֆինանսական պատժամիջոցների ցանկերը եւ էմբարգոն ... 61
14.14. Օրինական ծագումը. Արգելված գործելակերպերի բացակայությունը . 61
14.15. Քննությունները ... 62
14.16. Տեսանելիությունը եւ հաղորդակցությունը ... 63
15. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՆԵԼԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 63
15.1. Ֆինանսական տեղեկությունները ... 64
15.2. Ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը ... 64
15.3. Համաֆինանսավորումը ... 65
15.4. Այլ տեղեկություններ ... 65
16. ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ... 66

16.1. Պարտավորությունների չկատարման դեպքերը ........ 66
16.2. Վարկի ժամկետից շուտ մարելու պահանջը ........ 71
16.3. Պարտավորությունների չկատարման դեպքի մասին ծանուցելը ........ 72
17. ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ........ 72
17.1. Վճարումները ........ 72
17.2. Հաշվանցումը ........ 73
17.3. Բանկային օրերը ........ 73
17.4. Վճարման արժույթը ........ 74
17.5. Տոկոսների հաշվարկման բազան ........ 74
17.6. Վճարման վայրը ........ 74
17.7. Վճարային համակարգերի խափանումը ........ 75
18. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ ........ 76
18.1. Հավաստումներն ու սահմանումները ........ 76
18.2. Զիջումը ........ 76
18.3. Գաղտնիությունը. Տեղեկությունների բացահայտումը ........ 76
18.4. Վաղեմության ժամկետը ........ 77
18.5. Դժվարությունները ........ 78
18.6. Ֆինանսական միջոցների անվճար փոխանցումը. կիրառելի չէ ........ 78
18.7. Լեզուն ........ 78
18.8. Մասնակի անվավերությունը ........ 78
18.9. Իրավունքներից հրաժարման բացառումը ........ 79
18.10. Իրավաբանական ուժը ........ 79
18.11. Ամբողջական համաձայնագիրը ........ 79
18.12. Փոփոխությունները ........ 80
19. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ........ 80
19.1. Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները ........ 80
19.2. Հանձնումը ........ 81
19.3. Էլեկտրոնային հաղորդագրությունները ........ 82
20. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՈՄԻՑԻԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ........ 83
20.1. Կարգավորող իրավունքը ........ 83
20.2. Արբիտրաժը ........ 83
20.3. Դոմիցիլի ընտրությունը ........ 83

21. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .................................................. 84
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ................................................ 87
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.................................. 92
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ............................................................. 108
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՎԱՐԿԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ........................................ 117
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԸ.......... 129
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒԻ ԿԱՅՔՈՒՄ . 139
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ Է ԲՍ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ............................................................................. 144
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ.............................................................................................. 145
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՁՖԳ-Ի ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ .......................................................................................................... 147
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ................................................................ 151

**ՉՀԱՍՏԱՏՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝

ի դեմս պրն Վահե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ՝ որպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար, որը պատշաճ լիազորված է ստորագրելու Շրջանակային համաձայնագիրը,

**(Հայաստանի Հանրապետության կառավարություն** կամ **Վարկառու)**

**ԵՎ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝** Ֆրանսիայի իրավունքով կարգավորվող ֆրանսիական հանրային կազմակերպության, որի իրավաբանական հասցեն է՝ Ֆրանսիա, 75598 Փարիզ, Սեդեքս 12, Ռոլան Բարթ 5՝ գրանցված Փարիզի առեւտրային եւ ընկերությունների ռեգիստրում 775 665 599 համարի ներքո, ի դեմս Ֆեննի ԴԵԼՓԵՅԻ՝ որպես Զարգացման ֆրանսիական գործակալության Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն, որը պատշաճ լիազորված է ստորագրելու Շրջանակային համաձայնագիրը,

**(ԶՖԳ** կամ **Վարկատու)**

(այսուհետ միասին՝ **Կողմեր,** եւ յուրաքանչյուրն առանձին՝ **Կողմ)**

**ՄԻՋԵՎ:**

**ՔԱՆԻ ՈՐ՝**

Ա) Շրջանակային համաձայնագրի 1-ին հավելվածում *(Ծրագրի նկարագրությունը)* սահմանված ծրագրի (այսուհետ՝ **Ծրագիր)** համատեքստում Վարկառուն նախատեսում է իրականացնել Ծրագրի մեկ կամ մի քանի բաղադրիչներ:

Բ) Վարչական խորհրդի 2025 թվականի մայիսի 22-ի թիվ C2025097 *որոշմամբ* Գործակալությունը լիազորված է կնքելու սույն Շրջանակային համաձայնագիրը՝ վարկեր տրամադրելու նպատակով:

Գ) Վարկատուն, որը Ֆրանսիայի պետության զարգացման աջակցության քաղաքականության իրականացմանը նպաստող հանրային կազմակերպություն է (համաձայն Ֆրանսիայի դրամավարկային եւ ֆինանսական օրենսգրքի Լ. 515-13 հոդվածի), իր շահագրգռվածությունն է հայտնել մասնակցելու Ծրագրի ֆինանսավորմանը:

Դ) Վարկառուն եւ ՀՖԳ-ն պայմանավորվել են նախապես սահմանել այն պայմանները, որոնցով Վարկառուն կարող է հայտ ներկայացնել ՀՖԳ-ին՝ Ծրագրի բաղադրիչների ամբողջական կամ մասնակի ֆինանսավորման նպատակով վարկի տրամադրման համար, որը ՀՖԳ-ն կարող է ընդունել կամ մերժել՝ կախված կոնկրետ դեպքից:

Ե) Որպես համաֆինանսավորող՝ Համաշխարհային բանկը Վարկառուին տրամադրել է ֆինանսավորում՝ ընդհանուր առավելագույնը 70,400,000 եվրո գումարի չափով:

Զ) Վարկատուի եւ Համաշխարհային բանկի միջեւ կնքվելիք համաֆինանսավորման համաձայնագրի (Համաֆինանսավորման համաձայնագիր) համաձայն՝ ՀՖԳ-ն համաձայնել է Ծրագրի իրականացման հետ կապված որոշ առաջադրանքներ/ծառայություններ պատվիրակել Համաֆինանսավորողին:

**ՀԵՏԵՎԱԲԱՐ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1. Սահմանումները

Շրջանակային համաձայնագրում (այդ թվում՝ Շրջանակային համաձայնագրի հավելվածներում) օգտագործվող մեծատառով բառերն ու

արտահայտություններն ունեն այն նշանակությունը, որը դրանց տրված է Շրջանակային համաձայնագրի 2-րդ հավելվածում *(Սահմանումները և մեկնաբանությունը)*՝ բացի այն դեպքերից, երբ Շրջանակային համաձայնագրով այլ բան է նախատեսված:

1.2. <u>Մեկնաբանությունը</u>

Շրջանակային համաձայնագրում օգտագործվող բառերն ու արտահայտությունները մեկնաբանվում են Շրջանակային համաձայնագրի 2-րդ հավելվածում *(Սահմանումները և մեկնաբանությունը)* ներկայացված դրույթներին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ:

## 2. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ

2.1. <u>Չհաստատված վարկային գիծը</u>

Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից և քանի դեռ այն լիակատար ուժի մեջ է՝ համաձայն 3-րդ կետի *(Շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետը)*, Վարկառուն կարող է ցանկացած պահի դիմել ԶՖԳ-ին՝ Ծրագրի բաղադրիչն ամբողջությամբ կամ մասնակիորեն *ֆինանսավորելու* նպատակով վարկ տրամադրելու համար՝ ԶՖԳ-ին ներկայացնելով պատշաճ կերպով լրացված՝ Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտ:

Վարկ տրամադրելու վերաբերյալ *հայտն* ստանալուց հետո ԶՖԳ-ն կարող է յուրաքանչյուր դեպքի համար առանձին, ըստ իր հայեցողության, առանց որևէ պարտավորության որոշում կայացնել համապատասխան վարկի համար ներկայացված հայտը մերժելու կամ ընդունելու վերաբերյալ:

Քանի դեռ ԶՖԳ-ն չի ընդունել Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտը՝ 4-րդ կետին *(Վարկի հասանելիությունը)* համապատասխան, ԶՖԳ-ն հայցվող Վարկը Վարկառուին տրամադրելու որևէ պարտավորություն չունի:

2.2. Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառվող պայմանները

ԶՖԳ-ն եւ Վարկառուն համաձայն են, որ յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառվող պայմանները, որը ԶՖԳ-ն կարող է, ըստ իր *հայեցողության,* որոշել տրամադրելու Վարկառուին, սահմանված են Շրջանակային համաձայնագրով եւ Վարկի համապատասխան հաստատմամբ:

ԶՖԳ-ն եւ Վարկառուն ընդունում եւ համաձայնում են, որ Վարկի յուրաքանչյուր հաստատման ուժի մեջ մտնելը կախված է Շրջանակային համաձայնագրի վավերացումից:

## 3. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն *Շրջանակային համաձայնագիրն* ուժի մեջ է մտնում դա Ուժի մեջ մտնելու ամսաթվին եւ շարունակում է գործել Ստորագրման ամսաթվից հետո երեք (3) տարի ժամկետով **(Վերջնական ամսաթիվ):**

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի՝ մինչեւ Վերջնական ամսաթիվը, առանց փոխհատուցման (բացի վարկային միջոցների չմարված մասի համար ունեցած պարտավորություններից) *դադարեցնել* Շրջանակային համաձայնագրի գործողությունը՝ պայմանով, որ այն մյուս Կողմին ուղարկի ծանուցում պատվիրված նամակի միջոցով՝ հանձնման մասին ծանուցմամբ, այդ ծանուցման մեջ նշված՝ գործողության դադարեցման ենթադրյալ ամսաթվից առնվազն տասնհինգ (15) օրացուցային օր առաջ (**Գործողության դադարեցման ամսաթիվ):**

Վերջնական ամսաթվից երեք ամիս առաջ ընկնող ամսաթվից սկսած կամ գործողության դադարեցման մասին վերոնշյալ ծանուցումն ուղարկելու ամսաթվից սկսած՝ Վարկառուն Վարկ տրամադրելու վերաբերյալ որեւէ հայտ չի ուղարկում ԶՖԳ-ին, սակայն Շրջանակային համաձայնագիրը շարունակում է ուժի մեջ մնալ եւ գործել *դեռեւս չմարված* Վարկերի մասով այնքան ժամանակ, քանի դեռ Ֆինանսական փաստաթղթերի համաձայն՝ որեւէ գումար դեռեւս ենթակա է վճարման:

## 4. ՎԱՐԿԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

### 4.1. Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկը

Վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին պատշաճ կերպով լրացված Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտն ստանալուց հետո ՁՖԳ-ն կարող է, սակայն պարտավոր չէ Վարկառուին ուղարկել Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկ, որով կսահմանվեն այն պայմանները, որոնք կիրառելի կլինեն հայցվող Վարկի նկատմամբ, եթե ՁՖԳ-ն համաձայնի այդ Վարկը Վարկառուին տրամադրել:

Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկ ներկայացնելը որեւէ դեպքում չի համարվում ՁՖԳ-ի կողմից պարտավորության ստանձնում՝ տրամադրելու հայցվող Վարկը:

Վարկառուն ընդունում է այդ ֆինանսական պայմանները՝ Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկի վրա դնելով իր ստորագրությունն ու նշելով ամսաթիվը:

### 4.2. Վարկի հաստատումը

ՁՖԳ-ն կարող է ընդունել Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտը՝ Վարկառուի կողմից ստորագրված Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկում շարադրված ֆինանսական պայմաններով:

Այդ դեպքում ՁՖԳ-ն Վարկառուին ուղարկում է Վարկի հաստատում: Վարկառուի կողմից Վարկի հաստատման մեջ նշված պայմաններն ընդունելու ամսաթվից սկսած եւ 5.5 կետում *(Նախապայմանները)* թվարկված նախապայմանները կատարելու պայմանով ՁՖԳ-ն պարտավորվում է տրամադրել հայցվող Վարկը:

Վարկառուն այդ Վարկի հաստատման պայմաններն ընդունում է այն ստորագրելու միջոցով:

Յուրաքանչյուր Վարկ կարգավորվում է Ֆինանսական փաստաթղթի պայմաններով:

## 5. ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Վարկը (վարկերը)

Վարկատուն կարող է համաձայնել Ֆինանսական փաստաթղթի դրույթներին համապատասխան Վարկառուին տրամադրել մեկ կամ մի քանի Վարկ (Վարկեր)՝ Վարկի համապատասխան հաստատման մեջ նշված առավելագույն ընդհանուր գումարի չափով, որը չի գերազանցում ստորեւ՝ 5.2 կետում *(Գումարի չափը)* նշված առավելագույն ընդհանուր գումարը:

5.2. Գումարի չափը

Պայմանով, որ նշված դրույթները որեւէ դեպքում չեն համարվում ՀՖԳ-ի կողմից Վարկառուին որեւէ Վարկ տրամադրելու պարտավորություն՝

ա) Վարկերի ընդհանուր գումարը, որը կարող է շնորհվել Շրջանակային համաձայնագրի շրջանակներում, չի կարող գերազանցել հարյուր միլիոն եվրոն ***(100.000.000*** եվրո).

բ) Սյունիքի բաղադրիչի ֆինանսավորման համար առաջին Վարկի գումարի առավելագույն չափը կազմում է երեսուն միլիոն եվրո ***(30.000.000*** եվրո).

գ) «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար առաջին տրանշի համար երկրորդ Վարկի առավելագույն գումարի չափը կազմում է երեսուն միլիոն եվրո ***(30.000.000*** եվրո).

դ) «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար երկրորդ տրանշի համար երրորդ Վարկի առավելագույն գումարի չափը կազմում է քառասուն միլիոն եվրո ***(40.000.000*** եվրո).

ե) Շրջանակային համաձայնագրի շրջանակներում տրամադրվող Վարկերի քանակը չի կարող գերազանցել երեքը (3):

5.3. Նպատակը

Վարկառուն իր կողմից Վարկի միջոցով փոխառված ամբողջ գումարն օգտագործում է բացառապես Ծրագրի համապատասխան բաղադրիչի Թույլատրելի ծախսերը *ֆինանսավորելու* համար՝ առանց հարկերի, Ծրագրի բաղադրիչի նկարագրությանը եւ Վարկի հաստատման հավելվածում ներկայացված Ֆինանսավորման պլանին համապատասխան:

Վարկառուն որպես Իրականացնող մարմին է նշանակել Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեին:

5.4. Մշտադիտարկումը

Վարկատուն պատասխանատվության չի ենթարկվում փոխառված որեւէ գումարի օգտագործման համար, որը Ֆինանսական փաստաթղթերի դրույթներին *համապատասխան* չէ:

5.5. Նախապայմանները

ա) Վարկառուն Ստորագրման ամսաթվից ոչ ուշ Վարկատուին է տրամադրում Շրջանակային համաձայնագրի 3-Ա հավելվածի *(Նախապայմանները)* I մասով *(Շրջանակային համաձայնագիրն ստորագրելու նախապայմանները)* սահմանված բոլոր փաստաթղթերը՝ Վարկատուին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ:

բ) Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտը չի կարող ներկայացվել Վարկատուին, եթե Վարկատուն չի ստացել Շրջանակային համաձայնագրի 3-Ա հավելվածի (*Նախապայմանները)* II մասում *(Վարկի յուրաքանչյուր հասփափում սփորագրելու նախապայմանները)* թվարկված բոլոր փաստաթղթերը եւ չի ծանուցել *Վարկառուին,* որ այդ փաստաթղթերն ըստ ձեւի եւ բովանդակության համապատասխանում են այդ հավելվածի պահանջներին:

գ) Վարկ տրամադրելու վերաբերյալ հայտ ներկայացվելուց հետո եւ Վարկի հաստատման ստորագրման ամսաթվին Վարկառուն հաստատում է, որ 13-րդ կետում *(Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* շարադրված բոլոր հավաստիացումները ճշգրիտ են:

դ) Մասհանման հայտ չի կարող ներկայացվել Վարկատուին, եթե՝

i) առաջին Մասհանման դեպքում Վարկատուն չի ստացել Շրջանակային համաձայնագրի 3-Ա հավելվածի *(Նախապայմանները)* III մասում *(Վարկային միջոցների առաջին Մասհանման նախապայմանները)* թվարկված բոլոր փաստաթղթերը եւ չի ծանուցել Վարկառուին, որ այդ փաստաթղթերն ըստ ձեւի եւ բովանդակության բավարար են. եւ

ii) ցանկացած հերթական Մասհանման դեպքում Վարկատուն չի ստացել Շրջանակային համաձայնագրի 3-Բ հավելվածում *(Նախապայմանները)* թվարկված բոլոր համապատասխան փաստաթղթերը եւ չի ծանուցել Վարկառուին, որ այդ փաստաթղթերն ըստ ձեւի եւ բովանդակության բավարար են:

ե) Վարկատուն Մասհանումը տրամադրում է միայն, եթե Մասհանման հայտը ներկայացնելու կիրառելի ամսաթվի եւ Մասհանման կիրառելի ամսաթվի դրությամբ տեղի չի ունեցել Վճարային համակարգերի խափանման դեպք, եւ Ֆինանսական փաստաթղթերով սահմանված պայմանները բավարարվել են, այդ թվում՝

i) Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք կամ պարտադիր կանխավճարի որեւէ դեպք չի շարունակվել կամ տեղի չի ունեցել առաջարկվող Մասհանման արդյունքում.

ii) որեւէ Համաֆինանսավորող չի կասեցրել Ծրագրի բաղադրիչի հետ կապված իր վճարումները.

iii) Վարկառուն ժամանակին կատարում է Համաձայնագրով սահմանված վճարային իր բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ վճարներն ու միջնորդավճարները.

iv) Մասհանման հայտը ներկայացվել է Շրջանակային համաձայնագրի 6.2 կետի *(Մասհանման հայտը)* պայմաններին համապատասխան.

v) Շրջանակային համաձայնագրի 13-րդ կետի *(Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* առնչությամբ Վարկառուի կողմից արված յուրաքանչյուր հայտարարություն ճիշտ է. եւ

vi) նախնական Կանխավճարից բացի յուրաքանչյուր այլ Կանխավճարի դեպքում նախկինում ստացված Կանխավճարն օգտագործվել է Շրջանակային համաձայնագրի դրույթներին համապատասխան:

q) «WISE» բաղադրիչի շրջանակներում Մասհանման համար՝

i) Վարկառուն պարտավորվում է, որ Իրականացնող մարմինը Մասհանման իր հայտերը միաժամանակ ուղարկի ինչպես ԶՖԳ-ին, այնպես էլ Համաշխարհային բանկին, եւ ապահովի, որ հայցվող գումարները հաշվարկվեն «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար նախատեսված Վարկի ֆինանսավորման մասով յուրաքանչյուր Համաֆինանսավորողի բաժնի համամասնության հիմքով (հղում՝ 1-ին հավելվածի (Նախագծի նկարագրությունը) «Արժեքը եւ ֆինանսավորումը» բաժնին).

ii) Վարկառուն պարտավորվում է, որ Իրականացնող մարմինը Համաֆինանսավորողներին (ԶՖԳ եւ Համաշխարհային բանկ) կտրամադրի համապատասխան փաստաթղթեր՝ կապված նրանց համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի հետ, եւ յուրաքանչյուր Մասհանման հայտի համար պատճենը կուղարկի մյուս Համաֆինանսավորողին.

iii) Վարկառուն տեղեկացվում է եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինը տեղեկացվի, որ յուրաքանչյուր հատկացումից առաջ յուրաքանչյուր Համաֆինանսավորող մյուսին էլեկտրոնային փոստով հաստատի, որ իր վարկային համաձայնագրով նախատեսված նախապայմանները կատարվել են, եւ ոչինչ չի խոչընդոտում հատկացման կատարումը:

## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄԸ

6.1. Մասհանումների հասանելիությունը

Վարկի շրջանակներում ցանկացած գումար կտրամադրվի Վարկառուին սույն Վարկին վերաբերող Վարկի տրամադրման ժամանակահատվածում՝ մեկ կամ մի քանի Մասհանումների միջոցով, մինչեւ այդ Վարկի շրջանակներում հասանելի գումարի չափը՝ պայմանով, որ Մասհանումների քանակը չգերազանցի քսանը (20-ը):

6.2. Մասհանման հայտը

Եթե 5.5 կետում *(Նախապայմանները)* նշված պայմանները բավարարված են, ապա Վարկառուի կողմից այդ նպատակով պատշաճ կերպով նշանակված Իրականացնող մարմինը կարող է օգտվել Վարկային միջոցներից՝ հետեւելով ստորեւ նկարագրված քայլերին, ներկայացնելով՝

i) Սյունիքի վարկի Մասհանման համար. պատշաճ կերպով լրացված եւ ստորագրված Մասհանման հայտն Իրականացնող մարմնի կողմից տրամադրվում է Վարկառուին եւ ուղարկվում է Վարկառուին՝ ՁՖԳ գրասենյակի տնօրենին՝ 19.1 կետում (*Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները*) նշված հասցեով՝ Մասհանման համապատասխան նախապայմանի համար պահանջվող հիմնավորող բոլոր փաստաթղթերի հետ միասին: Հայտերը պետք է ստորագրված լինեն նաեւ Վարկառուի կողմից:

ii) «WISE» վարկի շրջանակներում միջոցների Մասհանման համար. Համաֆինանսավորողին պետք է ներկայացվի պատշաճ կերպով լրացված եւ ստորագրված Մասհանման հայտի էլեկտրոնային օրինակը համապատասխան Մասհանման նախապայման հանդիսացող բոլոր հիմնավորող փաստաթղթերի հետ միասին, Համաֆինանսավորող վարկային համաձայնագրի համաձայն համապատասխան միջոցների Մասհանման հայտի ներկայացման հետ միաժամանակ՝ Համաֆինանսավորող վարկային համաձայնագրի պայմաններին եւ դրույթներին համապատասխան. եւ

պատշաճ լրացված եւ ստորագրված Մասհանման հայտի թղթային

տարբերակը պետք է հանձնվի ՀՖԳ գրասենյակի տնօրենին՝ 19.1 կետում (*Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները*) նշված հասցեով:

Կասկածներից խուսափելու համար էլեկտրոնային եղանակով ստորագրված Մասհանման հայտի պատճենը եւ ուղեկցող փաստաթղթերի բոլոր պատճենները պետք է տրամադրվեն Վարկառուին՝ Համաֆինանսավորողի կողմից, եւ

վճարումները կատարվեն Համաֆինանսավորողի կողմից տրված՝ անհրաժեշտության դեպքում թարմացվող, Մասհանման եւ ֆինանսական տեղեկատվության նամակում (DFIL) ներկայացված հրահանգներին համապատասխան:

Յուրաքանչյուր Մասհանման հայտ անհետկանչելի է եւ համարվում է պատշաճ կերպով լրացված, եթե՝

բ) Մասհանման հայտն էապես համապատասխանում է Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի *(Վարկի շրջանակներում Մասհանումների ձեւը)* I մասով *(Մասհանման հայտի ձեւը)* սահմանված ձեւին.

գ) Մասհանման հայտը Վարկատուն ստանում է ոչ ուշ, քան Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետից տասնհինգ (15) Բանկային օր առաջ.

դ) Մասհանման ամսաթիվը Վարկի տրամադրման ժամանակահատվածում ընկած Բանկային օր է.

ե) Մասհանման գումարը համապատասխանում է Շրջանակային համաձայնագրի 6.4 կետի *(Վարկի մասհանումը վերականգնվող Կանխավճարների միջոցով)* եւ Վարկի հաստատման պայմաններին, եւ

զ) կատարվել են 5.5(դ) կետի պայմանները:

Ցանկացած փաստաթղթային ապացույց, ինչպես օրինակ՝ հաշիվները կամ վճարված հաշիվ-վավերագրերը, ներառում է համապատասխան վճարման հանձնարարականի հղումային համարը եւ ամսաթիվը: Վարկառուն պարտավորվում է պահպանել փաստաթղթային ապացույցների բնօրինակները,

ցանկացած պահի տրամադրել այդ ապացույցները Վարկատուին եւ նրան տրամադրել այդ ապացույցների վավերացված պատճենները կամ կրկնօրինակները՝ ըստ Վարկատուի պահանջի:

6.3. <u>Վճարման կատարումը</u>

Շրջանակային համաձայնագրի 17.7 կետի *(Վճարային համակարգերի խափանումը)* համաձայն՝ եթե Շրջանակային համաձայնագրի 5.5 կետով *(Նախապայմանները)* սահմանված բոլոր պայմանները բավարարվել են, ապա Վարկատուն պահանջվող Մասհանումն Իրականացնող մարմնի համար հասանելի է դարձնում Մասհանման ամսաթվից ոչ ուշ:

Վարկատուն Վարկառուին եւ *Իրականացնող* մարմնին տրամադրում է Մասհանումը հաստատող գրություն՝ էապես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի *(Վարկի շրջանակներում Մասհանումների ձեւը)* II մասով *(Մասհանման եւ դրույքաչափի հաստատման ձեւը)* նախատեսված ձեւով:

6.4. <u>Վարկի մասհանումը վերականգնվող Կանխավճարների միջոցով</u>

Վարկը Վարկատուի կողմից կտրամադրվի կանխավճարների **(Կանխավճար(ներ))** ձեւով, որոնք վճարվում են համապատասխան Ծրագրի բաղադրիչի հաշվին (ինչպես սահմանված է ստորեւ):

6.4.1. <u>Յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի բացումը</u>

Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինը բացի եւ վարի հաշիվ(ներ) յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի անվանմամբ **(Ծրագրի բաղադրիչի հաշիվ),** Հայաստանի կենտրոնական բանկում **(Հաշվի բանկ)՝** միայն հետեւյալ նպատակով՝ i) Մասհանման միջոցների ստացում, եւ ii) յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վճարում:

Վարկառուն սույնով պարտավորվում է ապահովել, որ Իրականացնող մարմինը հրաժարվի եւ ապահովի, որ Հաշվի բանկը հրաժարվի այդ կողմի կողմից յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի եւ Հաշվի բանկում

Իրականացնող մարմնի անվամբ բացված ցանկացած այլ հաշվի կամ Իրականացնող մարմնի ցանկացած այլ պարտքի նկատմամբ հաշվանցման ցանկացած իրավունքից:

6.4.2. Նախնական կանխավճարը

Եթե սույն Համաձայնագրի 5.5 կետում *(Նախապայմանները)* նշված պայմանները բավարարված են, ապա Վարկատուն համապատասխան Ծրագրի բաղադրիչի հաշվին վճարում է Մասհանման հայտում նշված գումարի նախնական Կանխավճար (Վարկի հաստատման մեջ սահմանված չափով):

6.4.3. Լրացուցիչ կանխավճարները

Լրացուցիչ կանխավճարները կվճարվեն Իրականացնող մարմնի պահանջով՝ Շրջանակային համաձայնագրի 5.5 կետում *(Նախապայմանները)* նշված կիրառելի պայմաններին համապատասխան: Յուրաքանչյուր հաջորդ Կանխավճարի գումարը Վարկի հաստատման մեջ նշված նվազագույն գումարի չափով է կամ Տրամադրված վարկին հավասար գումարի չափով, եթե այդ գումարը պակաս է Վարկի հաստատման մեջ նշված գումարից:

6.4.4. Վերջնական Կանխավճարը

Եթե Վարկատուն այլ բանի շուրջ չի համաձայնում, ապա վերջնական Կանխավճարը վճարվում է նույն պայմաններով, ինչ մյուս Կանխավճարները, եւ եթե կիրառելի է, հաշվի է առնվում Կողմերի միջեւ համաձայնեցված Ծրագրի բաղադրիչի ֆինանսավորման պլանի ցանկացած փոփոխություն:

6.4.5. Կանխավճարների օգտագործման հիմնավորումը

Վարկառուն համաձայնում է ապահովել, որ Իրականացնող մարմինը Վարկատուին ուղղակիորեն եւ Համաֆինանսավորողի միջոցով տրամադրի հետեւյալը.

ա) վերջնական Կանխավճարի Մասհանման ամսաթվից ոչ ուշ, քան վեց (6) ամիս անց Իրականացնող մարմնի լիազորված ստորագրողի կողմից ստորագրված վկայական, որը հավաստում է, որ ինչպես նախավերջին

Կանխավճարի, այնպես էլ վերջնական Կանխավճարի հարյուր տոկոսը (100%) օգտագործվել է, եւ որով ներկայացվում է համապատասխան ժամանակահատվածում Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերի համար վճարված գումարների մանրամասն բացվածք, եւ

բ) վերը նշված «ա» ենթապարբերության մեջ նշված վկայականի տրամադրման օրվանից ոչ ուշ, քան երեք (3) ամիս անց յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի աուդիտի վերջնական հաշվետվություն **(Աուդիտի վերջնական հաշվետվություն),** որն անցկացվել է Համաֆինանսավորողի Վարկային համաձայնագրի եւ Ծրագրի գործառնական ձեռնարկի դրույթներին համապատասխան՝ Իրականացնող մարմնի կողմից նշանակված անկախ եւ հեղինակավոր աուդիտորական ընկերության կողմից՝ պայմանով, որ Վարկատուն առարկություն չի ներկայացնի աուդիտի առաքելության տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ: Աուդիտորական բոլոր ծախսերը վճարում է Վարկառուն: Նշանակված աուդիտորական ընկերությունը ստուգում է, որ Վարկի շրջանակներում մասհանված եւ Ծրագրի բաղադրիչի հաշվին վճարված բոլոր գումարներն օգտագործվեն սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

6.4.6. Կիրառելի փոխարժեքը

Եթե Ծրագրի բաղադրիչի որեւէ Թույլատրելի ծախս արտահայտված է եվրոյից բացի այլ արժույթով, ապա Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինը հաշիվ-վավերագրի գումարը փոխարկի եվրոյով համարժեք գումարի՝ օգտագործելով Հայաստանի կենտրոնական բանկի կողմից կիրառվող համապատասխան արժույթի փոխարժեքը:

6.4.7. Ֆինանսական միջոցներն օգտագործելու վերջնաժամկետը

Վարկառուն համաձայնում է եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինը համաձայնի, որ Կանխավճարների տեսքով վճարված բոլոր ֆինանսական միջոցներն ամբողջությամբ օգտագործվեն Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի

ծախսերը վճարելու համար ոչ ուշ, քան մինչեւ Վարկի հաստատման մեջ նշված վերջնաժամկետը:

6.4.8. Վերահսկողությունը, աուդիտը

Վարկառուն համաձայնում է, որ Մասհանման ժամանակահատվածում յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշիվն աուդիտի ենթարկվի Համաֆինանսավորողի Վարկային համաձայնագրի եւ Ծրագրի գործառնական ձեռնարկի դրույթներին համապատասխան: Այս աուդիտներն իրականացվում են Վարկառուի կամ Իրականացնող մարմնի կողմից նշանակված անկախ եւ հեղինակավոր աուդիտորական ընկերության կողմից՝ պայմանով, որ Համաֆինանսավորողը չառարկի աուդիտի առաջելության տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ, եւ պայմանով, որ Համաֆինանսավորողը չառարկի նշանակված աուդիտորական ընկերության վերաբերյալ: Աուդիտորական բոլոր ծախսերը վճարում է Վարկառուն: Աուդիտորական ընկերությունը ստուգում է, որ Վարկային գծի շրջանակներում մասհանված եւ Ծրագրի բաղադրիչի հաշվին վճարված բոլոր գումարներն օգտագործվեն սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Աուդիտի հաշվետվությունները Վարկառուն տրամադրում է Վարկատուին Համաֆինանսավորողի միջոցով: Վարկատուն կարող է նաեւ ուղղակիորեն պահանջել, որ Վարկառուն տրամադրի աուդիտի այդպիսի հաշվետվություն:

6.4.9. Կանխավճարների օգտագործման համար հիմնավորում չտրամադրելը

Վարկատուն կարող է պահանջել, որ Վարկառուն մարի՝

ա) այն բոլոր գումարները, որոնց առնչությամբ օգտագործումը պատշաճ կերպով կամ բավարար չափով չի հիմնավորվել որպես Թույլատրելի ծախսեր, ինչպես նաեւ

բ) բոլոր մյուս չվճարված գումարները ցանկացած Ծրագրի բաղադրիչի հաշվի կրեդիտին՝ Շրջանակային համաձայնագրի 6.4.7 կետի *(Ֆինանսական*

*միջոցների օգտագործման վերջնաժամկետը)* համաձայն որպես օգտագործման վերջնաժամկետ նշված ամսաթվին:

Վարկառուն Վարկատուին է վերադարձնում այդ գումարները Վարկատուից այդպիսի ծանուցում ստանալու օրվանից հետո քսան (20) օրացուցային օրվա ընթացքում: Այս կետի համաձայն Վարկառուի կողմից կատարված ցանկացած մարում համարվում է պարտադիր մարում՝ համաձայն Ընդհանուր համաձայնագրի 11.2 կետի *(Պարտադիր մարումը)* դրույթների:

6.4.10. Փաստաթղթերի պահպանումը

Վարկառուն պարտավորվում է հանձնարարել Իրականացնող մարմնին պահպանել յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի եւ Կանխավճարների օգտագործման հետ կապված փաստաթղթային ապացույցները եւ այլ փաստաթղթեր՝ Վերջնական կանխավճարի Մասհանման ամսաթվից տասը (10) տարի ժամկետով:

Վարկառուն պարտավորվում է այդ փաստաթղթային ապացույցները եւ մյուս փաստաթղթերը տրամադրել Վարկատուին կամ Վարկատուի կողմից նշանակված ցանկացած աուդիտորական ընկերության՝ Վարկատուի պահանջով:

<u>6.5. Առաջին մասհանման վերջնաժամկետը</u>

Վարկի առաջին Մասհանումը տեղի է ունենում ամենաուշը Վարկի համապատասխան հաստատման մեջ նշված Առաջին մասհանման վերջնաժամկետին:

Եթե առաջին Մասհանումը տեղի չի ունենում վերը նշված ժամանակահատվածում, ապա Վարկատուն կարող է չեղարկել Վարկը՝ համաձայն Ընդհանուր համաձայնագրի 11.4 կետի *(Վարկատուի կողմից վարկի չեղարկումը):*

Առաջին մասհանման վերջնաժամկետը չի երկարաձգվում առանց Վարկատուի նախնական համաձայնության:

Առաջին մասհանման վերջնաժամկետի ցանկացած երկարաձգում՝ i) արվում է նոր վճարների դիմաց եւ (կամ) նոր ֆինանսական պայմաններով եւ ii) գրավոր ձեւակերպվում է Կողմերի միջեւ որպես փոփոխություն:

6.6. <u>Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը</u>

Վարկի ամբողջական Մասհանումը կատարվում է Վարկի համապատասխան հաստատմամբ սահմանված՝ Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ:

Եթե վերոնշյալ ժամանակահատվածում ամբողջական Մասհանում չի կատարվում, ապա Վարկատուն կարող է չեղարկել Վարկային սահմանաչափի մնացորդը՝ Շրջանակային համաձայնագրի 11.4 կետին *(Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը)* համապատասխան:

Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը չի երկարաձգվում առանց Վարկատուի նախնական համաձայնության:

Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետի ցանկացած երկարաձգում՝ i) արվում է վճարների դիմաց եւ (կամ) նոր ֆինանսական պայմաններով եւ ii) գրավոր ձեւակերպվում է Կողմերի միջեւ որպես փոփոխություն:

6.7. <u>Համաֆինանսավորման հետ կապված Մասհանման պայմանները</u>

Յուրաքանչյուր Մասհանում համապատասխանում է սույն Համաձայնագրի պայմաններին, մասնավորապես՝ 6-րդ հոդվածին (Ֆինանսական միջոցների մասհանումները), որոնք ներառում են Մասհանումների պայմանները՝ կապված Համաֆինանսավորման հետ:

Կասկածներից խուսափելու համար Վարկատուի կողմից Մասհանման հետ կապված պարտականությունների կատարումը Համաֆինանսավորողին հանձնարարելը չի խոչընդոտում, որ Վարկատուն մերժի Մասհանումը, եթե Վարկատուի կարծիքով այդ Մասհանման պայմանները բավարար չեն:

## 7. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՏՈԿՈՍԸ

### 7.1. Յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը

#### 7.1.1. Տոկոսադրույքի ընտրությունը

Յուրաքանչյուր Մասհանման համար Վարկառուն կարող է ընտրել Ֆիքսված տոկոսադրույք կամ Լողացող տոկոսադրույք, որը կիրառվում է համապատասխան Մասհանման հայտում նշված գումարի նկատմամբ՝ ընտրված, այսինքն՝ Ֆիքսված կամ Լողացող տոկոսադրույքը նշելով էապես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի *(Վարկի շրջանակներում Մասհանումների ձեւը)* I մասով *(Մասհանման հայտի ձեւը)* սահմանված ձեւին համապատասխան Վարկատուին տրամադրվող Մասհանման հայտում՝ հետեւյալ պայմաններով.

ա) Լողացող տոկոսադրույք

Անկախ հայցվող Մասհանման գումարի չափից՝ Վարկառուն կարող է ընտրել Լողացող տոկոսադրույք, որը տարեկան տոկոսադրույքի գումարն է, որը հետեւյալի հանրագումարն է.

- վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ կամ ըստ կոնկրետ դեպքի՝ Փոխարինված բազային դրույքաչափ՝ գումարած Շրջանակային համաձայնագրի 8-րդ կետի *(Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի տոկոսների հաշվարկման փոփոխությունը)* դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եւ
- Թույլատրելի սահմանաչափ:

Չնայած վերոնշյալին՝ յուրաքանչյուր Մասհանման համար եւ այն դեպքում, երբ Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածը պակաս է հարյուր երեսունհինգ (135) օրվանից, կիրառվող ԵՎՐԻԲՈՐ-ը կազմում է՝

- մեկամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը կամ ըստ կոնկրետ դեպքի՝ Փոխարինված բազային դրույքաչափը՝ գումարած Շրջանակային համաձայնագրի 8-րդ կետի

*(Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի տոկոսների հաշվարկման փոփոխությունը)* դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եթե Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածը պակաս է վաթսուն (60) օրվանից, կամ

- եռամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը կամ ըստ կոնկրետ դեպքի՝ Փոխարինված բազային դրույքաչափը՝ գումարած Շրջանակային համաձայնագրի 8-րդ կետի *(Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի տոկոսների հաշվարկման փոփոխությունը)* դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եթե Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածը տատանվում է վաթսունից (60) հարյուր երեսունհինգ (135) օրվա միջակայքում:

բ) Ֆիքսված տոկոսադրույք

Եթե հայցվող Մասհանման գումարը հավասար է երեք միլիոն եվրոյի (3,000,000 եվրո) կամ դրանից ավելի է, ապա Վարկառուն կարող է այդ հայցվող Մասհանման համար ընտրել Ֆիքսված տոկոսադրույք: Ֆիքսված տոկոսադրույքը Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափն է, որն Ինդեքսային դրույքաչափի որեւէ տատանման հետեւանքով ավելացել կամ նվազել է Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթվի եւ յուրաքանչյուր Մասհանման դրույքաչափի սահմանման ամսաթվի միջեւ:

Վարկառուն կարող է Մասհանման հայտի մեջ նշել Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը: Եթե Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ հաշվարկված Ֆիքսված տոկոսադրույքը գերազանցում է համապատասխան Մասհանման հայտում նշված՝ Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը, ապա այդ Մասհանման հայտը չեղարկվում է, իսկ չեղարկված Մասհանման հայտում նշված Մասհանման գումարը մուտքագրվում է Հասանելի վարկին:

7.1.2. Նվազագույն տոկոսադրույքը

7.1.1. կետին *(Տոկոսադրույքի ընտրությունը)* համապատասխան սահմանված Տոկոսադրույքը, անկախ ընտրված տարբերակից, տարեկան զրո ամբողջ քսանհինգ տոկոսից (0.25%) պակաս չէ՝ չնայած տոկոսադրույքների որեւէ նվազման:

7.1.3. Լողացող տոկոսադրույքի փոխարկումը Ֆիքսված տոկոսադրույքի

Մեկ կամ մեկից ավելի Մասհանման նկատմամբ կիրառվող Լողացող տոկոսադրույքը փոխարկվում է Ֆիքսված տոկոսադրույքի՝ ստորեւ շարադրված պայմաններով.

ա) Դրույքաչափի փոխարկում Վարկառուի պահանջով կամ Վարկատուի նախաձեռնությամբ՝ Վերակազմավորման դեպքում

Վարկառուն կարող է ցանկացած պահի պահանջել, որ Վարկատուն Մասհանման կամ մի քանի Մասհանումների նկատմամբ կիրառվող Լողացող տոկոսադրույքը փոխարկի Ֆիքսված տոկոսադրույքի՝ պայմանով, որ այդ Մասհանման գումարը կամ Մասհանումների (կիրառելիության դեպքում) հանրագումարը հավասար է երեք միլիոն եվրոյի (3,000,000 եվրո) կամ գերազանցում է այն:

Այդ նպատակով Վարկառուն Վարկատուին է ուղարկում Դրույքաչափի փոխարկման հայտ՝ էապես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի (*Վարկի շրջանակներում Մասհանումների ձեւը)* III մասում (*Փոխարկման հայտի ձեւը)* սահմանված ձեւով: Վարկառուն կարող է Դրույքաչափի փոխարկման վերաբերյալ գրության մեջ նշել Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը: Եթե Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ հաշվարկված Ֆիքսված տոկոսադրույքը գերազանցում է Վարկառուի կողմից Դրույքաչափի փոխարկման հայտում նշված Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը, ապա Դրույքաչափի փոխարկման այդ հայտն ինքնաբերաբար չեղարկվում է:

Ֆիքսված տոկոսադրույքն ուժի մեջ է մտնում Դրույքաչափի սահմանման

ամսաթվից երկու (2) Բանկային օր հետո:

Վարկառուի վրա ազդող եւ Վարկի վրա բացասական ազդեցություն ունենալու հավանականություն ունեցող Վերակազմավորման կամ Վերակազմավորման նախագծի դեպքում եւ Կողմերի շահերի վրա հիմնված Վերակազմավորման ավարտը դյուրացնելու նպատակով Վարկատուն կարող է Լողացող տոկոսադրույքը փոխարկել մեկ կամ մի քանի Մասհանումների նկատմամբ կիրառվող Ֆիքսված տոկոսադրույքի: Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է ցանկացած այդպիսի փոխարկման մասին:

բ) <u>Դրույքաչափի փոխարկման կարգը</u>

Համապատասխան Մասհանման (Մասհանումների) նկատմամբ կիրառվող Ֆիքսված տոկոսադրույքը սահմանվում է Շրջանակային համաձայնագրի 7.1.1(բ) կետին *(Ֆիքսված <u>տոկոսադրույքը</u>)* համապատասխան՝ վերոնշյալ «ա» ենթակետում նշված Դրույքաչափի սահմանման ամսաթվին:

Վարկատուն անհապաղ Վարկառուին է ուղարկում Դրույքաչափի փոխարկումը հաստատող գրություն՝ էապես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի *(Վարկի շրջանակներում Մասհանումների <u>ձեւը</u>)* IV մասում (*Դրույքաչափի փոխարկման հաստատման <u>ձեւը</u>*) սահմանված ձեւով:

Դրույքաչափի *<u>փոխարկումը</u>* վերջնական է եւ իրականացվում է առանց ծախսեր կրելու:

7.2. <u>Տոկոսի հաշվարկումը եւ վճարումը</u>

Վարկառուն Մասհանման (Մասհանումների) համար հաշվեգրված տոկոսագումարը վճարում է յուրաքանչյուր Վճարման ամսաթվի:

Համապատասխան Վճարման ամսաթվին Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարը հավասար է Վարկառուի կողմից յուրաքանչյուր Մասհանման համար Մայր գումարի չմարված մնացորդի մասով վճարման

ենթակա տոկոսագումարին: Յուրաքանչյուր Մասհանման համար Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է հետեւյալի հիման վրա.

ա) համապատասխան Մասհանման համար Վարկառուի կողմից վճարման ենթակա Մայր գումարի չմարված մնացորդը՝ Վճարման ամսաթվին անմիջապես նախորդող ամսաթվի դրությամբ, կամ Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածի դեպքում՝ Մասհանման համապատասխան ամսաթվի դրությամբ.

բ) այն օրերի ճշգրիտ թիվը, որոնք առաջացել են Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով տարեկան երեք հարյուր վաթսունօրյա (360) հաշվարկը, եւ

գ) Շրջանակային համաձայնագրի 7.1 կետի *(Յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը)* դրույթներին համապատասխան որոշված կիրառելի Տոկոսադրույքը:

7.3. <u>Ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը</u>

ա) Չվճարված բոլոր գումարների մասով (բացի տոկոսներից) ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը

Եթե Վարկառուն չի վճարում Վարկատուին վճարման ենթակա՝ Ֆինանսական փաստաթղթով նախատեսված որեւէ գումար (մայր գումարի մարում, Կանխավճարի փոխհատուցում, ցանկացած տեսակի վճար կամ չնախատեսված ծախս՝ բացառությամբ չվճարված ժամկետանց տոկոսների) դրա վճարման ամսաթվին, ապա ժամկետանց գումարի մասով օրենսդրությամբ թույլատրված չափով հաշվեգրվում է տոկոս՝ մարման ամսաթվից մինչեւ փաստացի վճարման ամսաթիվը ներառող ժամանակահատվածի համար (ինչպես արբիտրաժային որոշում կայացվելուց առաջ, այնպես էլ հետո, եթե առկա է այդպիսի որոշում)՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի

(պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոս (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս)։ Վարկատուի կողմից նախապես որեւէ պաշտոնական ծանուցման անհրաժեշտություն չի առաջանում։

բ) Չվճարված գումարների մասով ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը

Այն տոկոսագումարների նկատմամբ, որոնք չեն վճարվել սահմանված ժամկետում, օրենքով թույլատրված չափով հաշվարկվում են տոկոսներ՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի (պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոս (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս) այնքանով, որքանով այդ Տոկոսը ենթակա է եղել վճարման մեկ (1) տարվա ընթացքում։ Վարկատուի կողմից նախապես որեւէ պաշտոնական ծանուցման անհրաժեշտություն չի առաջանում։

Վարկառուն վճարում է Շրջանակային համաձայնագրի 7.3 կետով *(ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը)* սահմանված ցանկացած չմարված տոկոս Վարկատուի կողմից ներկայացված պահանջից անմիջապես հետո կամ չմարված գումարի վճարման ժամկետին հաջորդող յուրաքանչյուր Վճարման ամսաթվի։

գ) Ժամկետանց վճարման կամ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսների որեւէ վճարում Վարկատուին չի ենթադրում Վարկառուին տրամադրվող՝ վճարման որեւէ ժամկետի երկարաձգում եւ Վարկատուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներից հրաժարում չէ։

7.4. <u>Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկությունները փոխանցելը</u>

Յուրաքանչյուր Տոկոսադրույք սահմանելիս Վարկատուն այդ մասին անհապաղ ծանուցում է Վարկառուին՝ Ֆինանսական փաստաթղթերին համապատասխան:

## 8. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Շուկայի ապակայունացումը

ա) Եթե Շուկայի ապակայունացումն ազդում է եվրագոտու միջբանկային շուկայի վրա, եւ հնարավոր չէ՝

i) Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում Մասհանման նկատմամբ կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքը որոշել, կամ

ii) Լողացող տոկոսադրույքի դեպքում Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում կիրառելի ԵՎՐԻԲՈՐ-ը որոշել,

ապա Վարկատուն այդ մասին տեղեկացնում է Վարկառուին:

բ) Վերոնշյալ «ա» պարբերության մեջ նկարագրված իրավիճակի դեպքում համապատասխան Մասհանման կամ Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար, ըստ կոնկրետ դեպքի, կիրառելի Տոկոսադրույքը կլինի հետեւյալի հանրագումարը.

i) Թույլատրելի սահմանաչափ, եւ

ii) տարեկան Տոկոսադրույքի գումար, որը հավասար է Վարկատուի կողմից համապատասխան Մասհանումը (Մասհանումները) ֆինանսավորելու հետ կապված ծախսերին՝ անկախ այն աղբյուրից, որն այն կարող է ողջամտորեն ընտրել: Այդ դրույքաչափի մասին Վարկառուն ծանուցվում է հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում՝ նախքան 1) Ֆիքսված տոկոսադրույքի մասով այդ Մասհանման հետ կապված վճարման ենթակա տոկոսների առաջին Վճարման

ամսաթիվը կամ 2) Լողացող տոկոսադրույքի մասով Տոկոսների հաշվարկման տվյալ ժամանակահատվածում վճարման ենթակա տոկոսների Վճարման ամսաթիվը:

8.2. Հրապարակված դրույքաչափի փոխարինումը

8.2.1. Սահմանումները

**«Առաջադրող համապատասխան մարմին»** նշանակում է կենտրոնական բանկը, կարգավորող մարմինը, վերահսկող մարմինը կամ աշխատանքային խումբը կամ կոմիտեն, որը հովանավորվում կամ ղեկավարվում կամ ստեղծվում է դրանցից որեւէ մեկի պահանջով:

**«Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք»** նշանակում է հետեւյալ իրադարձություններից մեկը կամ մի քանիսը.

ա) էապես փոփոխվել է հրապարակված դրույքաչափի սահմանումը, դրա որոշման մեթոդաբանությունը, բանաձեւը կամ միջոցը.

բ) ուժի մեջ է մտել օրենք կամ կարգավորում, որով արգելվում է Հրապարակված դրույքաչափի օգտագործումը, եւ կասկածներից զերծ մնալու նպատակով այսպիսի իրավիճակի ի հայտ գալը չի համարվում պարտադիր կանխավճարի դեպք.

գ) Հրապարակված դրույքաչափի կառավարիչը կամ վերահսկող մարմինը հրապարակայնորեն հայտարարում է, որ՝

i) այն ընդմիշտ կամ անորոշ ժամկետով դադարեցրել է կամ կդադարեցնի ապահովել Հրապարակված դրույքաչափի տրամադրումը, եւ այդ ժամանակահատվածում որեւէ իրավահաջորդ կառավարիչ հրապարակայնորեն չի առաջադրվել այդ Հրապարակված դրույքաչափի ապահովումը շարունակելու նպատակով.

ii) Հրապարակված դրույքաչափն ընդմիշտ կամ անորոշ ժամկետով դադարել է կամ կդադարի հրապարակվել, կամ

iii) Հրապարակված դրույքաչափն այլեւս չի կարող օգտագործվել (տվյալ պահին կամ ապագայում).

դ) հրապարակային հայտարարություն է տարածվել այդպիսի Հրապարակված դրույքաչափի կառավարչի սնանկության կամ նրա դեմ հարուցված անվճարունակության որեւէ այլ վարույթի մասին, եւ այդ ժամանակահատվածում որեւէ իրավահաջորդ կառավարիչ հրապարակայնորեն չի առաջադրվել Հրապարակված դրույքաչափի ապահովումը շարունակելու համար. կամ

ե) Վարկատուի կարծիքով՝ Հրապարակված դրույքաչափը դադարել է օգտագործվել մի շարք համադրելի ֆինանսավորման գործարքներում:

**«Հրապարակված դրույքաչափ»** նշանակում է ԵՎՐԻԲՈՐ կամ Փոխարինված բազային դրույքաչափով այդ դրույքաչափը փոխարինելուց հետո՝ Փոխարինված բազային դրույքաչափ:

**«Հրապարակված դրույքաչափի փոխարինման ամսաթիվ»** նշանակում է՝

- Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքի՝ վերոնշյալ

սահմանման «ա», «դ» եւ «ե» կետերում նշված իրադարձությունների մասով այն ամսաթիվը, երբ Վարկատուն տեղեկացել է տվյալ դեպքի մասին, եւ

- Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքի՝ վերոնշյալ

սահմանման «բ» եւ «գ » կետերում նշված իրադարձությունների մասով այն ամսաթիվը, որից հետո արգելվելու է Հրապարակված դրույքաչափի օգտագործումը, կամ այն ամսաթիվը, երբ Հրապարակված դրույքաչափի կառավարիչն ընդմիշտ կամ անորոշ ժամկետով դադարեցնում է Հրապարակված դրույքաչափի ապահովումը, կամ այն ամսաթիվը, որից հետո Հրապարակված դրույքաչափն այլեւս չի կարող օգտագործվել:

8.2.2. Կողմերից յուրաքանչյուրն ընդունում եւ համաձայնում է ի շահ մյուս Կողմի, որ Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք տեղի ունենալու

պարագայում եւ Շրջանակային համաձայնագրի տնտեսական հավասարակշռությունը պահպանելու նպատակով Վարկատուն կարող է Հրապարակված դրույքաչափը փոխարինել մեկ այլ դրույքաչափով **(Փոխարինված բազային դրույքաչափ),** որը կարող է ներառել ճշգրտման թույլատրելի սահմանաչափը՝ Կողմերի միջեւ տնտեսական արժեքի փոխանցումից խուսափելու համար (առկայության դեպքում) **(ճշգրտման թույլատրելի սահմանաչափ),** եւ Վարկատուն կորոշի այն ամսաթիվը, որից սկսած՝ Փոխարինված բազային դրույքաչափով եւ առկայության դեպքում՝ ճշգրտման թույլատրելի սահմանաչափով պետք է փոխարինվի Հրապարակված դրույքաչափը, ինչպես նաեւ որոշում կկայացնի Հրապարակված դրույքաչափը Փոխարինված բազային դրույքաչափով փոխարինելու արդյունքում Շրջանակային համաձայնագրի որեւէ այլ փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ:

8.2.3. Փոխարինված բազային դրույքաչափի սահմանումը եւ անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն բարեխղճորեն եւ հաշվի առնելով՝ i) Համապատասխան առաջադրող մարմնի առաջարկությունները, կամ ii) Հրապարակված դրույքաչափի կառավարչի առաջարկությունները, կամ iii) բանկային ոլորտի մասնագիտական ասոցիացիաների կողմից առաջարկվող ոլորտային լուծումը, կամ փոխարինման ամսաթվի դրությամբ համադրելի ֆինանսավորման գործարքների ընթացքում շուկայում արձանագրված պրակտիկան:

8.2.4. Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքում Վարկատուն Վարկառուին անմիջապես ծանուցում է Հրապարակված դրույքաչափը Փոխարինված բազային դրույքաչափով փոխարինելու պայմանների մասին, որոնք կիրառելի կլինեն Հրապարակված դրույքաչափի փոխարինման ամսաթվից առնվազն երկու Բանկային օր հետո սկսվող՝ Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի նկատմամբ:

8.2.5. Կետ 8.2-ի *(Հրապարակված դրույքաչափի փոխարինումը)* դրույթները գերակայում են 8.1 կետի *(Շուկայի ապակայունացումը)* դրույթների նկատմամբ:

## 9. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ՎՃԱՐՆԵՐԸ

### 9.1. Յուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի կոմիսիոն վճարները

Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո վեց (6) ամիսը լրանալու ամսաթվից սկսած՝ Վարկառուն Վարկատուին վճարում է տարեկան վճարի զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) կոմիսիոն վճար:

Կոմիսիոն վճարը հաշվարկվում է վերոնշյալ դրույքաչափով եւ համամասնորեն գնահատվում է լրացած օրերի փաստացի քանակի համար՝ i) Հասանելի վարկի գումարի չափով եւ ii) ակնկալվող Մասհանման հայտերում նշված գումարի չափով:

Առաջին կոմիսիոն վճարը հաշվարկվում է՝ i) Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից վեց (6) ամսվա ժամկետի ավարտից հետո առաջին օրվանից (չհաշված) սկսած՝ մինչեւ ii) Վճարման ամսաթվին անմիջապես հաջորդող օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար: Հետագա կոմիսիոն վճարները հաշվարկվում են այն ժամանակահատվածների համար, որոնք սկսվում են Վճարման ամսաթվին անմիջապես հաջորդող օրվանից (ներառյալ) եւ ավարտվում հաջորդ Վճարման ամսաթվին (ներառյալ):

Հաշվեգրված կոմիսիոն վճարը ենթակա է վճարման՝ i) յուրաքանչյուր Վճարման ամսաթվի՝ այնքան ժամանակ, քանի դեռ Հասանելի վարկը զրոյից մեծ է. ii) Մասհանման ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող Վճարման ամսաթվին. iii) Հասանելի վարկն ամբողջությամբ չեղարկելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին հաջորդող Վճարման ամսաթվին. եւ iv) Հասանելի բոլոր վարկերն ամբողջությամբ չեղարկվելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին:

### 9.2. Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի գնահատման վճարը

Ոչ ուշ, քան Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում եւ մինչեւ Վարկի առաջին Մասհանումը Վարկառուն Վարկատուին վճարում է զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%)

գնահատման վճար, որը հաշվարկվում է յուրաքանչյուր Վարկի առավելագույն գումարի նկատմամբ:

## 10. ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ

Արտոնյալ ժամկետը լրանալուց հետո Վարկառուն Վարկատուին վճարում է յուրաքանչյուր Վարկի մայր գումարը՝ մի քանի վճարումներով, որոնք սահմանված են Վարկի հաստատման մեջ եւ ենթակա են վճարման յուրաքանչյուր Վճարման ամսաթվի, ընդ որում, վերջին վճարման ամսաթիվը ոչ ուշ, քան 2048 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Մասհանման ժամանակահատվածի ավարտից հետո Վարկատուն Վարկառուին տրամադրում է յուրաքանչյուր Վարկի առնչվող վարկի մարման ժամանակացույց՝ կիրառելիության դեպքում հաշվի առնելով Շրջանակային համաձայնագրի 11.3 կետի *(Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը)* եւ Շրջանակային համաձայնագրի 11.4 կետի *(Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը)* համաձայն յուրաքանչյուր Վարկի ցանկացած հնարավոր չեղարկում:

## 11. ՎԱՐԿԵՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

11.1. Վարկի շրջանակներում Կամավոր կանխավճարը

Մինչեւ Արտոնյալ ժամկետի ավարտը Վարկի՝ կանխավճարի ձեւով ամբողջական կամ դրա որեւէ մասի վճարում չի թույլատրվում:

Արտոնյալ ժամկետի ավարտին հաջորդող օրվանից Վարկառուն կարող է կանխավճարի ձեւով կատարել Վարկի ամբողջական կամ դրա որեւէ մասի վճարում՝ հետեւյալ պայմաններով.

ա) Վարկառուն գրավոր եւ անհետադարձելի ծանուցմամբ Վարկատուին ծանուցում է կանխավճարի ձեւով վճարում կատարելու իր մտադրության մասին՝ կանխավճարի նախատեսվող ամսաթվից ոչ պակաս, քան երեսուն (30) Բանկային օր առաջ.

բ) կանխավճարի ձեւով վճարման ենթակա գումարը հավասար է մայր գումարի մեկ կամ մի քանի մասերին.

գ) կանխավճարի նախատեսվող ամսաթիվը Վճարման ամսաթիվն է.

դ) բոլոր կանխավճարները կատարվում են հաշվեգրված տոկոսների, ցանկացած վճարի, փոխհատուցման եւ հարակից ծախսի հետ միասին, որն առնչվում է Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված՝ կանխավճարի ձեւով վճարված գումարին.

ե) չկա որեւէ չմարված ժամկետանց գումար. եւ

զ) մասնակի կանխավճարի դեպքում Վարկառուն Վարկատուին ներկայացնում է նրան բավարարող ապացույցներ առ այն, որ ունի բավարար չափով հասանելի ֆինանսավորում, որը տրամադրվում է Ծրագրի

համապատասխան բաղադրիչին՝ ֆինանսավորման նպատակով, ինչպես սահմանված է Ֆինանսավորման պլանում:

Վճարման այն ամսաթվին, երբ կատարվում է կանխավճարը, Վարկառուն վճարում է Կանխավճարի փոխհատուցման ամբողջ գումարը, որը ենթակա է վճարման Շրջանակային համաձայնագրի 12.3 կետի *(Վարկի հետ կապված Կանխավճարի մասով փոխհատուցումը)* համաձայն:

11.2. <u>Վարկի շրջանակներում Պարտադիր կանխավճարը</u>

Վարկառուն անհապաղ Կանխավճարի ձեւով վճարում է Վարկն ամբողջությամբ կամ դրա մի մասը Վարկատուից ծանուցում ստանալուց հետո, որով Վարկառուն տեղեկացվում է հետեւյալ իրադարձություններից որեւէ մեկի մասին.

ա) <u>Անօրինականություն</u>. համաձայն իր նկատմամբ կիրառելի իրավունքի՝ Վարկատուի համար անօրինական է դառնում Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված իր որեւէ պարտավորության կատարումը կամ Վարկի ֆինանսավորումը կամ դրա շարունակաբար իրականացումը.

բ) <u>Ֆրանսիայի պետության որոշումներ եւ հրահանգներ</u>. Ֆրանսիայի պետությունն իր մտադրությունն է հայտնում կամ որոշում է դադարեցնել, կասեցնել կամ ընդհատել Վարկառուի կամ Վարկառուի երկրի կառավարության հետ դիվանագիտական իր բոլոր կապերը կամ կապերի մի մասը եւ (կամ) համագործակցությունը, կամ Վարկառուն դադարեցնում է կամ հայտարարում է, որ կդադարեցնի Ֆրանսիայի հետ դիվանագիտական իր բոլոր կապերը կամ կապերի մի մասը եւ (կամ) համագործակցությունը.

գ) <u>Լրացուցիչ ծախսեր</u>. Շրջանակային համաձայնագրի 12.5 կետում *(Լրացուցիչ ծախսերը)* նշված ցանկացած լրացուցիչ ծախս էական է, իսկ Վարկառուն հրաժարվում է այդ լրացուցիչ ծախսերը վճարելուց.

դ) <u>Պարտավորությունների չկատարում.</u> Վարկատուն հայտարարում է Պարտավորությունների չկատարման դեպքի մասին՝ Շրջանակային համաձայնագրի 16-րդ կետին (*Վարկի մասով Պարտավորությունների չկատարման դեպքերը*) համապատասխան.

ե) <u>Ֆինանսական միջոցների օգտագործումը չհիմնավորելը</u>. Վարկառուն Վարկատուի համար բավարար կերպով չի հիմնավորում Կանխավճարների օգտագործումը մինչեւ Շրջանակային համաձայնագրի 6.4.9 կետին *(Կանխավճարների օգտագործումը չհիմնավորելը)* համապատասխան ֆինանսական միջոցների օգտագործման ժամկետի ավարտը.

զ) <u>Կանխավճար Համաֆինանսավորողին</u>. Վարկառուն կանխավճարի ձեւով ամբողջությամբ կամ մասամբ Համաֆինանսավորողին է վճարում Ծրագրի բաղադրիչի շրջանակներում վճարման ենթակա գումարը, որի դեպքում Վարկատուն իրավունք ունի պահանջելու, որ Վարկառուն, ըստ կոնկրետ դեպքի, կանխավճարի ձեւով վճարի սույն Ծրագրի բաղադրիչին առնչվող չմարված Վարկը կամ գումարը՝ Համաֆինանսավորողին կանխավճարի ձեւով վճարված գումարին համարժեք չափով.

է) <u>Սույն Շրջանակային համաձայնագրի համատեքստում տրամադրված մեկ այլ Վարկի կանխավճար</u>. Վարկառուն կանխավճարի ձեւով վճարում է

Շրջանակային համաձայնագրի համաձայն Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված մեկ այլ Վարկի շրջանակներում իր վերցրած պարտքն ամբողջությամբ կամ մասամբ, որի դեպքում Վարկատուն իրավունք ունի պահանջելու, որ Վարկառուն կանխավճարի ձեւով վճարի Վարկի չվճարված գումարները՝ կանխավճարի ձեւով վճարված գումարին համարժեք չափով.

ը) <u>Վնասի դեպքում վճարվող կանխավճար.</u>

i) ստորեւ նշված «ii» պարբերության համաձայն, եթե Վարկառուն ապահովագրական պոլիսների համաձայն ստանում է հարյուր հազար եվրոն (100,000 եվրո) գերազանցող գումարի չափով ապահովագրական հատուցման միջոցներ Ծրագրի բաղադրիչի առնչությամբ կրած ցանկացած վնասի համար, ապա Վարկառուն պետք է այդ ապահովագրական հատուցման միջոցներն օգտագործի կանխավճար կատարելու համար՝ Վարկի գումարին համարժեք գումարի չափով.

ii) Վարկառուն պարտավոր չէ կանխավճարի ձեւով վճարել Վարկը վերոնշյալ «i» պարբերության համաձայն, եթե Վարկառուն հաստատում է Վարկառուի կողմից Վարկատուին ներկայացված վերականգնման պլանը, եւ

iii) կանխավճարի ամսաթիվը Վարկառուի կողմից վերը նշված «i» պարբերության մեջ նշված ապահովագրական հատուցման միջոցների ստացմանն անմիջապես հաջորդող Վճարման ամսաթիվն է:

Վերոնշյալ «ա», «բ» եւ «գ» պարբերություններում նշված իրավիճակներից յուրաքանչյուրի դեպքում Վարկառուին գրավոր ծանուցելուց հետո Վարկատուն որպես պարտատեր կարող է օգտվել իր իրավունքներից՝ Շրջանակային համաձայնագրի 16.2 կետով *(Վարկի անհապաղ մարումը)* սահմանված կարգով:

11.3. <u>Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը</u>

Մինչեւ Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը Վարկառուն կարող է չեղարկել Վարկի շրջանակներում Վարկային սահմանաչափի մնացորդն ամբողջությամբ կամ դրա որեւէ մաս՝ այդ մասին երեք (3) Բանկային օր առաջ ծանուցելով Վարկատուին:

Չեղարկման մասին այդպիսի ծանուցում ստանալուց հետո Վարկատուն չեղարկում է այն գումարը, որի վերաբերյալ ծանուցվել է Վարկառուի կողմից՝ պայմանով, որ Ծրագրի բաղադրիչի՝ Ֆինանսավորման պլանում նշված Թույլատրելի ծախսերը կատարվեն Վարկատուի համար ընդունելի ձեւով՝ բացառությամբ այն դեպքի, երբ Վարկառուն հրաժարվում է Ծրագրի համապատասխան բաղադրիչից:

11.4. <u>Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը</u>

Վարկի շրջանակներում Հասանելի վարկն անհապաղ չեղարկվում է Վարկառուին ծանուցումը ներկայացնելուց հետո, որն անմիջապես ուժի մեջ է մտնում, եթե՝

ա) Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետին Հասանելի վարկը հավասար չէ զրոյի, կամ

բ) առաջին Մասհանումը չի կատարվել Առաջին մասհանման վերջնաժամկետին,

գ) տեղի է ունեցել եւ շարունակվում է Պարտավորությունների չկատարման դեպք, կամ

դ) տեղի է ունեցել Շրջանակային համաձայնագրի 11.2 կետում *(Պարտադիր կանխավճարը)* նշված իրադարձությունը:

11.5. <u>Սահմանափակումները</u>

ա) Շրջանակային համաձայնագրի 11-րդ կետի *(Վարկերի կանխավճարը եւ չեղարկումը)* համաձայն Կողմի կողմից տրված կանխավճարի կամ չեղարկման մասին ցանկացած ծանուցում անհետկանչելի է, եւ եթե Ֆինանսական փաստաթղթերով այլ բան նախատեսված չէ, ապա ցանկացած այդպիսի ծանուցման մեջ նշվում է համապատասխան կանխավճարի կամ չեղարկման ամսաթիվը կամ ամսաթվերը, ինչպես նաեւ այդ կանխավճարի կամ չեղարկման գումարը:

բ) Վարկառուն կանխավճարի ձեւով չի վճարում կամ չեղարկում Վարկն ամբողջությամբ կամ դրա որեւէ մաս՝ բացառությամբ Ֆինանսական փաստաթղթերով հստակորեն նախատեսված ժամկետների եւ կարգի:

գ) Ֆինանսական փաստաթղթով նախատեսված ցանկացած կանխավճար կատարվում է i) կանխավճարի ձեւով վճարված գումարի նկատմամբ հաշվեգրված

տոկոսների, ii) չմարված վճարների եւ iii) Շրջանակային համաձայնագրի 12.3 կետում *(Կանխավճարի մասով փոխհատուցումը)* նշված Կանխավճարի փոխհատուցման գումարի հետ միասին:

դ) Կանխավճարի գումարը կուղղվի մնացող մասերին՝ մարման ժամկետի հակադարձ կարգով:

ե) Վարկառուն չի կարող վերափոխառել այն Վարկն ամբողջությամբ կամ դրա որեւէ մաս, որը մարվել է կանխավճարի ձեւով կամ չեղարկվել է:

## 12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. <u>Ծախսերը եւ ծախքերը</u>

12.1.1. Վարկառուն ուղղակիորեն վճարում է կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցում է Վարկատուի կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի եւ ծախքերի (ներառյալ իրավաբանական վճարները) գումարը, որոնք Վարկատուն կրել է՝ կապված այն Ֆինանսական փաստաթղթերի շուրջ բանակցելու, դրանք պատրաստելու եւ ստորագրելու հետ, որի կողմ է Վարկատուն, կամ կապված Ֆինանսական փաստաթղթում նշված ցանկացած այլ փաստաթղթի (այդ թվում՝ ցանկացած իրավաբանական կարծիքի) հետ:

12.1.2. Եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարելու Ֆինանսական փաստաթղթերից որեւէ մեկում, որի կողմ է Վարկատուն, ապա

Վարկառուն Վարկատուին հատուցում է բոլոր այն ծախսերը (ներառյալ իրավաբանական վճարները), որոնք ողջամտորեն կրել են այդպիսի անհրաժեշտությանն արձագանքելու, այն գնահատելու, դրա շուրջ բանակցելու կամ պահանջներին համապատասխանելու համար:

12.1.3. Վարկառուն Վարկատուին հատուցում է բոլոր այն ծախսերն ու ծախքերը (ներառյալ իրավաբանական վճարները), որոնք այն կրել է իր իրավունքներից ցանկացածի իրականացման կամ պահպանման համար, որը նախատեսված է այն Ֆինանսական փաստաթղթով, որի կողմ է Վարկատուն:

12.1.4. Վարկառուն ուղղակիորեն վճարում է կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցում է վերջինիս կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի եւ ծախքերի (ներառյալ իրավաբանական վճարները) գումարը՝ կապված Փարիզից Վարկառուին կամ նրա հաշվին Վարկատուի հետ համաձայնեցված որեւէ վայր ֆինանսական միջոցների փոխանցման, ինչպես նաեւ Վարկի շրջանակներում վճարման ենթակա բոլոր գումարների մարման հետ կապված փոխանցման համար գանձվող միջնորդավճարների եւ ծախքի հետ:

12.2. <u>Վարկի շրջանակներում չեղարկման համար փոխհատուցումը</u>

Եթե Վարկն ամբողջությամբ կամ մասամբ չեղարկվում է Շրջանակային համաձայնագրի 11.3 կետի *(Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը)* եւ (կամ) 11.4 կետի (*Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը)* «ա», «բ» եւ «գ» պարբերությունների պայմաններին համապատասխան, ապա Վարկառուն վճարում է չեղարկման համար փոխհատուցման գումարը, որը հաշվարկվում է Վարկի չեղարկված գումարի երկու ամբողջ հինգ տոկոսի (2.5%) չափով:

Չեղարկման համար յուրաքանչյուր փոխհատուցում վճարվում է Վարկի ամբողջական կամ դրա մի մասի չեղարկմանն անմիջապես հաջորդող Վճարման ամսաթվին:

12.3. Վարկի շրջանակներում կանխավճարի մասով փոխհատուցումը

Հաշվի առնելով Շրջանակային համաձայնագրի 11.1 կետին (*Կամավոր կանխավճարը)* կամ 11.2 կետին *(Պարտադիր կանխավճարը)* համապատասխան Վարկն ամբողջությամբ կամ դրա որեւէ մաս կանխավճարի ձեւով վճարելու հետեւանքով Վարկատուի կրած բոլոր կորուստները՝ Վարկառուն Վարկատուին վճարում է փոխհատուցում, որը հավասար է հետեւյալի հանրագումարին.

ա) Կանխավճարի փոխհատուցում, եւ

բ) ցանկացած ծախս, որն առաջանում է Վարկատուի կողմից կանխավճարի ձեւով վճարված գումարի հետ կապված տոկոսադրույքի հեջավորման սվոփի գործարքների ընդհատման հետեւանքով:

12.4. Հարկերը եւ տուրքերը

12.4.1. Գրանցման հետ կապված ծախսերը

Վարկառուն ուղղակիորեն վճարում է կամ կիրառելիության դեպքում Վարկատուին հատուցում է վերջինիս կողմից կատարված՝ կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի եւ ծախքերի (ներառյալ իրավաբանական վճարները) գումարները, ցանկացած Ֆինանսական փաստաթղթի եւ այն Ֆինանսական փաստաթղթի ցանկացած հնարավոր փոփոխության հետ կապված բոլոր պետական տուրքերը, գրանցման եւ համանման այլ հարկերի ծախսերը, որի կողմ է Վարկատուն:

12.4.2. Պահվող հարկը

Վարկառուն պարտավորվում է, որ այն Ֆինանսական փաստաթղթերի համաձայն Վարկատուին արվող բոլոր վճարումները, որոնց կողմ է Վարկատուն, զերծ կլինեն Պահվող հարկերից:

Եթե օրենքով պահանջվում է Պահվող հարկ, ապա Վարկառուն պարտավորվում է ցանկացած այդպիսի վճարման գումար վերահաշվարկել այնպիսի գումարի նկատմամբ, որի արդյունքում Վարկատուն կստանա

վճարմանը համարժեք այն գումարը, որը կվճարվեր, եթե չպահանջվեր Պահվող որեւէ հարկ:

Վարկառուն իր հաշվին Վարկատուին հատուցում է բոլոր այն ծախքերը եւ (կամ) Հարկերը, որոնք վճարվել են Վարկատուի կողմից (եթե կիրառելի է)՝ բացառությամբ Ֆրանսիայում վճարման ենթակա որեւէ Հարկի:

12.5. Լրացուցիչ ծախսերը

Վարկառուն Վարկատուի կողմից պահանջ ներկայացվելուց հետո՝ հինգ (5) Բանկային օրվա ընթացքում, Վարկատուին վճարում է Վարկատուի կողմից կատարված բոլոր այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են i) որեւէ նոր օրենք կամ կարգավորում ուժի մեջ մտնելու, որեւէ փոփոխության կամ որեւէ գործող օրենքի կամ կարգավորման մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որեւէ փոփոխության կամ ii) Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո ուժի մեջ մտած որեւէ օրենքի կամ կարգավորման համապատասխանություն ապահովելու անհրաժեշտության արդյունքում:

Սույն կետում **«Լրացուցիչ ծախսեր»** նշանակում է՝

ա) Վարկի եկամտաբերության կամ Վարկատուի ընդհանուր կապիտալի նկատմամբ եկամտաբերության ցանկացած նվազում,

բ) ցանկացած լրացուցիչ կամ ավելացված ծախս, կամ

գ) ցանկացած Ֆինանսական փաստաթղթով սահմանված եւ վճարման ենթակա գումարի նվազում,

որը Վարկատուն կատարել կամ կրել է այնքանով, որ դա վերագրելի է Վարկատուի կողմից Ֆինանսական փաստաթղթերի կնքմանը կամ Ֆինանսական փաստաթղթերից որեւէ մեկով սահմանված իր պարտավորությունների ֆինանսավորմանը կամ կատարմանը:

12.6. Արժույթի մասով փոխհատուցումը

Եթե Վարկառուի կողմից այն Ֆինանսական փաստաթղթերով, որոնց կողմ է Վարկատուն, վճարման ենթակա է որեւէ գումար, կամ այդպիսի գումարի

առնչությամբ կայացված կամ ընդունված որեւէ հրաման, վճիռ կամ որոշում է առկա կամ կայացվել, որի արդյունքում այդ գումարը պետք է վճարման ենթակա արժույթից փոխարկվի այլ արժույթի՝

ա) Վարկառուի դեմ պահանջ կամ ապացույց ներկայացնելու, կամ

բ) որեւէ դատական կամ արբիտրաժային վարույթի վերաբերյալ հրաման, վճիռ կամ որոշում ստանալու կամ կատարելու նպատակով,

ապա Վարկառուն փոխհատուցում է Վարկատուի կողմից պահանջ ներկայացվելուց հետո երեք (3) Բանկային օրվա ընթացքում եւ օրենքով թույլատրված կարգով, Վարկատուին վճարում է փոխարկման արդյունքում կամ դրա հետեւանքով առաջացած ծախսի, կորստի կամ պարտավորության գումարը, այդ թվում՝ հետեւյալի միջեւ որեւէ անհամապատասխանության արդյունքում առաջացած գումարը. Ա) այն փոխարժեքի, որն օգտագործվել է համապատասխան գումարն առաջին արժույթից երկրորդ արժույթի փոխարկելու համար, եւ Բ) այն փոխարժեքի կամ փոխարժեքների միջեւ, որոնք Վարկատուին հասանելի են եղել այդ գումարը ստանալու պահին: Վարկատուին փոխհատուցելու այս պարտավորությունը պայմանավորված չէ Վարկառուի որեւէ այլ պարտավորությամբ, որը նախատեսված է այնպիսի Ֆինանսական փաստաթղթերով, որոնց կողմ է Վարկատուն:

Վարկառուն հրաժարվում է այնպիսի իրավունքից, որը կարող է ունենալ որեւէ պետությունում, ըստ որի՝ Վարկառուն կարող է այնպիսի Ֆինանսական փաստաթղթերով վճարման ենթակա որեւէ գումար վճարել այն արժույթից կամ արժութային միավորից բացի այլ արժույթով կամ արժութային միավորով, որում բացահայտ նշված է, որ այն ենթակա է վճարման, որի կողմ է Վարկատուն:

12.7. <u>Վճարումների կատարման ամսաթվերը</u>

Սույն 12-րդ կետի (Լրացուցիչ վճարումներ կատարելու պարտավորությունները) համաձայն Վարկառուի կողմից Վարկատուին վճարման ենթակա ցանկացած փոխհատուցում կամ հատուցում ենթակա է վճարման

համապատասխան փոխհատուցման կամ հատուցման անհրաժեշտություն առաջացրած հանգամանքներին անմիջապես հաջորդող Վճարման ամսաթվին:

Չնայած վերոնշյալին՝ Շրջանակային համաձայնագրի 12.3 կետին *(Կանխավճարի մասով փոխհատուցումը)* համապատասխան՝ կանխավճարի առնչությամբ վճարման ենթակա ցանկացած փոխհատուցում ենթակա է վճարման համապատասխան կանխավճարի ամսաթվին:

## 13. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎՈՂ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Բացառությամբ 13.10 *(Ծրագրի փաստաթղթերը),* 13.11 *(Ծրագրի թույլտվությունները)* եւ 13.14 *(Ֆինանսական միջոցների օրինական ծագումը)* կետերի համաձայն արված հավաստիացումների եւ երաշխիքների՝ սույն 13-րդ կետով (*Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* սահմանված բոլոր հավաստիացումները եւ երաշխիքները Վարկառուի կողմից հօգուտ Վարկատուի արվում եւ տրվում են Վարկի հաստատման ստորագրման ամսաթվին:

Սույն 13-րդ կետով (*Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* սահմանված բոլոր հավաստիացումները եւ երաշխիքները նաեւ համարվում են Վարկառուի կողմից արված այն ամսաթվին, երբ բավարարվում են Շրջանակային համաձայնագրի 3-Ա հավելվածի (*Վարկի առաջին Մասհանման նախապայմանները)* III մասում թվարկված բոլոր նախապայմանները, յուրաքանչյուր Մասհանման հայտի ամսաթվին, յուրաքանչյուր Մասհանման ամսաթվին եւ յուրաքանչյուր Վճարման ամսաթվին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Շրջանակային համաձայնագրի 13.9 կետով *(Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացառումը)* սահմանված կրկնվող հայտարարությունները համարվում են Վարկառուի կողմից տրամադրված տեղեկությունների առնչությամբ կատարված՝ սկսած այն ամսաթվից, երբ վերջին անգամ արվել է հավաստիացումը:

13.1. <u>Լիազորությունները</u>

Վարկառուն լիազորված է կնքելու, իրականացնելու եւ հանձնելու Ֆինանսական փաստաթղթերը եւ Ծրագրի փաստաթղթերը եւ կատարելու դրանցով նախատեսված բոլոր պարտավորությունները: Վարկառուն ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ ապահովելու համար Ֆինանսական փաստաթղթերի եւ Ծրագրի փաստաթղթերի կնքումը, իրականացումն ու հանձնումը, ինչպես նաեւ այդ Ֆինանսական փաստաթղթերով եւ Ծրագրի փաստաթղթերով նախատեսված գործարքները:

13.2. <u>Վավերականությունն ու որպես ապացույց ընդունելիությունը</u>

Պահանջվող բոլոր թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են՝

ա) Վարկառուի կողմից օրենքին համապատասխան Ֆինանսական փաստաթղթերն ու Ծրագրի փաստաթղթերը կնքելու եւ դրանցով նախատեսված իր իրավունքներն իրականացնելու եւ պարտավորությունները կատարելու համար, եւ

բ) Վարկառուի երկրի դատարաններում կամ արբիտրաժային վարույթներում Ֆինանսական փաստաթղթերն ու Ծրագրի փաստաթղթերն ընդունելի ապացույց համարելու համար, ինչպես սահմանված է Շրջանակային համաձայնագրի 20-րդ կետով *(Կարգավորող իրավունքը, կապարման ապահովումը եւ դոմիցիլի ընտրությունը),*

ձեռք են բերվել, լիակատար ուժի եւ գործողության մեջ են, եւ չկան այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել նրան, որ այդպիսի որեւէ Թույլտվություն ամբողջությամբ կամ մասամբ ուժը կորցրած ճանաչվի, չերկարաձգվի կամ փոփոխվի:

13.3. <u>Պարտադիր պարտավորությունները</u>

Ֆինանսական փաստաթղթերի եւ Ծրագրի փաստաթղթերի համաձայն Վարկառուի կողմից ստանձնված համարվող պարտավորությունները համապատասխանում են Վարկառուի երկրում իր նկատմամբ կիրառելի բոլոր

օրենքներին ու կարգավորումներին եւ օրինական, վավեր, պարտադիր ու կատարման ենթակա պարտավորություններ են, որոնք ուժի մեջ են մտնում դրանց գրավոր պայմաններին համապատասխան:

13.4. Համաձայնագիրը չներկայացնելը կամ դրոշմատուրքերի բացակայությունը

Համաձայն Վարկառուի գրանցման պետությունում կիրառվող օրենքների՝ Ֆինանսական փաստաթղթերն այդ իրավազորության դատարան կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու (բացառությամբ Շրջանակային համաձայնագրի վավերացում ստանալու նպատակով), դրանց վերաբերյալ գրառում անելու կամ դրանք գրանցելու, ինչպես նաեւ դրոշմատուրք, գրանցման կամ համանման հարկեր ու վճարներ վճարելու անհրաժեշտություն չկա՝ կապված Ֆինանսական փաստաթղթերի կամ գրանցում սահմանված գործարքների հետ:

13.5. Ֆինանսական միջոցների փոխանցումը

Ֆինանսական փաստաթղթերով Վարկառուի կողմից Վարկատուին վճարման ենթակա բոլոր գումարները՝ լինեն դրանք մայր գումարի, թե տոկոսների մասով արվող վճարումներ, ժամկետանց վճարման համար գանձվող տոկոսներ, Կանխավճարի մասով փոխհատուցում, չնախատեսված ծախսեր եւ ծախքեր կամ ցանկացած այլ գումար, կարող են ազատ փոխանցվել Ֆրանսիա կամ ցանկացած այլ երկիր:

Սույն հավաստիացումը շարունակում է ուժի մեջ մնալ եւ գործել մինչեւ Վարկատուին վճարման ենթակա բոլոր գումարների ամբողջական մարումը: Այն դեպքում, երբ Վարկատուի կողմից Վարկի մարման ժամկետները երկարաձգվում են, սույն հավաստիացման հետագա հաստատում անհրաժեշտ չէ:

Վարկառուն ձեռք է բերում եվրոյով գումար, որն անհրաժեշտ է վճարման ժամկետում սույն հավաստիացման հետ համապատասխանությունն ապահովելու համար:

13.6. Այլ պարտավորությունների հետ հակասության բացակայությունը

Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերի եւ Ծրագրի փաստաթղթերի կնքումն ու կատարումը, ինչպես նաեւ դրանցով նախատեսված գործարքների կատարումը չեն հակասում որեւէ կիրառելի ներպետական կամ օտարերկրյա իրավունքի կամ կարգավորման կամ դրա սահմանադրական փաստաթղթերի (կամ համանման փաստաթղթերի) կամ Վարկառուի համար պարտադիր կամ նրա որեւէ ակտիվի վրա ազդեցություն ունեցող որեւէ համաձայնագրի կամ փաստաթղթի:

13.7. Կարգավորող իրավունքը եւ կիրարկումը

ա) Ֆրանսիայի իրավունքի՝ որպես Ֆինանսական փաստաթղթերը կարգավորող իրավունքի ընտրությունը կճանաչվի եւ կկիրարկվի Վարկառուի իրավազորության դատարանների եւ արբիտրաժային տրիբունալների կողմից:

բ) Ֆինանսական փաստաթղթերի առնչությամբ ֆրանսիական դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված ցանկացած վճիռ կճանաչվի եւ կկատարվի Վարկառուի պետությունում:

13.8. Պարտավորությունների չկատարման բացառումը

Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք չի շարունակվում, կամ ողջամտորեն հավանական չէ, որ տեղի կունենա:

13.9. Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացառումը

Վարկառուի կողմից Վարկատուին տրամադրվող բոլոր տեղեկությունները եւ փաստաթղթերը ճիշտ, ճշգրիտ եւ արդիական են դրանք տրամադրելու օրվա դրությամբ կամ անհրաժեշտության դեպքում՝ այն օրվա դրությամբ, երբ հայտարարվում է, որ պետք է տրամադրվեն, եւ դրանք չեն փոփոխվել, ուժը կորցրած ճանաչվել, չեղարկվել կամ երկարաձգվել վերանայված պայմաններով եւ բացթողման, նոր հանգամանքներ ի հայտ գալու կամ որեւէ տեղեկության բացահայտման կամ չբացահայտման արդյունքում որեւէ էական առումով չեն կրում ապակողմնորոշիչ բնույթ:

13.10. Ծրագրի փաստաթղթերը

Ծրագրի փաստաթղթերը ներկայացնում են Ծրագրի բաղադրիչներին վերաբերող ամբողջական համաձայնագիրը եւ վավեր են, պարտադիր եւ կատարման ենթակա երրորդ կողմերի նկատմամբ: Ծրագրի փաստաթղթերը չեն փոփոխվել, դրանց գործողությունը չի դադարեցվել կամ կասեցվել առանց Վարկատուի կողմից նախնական համաձայնության՝ Վարկատուին դրանք տրամադրելու օրվանից ի վեր, եւ ներկայումս Ծրագրի փաստաթղթերի վավերականության մասով որեւէ վեճ առկա չէ:

13.11. Ծրագրի թույլտվությունները

Ծրագրի հետ կապված բոլոր թույլտվությունները ձեռք են բերվել կամ կատարվել են եւ լիարժեք ուժի մեջ են, ինչպես նաեւ չկան հանգամանքներ, որոնք կարող են դառնալ Ծրագրի հետ կապված որեւէ թույլտվություն ամբողջությամբ կամ մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու, չեղարկելու, չերկարաձգելու կամ փոփոխելու պատճառ:

13.12. Գնումները

Վարկառուն սույնով հայտարարում է, որ *i)* ստացել է Գնումների ուղեցույցի պատճենը եւ ii) հասկանում է Գնումների ուղեցույցի պայմանները, մասնավորապես՝ այն պայմանները, որոնք վերաբերում են Վարկառուի կողմից Գնումների ուղեցույցի դրույթների խախտման դեպքում Վարկառուի կողմից ձեռնարկվող ցանկացած գործողության, եւ iii) Գնումների ուղեցույցի պատճենը տրամադրել է [Վերջնական շահառուին] ***կամ*** [Իրականացնող մարմնին], որը հաստատել է, որ հասկանում է Գնումների ուղեցույցի պայմանները եւ մասնավորապես՝ այն պայմանները, որոնք վերաբերում են [Վերջնական շահառուի] ***կամ*** [Իրականացնող մարմնի] կողմից Գնումների ուղեցույցի դրույթների խախտման դեպքում Վարկատուի կողմից ձեռնարկվող ցանկացած գործողության:

Վարկառուի համար Գնումների ուղեցույցը պայմանագրային հիմունքներով

պարտադիր է այնպես, ինչպես կլիներ այն դեպքում, երբ այդ Գնումների ուղեցույցը հղմամբ ներառված լիներ Ֆինանսական փաստաթղթերում: Վարկառուն հաստատում է, որ Ծրագրի իրականացմանը վերաբերող պայմանագրերի գնումը, բաշխումը եւ կատարումը համապատասխանում են Գնումների ուղեցույցին, ներառյալ՝ այն պայմանագրերը, որոնք կնքվել են, եւ (կամ) որոնց համար գնումների գործընթացն սկսվել է Ստորագրման ամսաթվից առաջ, եւ որոնք հետադարձ կերպով ֆինանսավորվում են ՀՖԳ-ի կողմից:

<u>13.13. *Pari Passu* դասակարգումը</u>

Վարկատուի՝ այն Ֆինանսական փաստաթղթերի համաձայն ներկայացրած պահանջները, որոնց կողմ է Վարկատուն, դասակարգվում են առնվազն ըստ *pari passu* սկզբունքի՝ Վարկառուի չապահովված եւ ոչ առաջնահերթ մյուս բոլոր պարտատերերի պահանջների հետ միասին:

<u>13.14. Ֆինանսական միջոցների օրինական ծագումը եւ Արգելված գործելակերպերը</u>

Վարկառուն հավաստիացնում եւ երաշխավորում է, որ՝

ա) Ծրագրի իրականացման համար ներդրված կամ ներդրվելիք՝ Վարկի միջոցներից բացի բոլոր մյուս ֆինանսական միջոցները, եթե առկա են, ամբողջությամբ տրամադրված են պետական բյուջեից,

բ) Ծրագիրը (մասնավորապես՝ Վարկի շրջանակներում ֆինանսավորվող որեւէ պայմանագրի վերաբերյալ բանակցությունները, դրա շնորհումը եւ կատարումը) չի առաջացրել որեւէ Արգելված գործելակերպ,

գ) ինքը չի կատարել որեւէ գործողություն կամ չի մասնակցել որեւէ գործողության, որը հակասում է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կիրառելի օրենքին, եւ

դ) ըստ իր ունեցած տեղեկությունների՝ ինքը չի տրամադրել ուղղակի կամ անուղղակի նյութական աջակցություն կամ այլ ռեսուրսներ որեւէ անձի կամ կազմակերպության, որը կատարում է, փորձում է կատարել, պաշտպանում,

նպաստում կամ մասնակցում է ահաբեկչական գործողություններ կատարելուն կամ կատարել է, փորձել է կատարել, պաշտպանել, նպաստել կամ մասնակցել է ահաբեկչական գործողություններ կատարելուն:

13.15. Էական բացասական ազդեցության բացառումը

Վարկառուն հավաստիացնում եւ երաշխավորում է, որ որեւէ դեպք կամ հանգամանք, որը հավանական է, որ էական բացասական ազդեցություն կունենա, տեղի չի ունեցել, կամ հավանական չէ, որ տեղի կունենա:

Վարկառուի կողմից իր համար պարտադիր ուժ ունեցող կամ իր ակտիվների վրա ազդեցություն ունեցող ցանկացած այլ համաձայնության առնչությամբ չի շարունակվում որեւէ խախտում, որն էական բացասական ազդեցություն ունի, կամ ողջամտորեն հավանական է, որ էական բացասական ազդեցություն կունենա:

## 14. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացառությամբ 14.7 (*Լրացուցիչ ֆինանսավորումը),* 14.10 (*Ծրագրի* բաղադրիչի հաշիվը), *14.11 (*Ստուգումները*), 14.12 (*Ծրագրի բաղադրիչի գնահատումը) *կետերի համաձայն տրված հանձնառությունների, որոնք ուժի մեջ են մտնում Վարկի հասպարման ստորագրման ամսաթվին, սույն 14-րդ կետում* (Շրջանակային համաձայնագրի շրջանակներում ստանձնած հանձնառությունները) *նշված հանձնառություններն ուժի մեջ են մտնում Ուժի մեջ մտնելու ամսաթվին:*

Սույն 14-րդ կետում (*Շրջանակային համաձայնագրի շրջանակներում ստանձնած հանձնառությունները)* նշված հանձնառությունները շարունակում են լիակատար ուժի մեջ մնալ եւ գործել այնքան ժամանակ, քանի դեռ Ֆինանսական փաստաթղթերի շրջանակներում վճարման ենթակա բոլոր գումարները չեն վճարվել:

14.1. Համապատասխանությունն օրենքներին եւ կարգավորումներին

Վարկառուն համապատասխանում է եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինը համապատասխանի՝

ա) բոլոր հարցերում բոլոր օրենքներին ու կարգավորումներին, որոնք տարածվում են իր եւ (կամ) Ծրագրի վրա, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության մասին եւ աշխատանքային կիրառելի բոլոր օրենքներին, ինչպես նաեւ Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու պայքարին, եւ

բ) Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր բոլոր պարտավորություններին:

14.2. Թույլտվությունները

Վարկառուն անհապաղ ձեռք է բերում կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն, ապահովում է դրան համապատասխանությունը եւ ձեռնարկում բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այն լիակատար ուժի եւ գործողության մեջ պահելու համար, եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինն անհապաղ ձեռք բերի կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն, ապահովի դրան համապատասխանությունը եւ ձեռնարկի բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այն լիակատար ուժի եւ գործողության մեջ պահելու համար, որպեսզի կարողանա կատարել Ֆինանսական փաստաթղթերով եւ Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները եւ ապահովել դրանց օրինականությունը, վավերականությունը, կատարումն ու ընդունելիությունը որպես Ֆինանսական փաստաթղթերի կամ Ծրագրի փաստաթղթերի ապացույց:

14.3. Ծրագրի փաստաթղթերը

Վարկառուն անձամբ տրամադրում է կամ ապահովում է, որ Իրականացնող մարմինը տրամադրի Համաֆինանսավորողին, որը գործում է Վարկատուի

անունից՝ առանց առարկության կամ տեղեկությունների, Ծրագրի որեւէ փաստաթղթի որեւէ փոփոխության պատճենը, եւ չի կատարում (եւ չի համաձայնում կատարել) որեւէ էական փոփոխություն Ծրագրի որեւէ փաստաթղթում՝ առանց Համաֆինանսավորողի եւ Վարկատուի նախնական համաձայնությունը ստանալու:

14.4. <u>Ծրագրի բաղադրիչի իրականացումը եւ պահպանումը</u>

Վարկառուն կատարում է եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինը կատարի հետեւյալը.

ա) իրականացնի Ծրագիրը՝ լայնորեն ընդունված անվտանգության սկզբունքներին եւ գործող տեխնիկական չափանիշներին համապատասխան, եւ

բ) պահպանի իր ակտիվները եւ Ծրագրի ակտիվները՝ կիրառելի բոլոր օրենքներին եւ կարգավորումներին համապատասխան, լավ աշխատանքային պայմաններում, եւ օգտագործի այդ ակտիվներն իրենց նպատակին եւ կիրառելի բոլոր օրենքներին ու կարգավորումներին համապատասխան:

14.5. <u>Գնումները</u>

Ծրագրի կամ դրա որեւէ մասի իրականացման նպատակով կնքված եւ Վարկային գծի հաշվին ֆինանսավորվող պայմանագրերի գնման, շնորհման եւ կատարման հետ կապված՝ Վարկառուն պահպանում եւ իրականացնում է Գնումների կիրառելի ընթացակարգերի դրույթները: Վարկառուն երաշխավորում է, որ Իրականացնող մարմինը կպահպանի եւ կիրականացնի Գնումների կիրառելի ընթացակարգերը:

Վարկառուն ձեռնարկում է բոլոր գործողություններն ու քայլերը, որոնք անհրաժեշտ են Գնումների կիրառելի ընթացակարգերի արդյունավետ իրականացման համար:

Եթե Շահառուն եւ (կամ) Իրականացնող մարմինը չեն պահպանում Գնումների կիրառելի ընթացակարգերը, ապա մարմինը կարող է այդ գնման

շրջանակներում կատարված ծախսերը համարել ոչ թույլատրելի սույն Համաձայնագրով սահմանված ֆինանսավորման համար: Շահառուն մարմնին հատուցում է այդպիսի ոչ թույլատրելի ծախսերը վճարելու համար օգտագործված Դրամաշնորհի միջոցները:

Համաֆինանսավորողը Վարկատուի անունից հրապարակում է առարկության բացակայության վերաբերյալ գրություններ՝ համաձայն Գնումների կիրառելի ընթացակարգերի:

Միջազգային մրցակցության ենթակա պայմանագրերի դեպքում Վարկառուն http://afd.dgmarket.com կայքում ըստ համապատասխանության հրապարակում է հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը, նախաորակավորման հրավերը կամ հայտերի ներկայացման հրավերը:

Վարկառուի կողմից որոշակի գնման համար պատրաստված մրցութային փաստաթղթերը եւ առաջարկներ ներկայացնելու հայտերը գնումների ծանուցումներում (գնումների ընդհանուր ծանուցում, գնումների հատուկ ծանուցումներ եւ հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերներ) եւ Վարկատուի կողմից համաֆինանսավորվող պայմանագրերին վերաբերող բոլոր մյուս փաստաթղթերում կներառեն հղումներ Վարկատուին:

Իր հատուկ իրավական եւ կարգավորող պարտավորությունների պատճառով Վարկատուն չի ֆինանսավորի պայմանագրի իր համապատասխան մասն այն Մատակարարի համար, որն ընդգրկված է Ֆինանսական պատժամիջոցների որեւէ ցանկում:

Ցանկացած դիմումատուից, մրցույթի մասնակցից կամ խորհրդատուից պահանջվում է պատշաճ կերպով ստորագրված՝ ՁՖԳ-ի Բարեվարքության մասին հայտարարությունը, ինչպես նշված է 10-րդ հավելվածում, եւ այն համարվում է պայմանագրի մաս: Ոչ մրցակցային գնումների գործընթացների դեպքում ՁՖԳ-ի ստորագրած Բարեվարքության մասին հայտարարությունը կցվում է պայմանագրին:

Նախնական վերանայման ենթակա պայմանագրերի դեպքում Վարկառուից պահանջվում է Վարկատուին տրամադրել դիմումների (նախաորակավորման հրավերներից կամ հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերից հետո), մրցութային առաջարկների, առաջարկների կամ գնանշումների գնահատման վերաբերյալ զեկույցի պատճենը այն Համաֆինանսավորողին ներկայացնելու հետ միաժամանակ: Եթե դիմումատուն, մրցույթի մասնակիցը կամ խորհրդատուն չեն համապատասխանում Վարկատուի՝ ֆինանսավորման համար համապատասխանության պահանջներին, ապա Վարկատուն անհապաղ տեղեկացնում է Համաֆինանսավորողին եւ Վարկառուին: Համաֆինանսավորողը եւ Վարկատուն այնուհետեւ խորհրդակցում են Վարկառուի հետ՝ գործողությունների համապատասխան ընթացքը որոշելու համար:

Հետագա վերանայման ենթակա պայմանագրերի դեպքում Վարկառուից պահանջվում է աուդիտ անցկացնելու տեխնիկական առաջադրանքը ներկայացնել Վարկատուին՝ վերջինիս համաձայնությունը ստանալու համար, համաձայն սույն Համաձայնագրի «*Վերահսկողությունը. աուդիտը*» կետի: Այս տեխնիկական առաջադրանքը ներառում է Վարկառուի վերահսկողության եւ գործառնական այն ընթացակարգերի վերանայում, որոնք իրականացվում են Գնումների կիրառելի ընթացակարգերին եւ Վարկատուի ֆինանսավորման համար համապատասխանության պահանջներին համապատասխանելու համար:

14.6. <u>Բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվությունը</u>

14.6.1. Բնապահպանական եւ սոցիալական միջոցառումների իրականացումը

Կայուն զարգացումը խթանելու նպատակով Կողմերը համաձայնում են, որ անհրաժեշտ է խթանել համապատասխանությունը միջազգայնորեն ճանաչված բնապահպանական եւ աշխատանքային չափանիշներին, այդ թվում՝ Վարկառուի պետությունում կիրառելի՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության **(ԱՄԿ)** հիմնարար կոնվենցիաներին եւ բնապահպանական միջազգային օրենքներին եւ կանոնակարգերին: Այդ նպատակով Վարկառուն՝

Ծրագրի շրջանակներում իր գործարար գործունեության մասով՝

ա) համապատասխանում է շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային չափանիշներին եւ աշխատանքային օրենսդրությանը, մասնավորապես՝ ԱՄԿ-ի հիմնարար կոնվենցիաներին եւ շրջակա միջավայրի վերաբերյալ միջազգային կոնվենցիաներին այն երկրի գործող օրենքների եւ կարգավորումների համաձայն, որտեղ իրականացվում է Ծրագիրը:

Ծրագրի մասով՝

ա) գնման պայմանագրերում եւ ըստ կոնկրետ դեպքի՝ մրցութային պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերում ներառում է կետ, որով պայմանավորվող կողմերը համաձայնում են պահպանել եւ ապահովել, որ իրենց ենթակապալառուները (եթե այդպիսիք կան) համաձայնեն պահպանել այդ չափանիշներն այն երկրի գործող օրենքների եւ կարգավորումների համաձայն, որտեղ իրականացվում է Ծրագիրը: Վարկատուն իրավունք կունենա պահանջելու, որ Վարկառուն ներկայացնի հաշվետվություն՝ Ծրագրի իրականացման բնապահպանական եւ սոցիալական պայմանների վերաբերյալ.

բ) ներդնում է Ծրագրին հատուկ համապատասխան մեղմացնող միջոցառումներ, ինչպես նկարագրված է շրջակա միջավայրի եւ սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականության համատեքստում, ինչպես օրինակ՝

Շրջանակային համաձայնագրին որպես Հավելված 11 կցված Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլանը.

գ) պահանջում է, որ Ծրագրի իրականացման համար նշանակված կապալառուները կիրառեն վերոնշյալ «բ» պարբերության մեջ նշված մեղմացնող միջոցառումները եւ ապահովեն, որ իրենց ենթակապալառուները (եթե այդպիսիք կան) համապատասխանեն այդ բոլոր միջոցառումներին եւ ձեռնարկեն համապատասխան բոլոր քայլերն այդպիսի մեղմացնող միջոցառումների ձեռնարկումը ձախողելու դեպքում:

14.6.2. Բնապահպանական եւ սոցիալական (ԲՍ) բողոքների կառավարումը

ա) Վարկառուն *i)* հաստատում է, որ ստացել է ԲՍ բողոքների կառավարման մեխանիզմի կանոնակարգի պատճենը եւ ընդունել է դրա

պայմանները, մասնավորապես՝ այն գործողությունների մասով, որոնք կարող է ձեռնարկել Վարկառուն երրորդ կողմի կողմից բողոք ներկայացվելու դեպքում, եւ ii) հաստատում է, որ ԲՍ բողոքների կառավարման մեխանիզմի այդ կանոնակարգը Վարկառուի եւ Վարկատուի միջեւ ունի նույն պայմանագրային պարտադիր ուժը, որն ունի սույն Շրջանակային համաձայնագիրը:

բ) Վարկառուն բացահայտ լիազորում է Վարկատուին բացահայտելու փորձագետներին (ինչպես սահմանված է Բնապահպանական եւ սոցիալական բողոքների կառավարման մեխանիզմի կանոնակարգում) եւ համապատասխանության վերանայման եւ (կամ) հաշտեցման գործընթացներում ներգրավված կողմերին բնապահպանական եւ սոցիալական բողոքին ընթացք տալու համար անհրաժեշտ բնապահպանական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ Ծրագրի փաստաթղթերը, այդ թվում՝ 7-րդ հավելվածում *(Բնապահպանական եւ սոցիալական այն փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը, որոնց հրապարակումը Վարկառուն թույլատրում է ԲՍ-ի բողոքների կառավարման մեխանիզմի կանոնակարգի առնչությամբ)* թվարկված փաստաթղթերը, սակայն չսահմանափակվելով դրանցով:

14.6.3. Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների փոխանակումը

Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների փոխանակումը խթանելու նպատակով եւ կենսաբազմազանության վերաբերյալ գիտելիքների եւ դրանց փոխանակման հետ կապված միջազգային նպատակներին համապատասխան՝ Վարկառուն պարտավորվում է փոխանակել կամ ապահովել, որ իր՝ երրորդ կողմ հանդիսացող կապալառուները փոխանակեն Ծրագրի իրականացման առնչությամբ ստացված կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները (ինչպես չմշակված, այնպես էլ մշակված) Կենսաբազմազանության տեղեկատվական գլոբալ կենտրոնի (ԿՏԳԿ[GBIF]) համաշխարհային տվյալների բազայի հետ՝ դրանց հրապարակումը հնարավոր դարձնելու համար:

Այս նպատակով Վարկառուն պարտավորվում է ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցներն իր՝ երրորդ կողմ հանդիսացող

կապալառուների նկատմամբ, որպեսզի նրանք թույլ տան ԿՏԳԿ-ի համաշխարհային տվյալների շտեմարանում փոխանակվել կենսաբազմազանության վերաբերյալ մշակված տվյալներով, որոնց նկատմամբ նրանք կարող են ունենալ մտավոր սեփականության իրավունքներ՝ անկախ կրիչի տեսակից:

Հաշվետվությունները անհրաժեշտ է պարբերաբար եւ սահմանված ժամանակացույցով տրամադրել շրջակա միջավայրի նախարարությանը՝ վերահսկողության իրականացման նպատակով:

ԿՏԳԿ-ի տվյալների շտեմարանում տվյալների փոխանակումն իրականացվում է 8-րդ հավելվածով *(Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների փոխանակումը)* սահմանված դրույթներին եւ պայմաններին համապատասխան:

Մետատվյալների բաժնում ՋՖԳ-ն նշվում է որպես Ծրագիրը ֆինանսավորող:

14.7. Լրացուցիչ ֆինանսավորումը

Վարկառուն չի փոփոխում կամ ձեւափոխում Ֆինանսավորման որեւէ պլան՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության, եւ ֆինանսավորում է Ֆինանսավորման պլանով չնախատեսված ցանկացած լրացուցիչ ծախս այն պայմաններով, որոնք ապահովում են Վարկի (Վարկերի) մարումը:

14.8. *Pari Passu* դասակարգումը

Վարկառուն պարտավորվում է i) ապահովել, որ Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված Վարկատուի պահանջները մշտապես առնվազն ըստ *pari passu* սկզբունքի դասակարգվեն Վարկառուի մյուս ներկա եւ ապագա չապահովված եւ ոչ առաջնահերթ պարտավորությունների հետ, ii) որեւէ այլ վարկատուի չտրամադրել առաջնահերթություն կամ երաշխիքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նույն առաջնահերթությունը կամ երաշխիքները տրամադրվում են Վարկառուի կողմից հօգուտ Վարկատուի՝ վերջինիս կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում:

14.9. <u>Զիջումը</u>

Եթե Վարկատուն այլ բանի շուրջ գրավոր համաձայնության չի եկել, ապա Վարկառուն՝

ա) փոփոխություններ է կատարում Ապահովագրական պոլիսներում, որ Վարկատուին ներառի որպես որեւէ ապահովագրական փոխհատուցման միակ շահառու՝ մինչեւ Ֆինանսական փաստաթղթերի համաձայն վճարման ենթակա բոլոր գումարների լրիվ մարումը, եւ

բ) Վարկատուին հատկացնում է Մատակարարի երաշխիքների օգուտը:

14.10. <u>Ծրագրի բաղադրիչի հաշիվը</u>

Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինը բացի, վարի եւ ֆինանսավորի յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշիվը՝ համաձայն Համաֆինանսավորողի Վարկային համաձայնագրի եւ սույն Համաձայնագրի պայմանների:

14.11. <u>Ստուգումները</u>

Վարկառուն սույնով լիազորում է Վարկատուին եւ նրա ներկայացուցիչներին իրականացնելու ստուգումներ, որոնց նպատակը կլինի գնահատել Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի իրականացումն ու գործողությունները, ինչպես նաեւ Ծրագրի բաղադրիչի ազդեցությունն ու նպատակների իրագործումը:

Այդպիսի ստուգումներ իրականացնելիս Վարկառուն համագործակցում եւ Վարկատուին եւ նրա ներկայացուցիչներին է տրամադրում ողջամիտ ամբողջ աջակցությունը եւ բոլոր տեղեկությունները, այդ ստուգումների ժամկետները եւ ծեւաչափը սահմանվում են Վարկատուի կողմից՝ Վարկառուի հետ խորհրդակցելուց հետո:

Վարկառուն Վարկատուին փոխհատուցում է տարեկան մեկ ստուգման հետ կապված Վարկատուի կրած բոլոր ծախսերը:

Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինը պահպանի եւ Վարկատուի կողմից իրականացվող ստուգումների համար հասանելի դարձնի Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը՝ Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետից հետո տասը (10) տարվա ընթացքում:

14.12. Ծրագրի բաղադրիչի գնահատումը

Վարկառուն ընդունում է, որ Վարկատուն կարող է իրականացնել կամ ապահովել, որ երրորդ կողմն իր անունից իրականացնի Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի գնահատում:

Այս գնահատման արդյունքում ստացված հետադարձ տեղեկություններն օգտագործվելու են հաշվետվություն կազմելու համար, որը պարունակելու է Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ ֆինանսավորման ամբողջ գումարն ու տեւողությունը, Ծրագրի նպատակները, Ծրագրի ակնկալվող եւ ձեռք բերված քանակական արդյունքները, դրա արդիականության, արդյունավետության, ազդեցության եւ կենսունակության/կայունության գնահատումը, հիմնական եզրակացությունները եւ առաջարկությունները:

Գնահատման հիմնական նպատակը կլինի արդիականության, իրականացման (արդյունավետության) եւ ազդեցությունների (արդյունավետություն, ազդեցություն եւ կայունություն) հետ կապված առանցքային հարցերի վերաբերյալ արժանահավատ եւ անկախ դատողության ձեւակերպումը:

Գնահատողները պետք է հավասարակշռված ձեւով հաշվի առնեն տարբեր օրինական տեսակետներ, որոնք կարող են արտահայտվել, եւ գնահատումն իրականացնեն անաչառ ձեւով:

Վարկառուն հնարավորինս սերտորեն կներգրավվի գնահատման գործընթացին՝ սկսած Տեխնիկական առաջադրանքի մշակումից մինչեւ վերջնական հաշվետվության ներկայացումը:

Վարկառուն համաձայնում է սույն հաշվետվության հրապարակմանը, մասնավորապես՝ Վարկատուի կայքում:

14.13. Ֆինանսական պատժամիջոցների ցանկերը եւ էմբարգոն

Վարկառուն պարտավորվում է՝

ա) որ Ծրագրի որեւէ միջոց կամ տնտեսական ռեսուրս ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի չի դարձվի որեւէ անձի, խմբի կամ մարմնի կամ չի օգտագործվի հօգուտ որեւէ անձի, խմբի կամ մարմնի, որը ներառված է Ֆինանսական պատժամիջոցների որեւէ ցանկում, եւ

բ) չֆինանսավորել, ձեռք չբերել կամ չտրամադրել որեւէ այնպիսի մատակարարում կամ չմիջամտել այնպիսի ոլորտներում, որոնք ենթակա են էմբարգոյի Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից:

14.14. Օրինական ծագումը. Արգելված գործելակերպերի բացակայությունը

Վարկառուն պարտավորվում է եւ ապահովում, որ Իրականացնող մարմինը պարտավորվի՝

ա) Վարկի ֆինանսական միջոցներն օգտագործել ՁՖԳ խմբի՝ Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված քաղաքականությանը համապատասխան, որը հասանելի է դրա կայքում,

բ) ապահովել, որ Ծրագրի համար ներդրված՝ պետական ծագման ֆինանսական միջոցներից բացի այլ ֆինանսական միջոցներ չունենան ապօրինի ծագում,

գ) առավելագույն ջանքեր գործադրել, որ չտրամադրի ուղղակի կամ անուղղակի նյութական աջակցություն կամ այլ ռեսուրսներ որեւէ անձի կամ կազմակերպության, որը կատարում է, փորձում է կատարել, պաշտպանում, նպաստում կամ մասնակցում է ահաբեկչական գործողություններ կատարելուն կամ կատարել է, փորձել է կատարել, պաշտպանել, նպաստել կամ մասնակցել է ահաբեկչական գործողություններ կատարելուն,

դ) ապահովել, որ Ծրագիրը (մասնավորապես՝ Վարկի միջոցով ֆինանսավորվող պայմանագրերի շուրջ բանակցությունների, դրանք կնքելու եւ կատարելու ընթացքում) չհանգեցնի Արգելված որեւէ գործելակերպի,

ե) ցանկացած Արգելված գործելակերպի մասին տեղեկանալուց կամ դրա մասին կասկած ունենալուց անմիջապես հետո անհապաղ տեղեկացնել Վարկատուին,

զ) վերոնշյալ «ե» պարբերության մեջ նշված դեպքում կամ Վարկատուի խնդրանքով, եթե Վարկատուն կասկածում է, որ տեղի է ունեցել որեւէ Արգելված գործելակերպ, ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ Վարկատուի համար ընդունելի ձեւով եւ Վարկատուի կողմից սահմանված ժամկետում իրավիճակը շտկելու համար, եւ

է) Վարկատուին անհապաղ ծանուցել, եթե ունի այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նրան կասկածել Ծրագրի իրականացման համար ներդրված որեւէ ֆինանսական միջոցի Ապօրինի ծագման մասին,

ը) Ծրագիրն իրականացնել Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ուղեցույցներին համապատասխան:

14.15. <u>Քննությունները</u>

Վարկառուն պարտավորվում է եւ ապահովում, որ Իրականացնող մարմինը պարտավորվի Վարկատուին կամ Վարկատուի կողմից լիազորված ցանկացած երրորդ անձի թույլատրել քննություն իրականացնելու Արգելված գործելակերպի վերաբերյալ պնդման առկայության դեպքում: Այդ նպատակով Վարկատուն կամ նրա կողմից լիազորված ցանկացած երրորդ կողմ լիազորված է՝

ա) հարցաքննել ցանկացած անձի, որը կարող է տեղեկություններ ունենալ ենթադրյալ Արգելված գործելակերպի մասին.

բ) իրականացնել աուդիտներ եւ ստուգումներ, ինչպես փաստաթղթային, այնպես էլ տեղում իրականացվող, որոնք Վարկատուն կարող է նպատակահարմար համարել, այդ թվում՝ ապահովել հասանելիությունը հաշվապահական մատյաններին եւ գրառումներին կամ Ծրագրին առնչվող որեւէ

այլ փաստաթղթի, որը պահվում է Վարկառուի կամ Ծրագրի հետ առնչություն ունեցող որեւէ անձի կամ կազմակերպության կողմից.

գ) իրականացնել այցեր Ծրագրի հետ առնչություն ունեցող տեղանքներ, օբյեկտներ եւ տեղեկանալ կատարվող աշխատանքների մասին, եւ

դ) ձեռնարկել բոլոր քայլերն ու գործողությունները, որոնք անհրաժեշտ են այդ քննությունների համար:

Վարկառուն պարտավորվում է ապահովել եւ ապահովում է, որ Իրականացնող մարմինը պարտավորվի ապահովել, որ Վարկի միջոցով ֆինանսավորվող մրցութային փաստաթղթերը, պայմանագրերն ու ենթակապալի պայմանագրերը թույլատրեն սույն կետի իրականացումը:

Վարկառուի կողմից սույն կետի պահանջները չկատարելը Վարկատուի հայեցողությամբ կարող է համարվել Ոչ համագործակցային գործելակերպ:

14.16. <u>Տեսանելիությունը եւ հաղորդակցությունը</u>

Վարկառուն իրականացնում է Ծրագրի իրականացման հետ կապված տեսանելիությանը եւ հաղորդակցությանն ուղղված գործողություններ՝ համաձայն Տեսանելիության եւ հաղորդակցության ուղեցույցի պայմանների, եւ ընդունում է, որ ամբողջությամբ կարդացել եւ հասկացել է վերոնշյալ ուղեցույցը:

Տեսանելիության եւ հաղորդակցության ուղեցույցի համաձայն՝ Ծրագրի վրա տարածվում են հաղորդակցության եւ տեսանելիության 1-ԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ պարտավորությունները:

## 15. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՆԵԼԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացառությամբ 15.2 կետի *(Ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը)* հանձնառությունների, որոնք ուժի մեջ են մտնում Վարկի հաստատման ստորագրման ամսաթվին, սույն 15-րդ (*Շրջանակային համաձայնագրի եւ*

*յուրաքանչյուր վարկի շրջանակներում հասանելի տեղեկությունների առնչությամբ հանձնառությունները)* կետում նշված հանձնառություններն ուժի մեջ են մտնում Ուժի մեջ մտնելու ամսաթվին: Սույն 15-րդ կետում (*Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր վարկի շրջանակներում հասանելի տեղեկությունների առնչությամբ հանձնառությունները)* նշված բոլոր հանձնառությունները շարունակում են ուժի մեջ մնալ եւ գործել այնքան ժամանակ, քանի դեռ Ֆինանսական փաստաթղթերի համաձայն՝ որեւէ գումար ենթակա է վճարման:

15.1. Ֆինանսական տեղեկությունները

Վարկառուն Վարկատուին է տրամադրում այնպիսի տեղեկություններ, որոնք Վարկատուն կարող է ողջամտորեն պահանջել՝ կապված Վարկառուի արտաքին եւ ներքին պարտքերի, ինչպես նաեւ երաշխավորված վարկերի կարգավիճակի հետ:

15.2. Ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը

ա) Մինչեւ Տեխնիկական ավարտի ամսաթիվը Վարկառուն Համաֆինանսավորողի միջոցով («WISE» բաղադրիչի համար) Վարկատուի եւ Համաֆինանսավորողի համար բավարար ձեւով եւ բովանդակությամբ, Ծրագրի գործառնական ձեռնարկում սահմանված ձեւաչափով եւ բովանդակությամբ եւ կիսամյակային հիմունքներով անմիջապես Վարկատուին է տրամադրում Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման մասով տեխնիկական եւ ֆինանսական ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, այդ թվում՝ այն դեպքում, երբ անհրաժեշտ է Բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ), ԲՍԿՊ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

բ) Տեխնիկական ավարտի ամսաթվից հետո երեք (3) ամսվա ընթացքում Վարկառուն Վարկատուին է տրամադրում ընթացքի վերաբերյալ ընդհանուր հաշվետվություն:

գ) Տեխնիկական ավարտի ամսաթվից հետո երեք (3) ամսվա ընթացքում Վարկառուն Վարկատուին է տրամադրում Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի

ազդեցության ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություն՝ Շրջանակային համաձայնագրի 6-րդ հավելվածում *(Ազդեցության ցուցանիշների հաշվետվության ձեւը)* նշված ձեւով:

15.3. Համաֆինանսավորումը

Վարկառուն անհապաղ տեղեկացնում է Վարկատուին Համաֆինանսավորողի կողմից ցանկացած չեղարկման (ամբողջությամբ կամ մասամբ) կամ կանխավճարի մասին:

15.4. Այլ տեղեկություններ

Վարկառուն Վարկատուին եւ Համաֆինանսավորողին տրամադրում է՝

ա) այնպիսի իրադարձության կամ հանգամանքի մանրամասները, որը համարվում է կամ կարող է համարվել Պարտավորությունների չկատարման դեպք կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն, ինչպես նաեւ տեղեկություններ՝ այդ դեպքի բնույթի եւ այն կարգավորելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք բոլոր գործողությունների վերաբերյալ (առկայության դեպքում), դրանց մասին տեղեկանալուց անմիջապես հետո,

բ) Ծրագրի բաղադրիչի իրականացմանն անմիջականորեն առնչվող այնպիսի դեպքի կամ պատահարի մանրամասները, որը կարող է էական ազդեցություն ունենալ սույն Ծրագրի բաղադրիչի իրականացման վայրի, իր աշխատողների կամ կապալառուների աշխատողների աշխատանքային պայմանների վրա, այդպիսի դեպքի կամ պատահարի բնույթը՝ Վարկառուի կողմից այն կարգավորելու համար, ըստ կիրառելիության, ձեռնարկված կամ առաջարկվող գործողությունների մանրամասների հետ միասին, դրանց մասին տեղեկանալուց անմիջապես հետո,

գ) անհապաղ այնպիսի որոշման կամ իրադարձության մասին մանրամասներ, որոնք կարող են ազդել Ծրագրի բաղադրիչի կազմակերպման, ավարտի կամ գործողության վրա,

դ) անհապաղ, սակայն ամեն դեպքում դրանց մասին տեղեկանալուց հետո հինգ (5) Բանկային օրվա ընթացքում Ծրագրի փաստաթղթի համաձայն իր դեմ ներկայացված ցանկացած պարտավորության չկատարման, գործողության դադարեցման, վեճի կամ նյութական պահանջի մասին ծանուցման մանրամասները կամ Ծրագրի բաղադրիչի վրա բացասաբար ազդող ցանկացած գործողության մանրամասները՝ դրանք շտկելու համար Վարկառուի կողմից ձեռնարկված ցանկացած գործողության կամ այնպիսի ցանկացած գործողության մանրամասների հետ միասին, որոնք առաջարկվում են, որ Վարկառուն ձեռնարկի,

ե) ծառայություններն ավարտելու ընթացքում (այդ թվում՝ ուսումնասիրությունների եւ մոնիթորինգի հետ կապված ծառայությունները, սակայն չսահմանափակվելով դրանցով, երբ Ծրագրի բաղադրիչը ներառում է այդպիսի ծառայությունների մատուցում) ցանկացած ծառայություն մատուցողի կողմից կազմված միջանկյալ եւ վերջնական հաշվետվությունները եւ այդպիսի ծառայությունների լիարժեք ավարտից հետո՝ կատարման վերաբերյալ ընդհանուր հաշվետվությունը,

զ) անհապաղ իր ֆինանսական վիճակի, ակտիվների եւ գործառնությունների կամ Ծրագրի որեւէ փաստաթղթի համաձայն իր կողմից տրված կամ ստացված ցանկացած փաստաթղթի կամ այլ հաղորդագրությունների վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը Վարկատուն կարող է ողջամտորեն պահանջել:

## 16. ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

16.1. Պարտավորությունների չկատարման դեպքերը

Սույն 16.1 *(Պարտավորությունների չկատարման դեպքերը)* կետով սահմանված յուրաքանչյուր դեպք կամ հանգամանք համարվում է Վարկի կամ կիրառելիության դեպքում Վարկերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարման դեպք:

ա) Վճարման պարտավորությունը չկատարելը

Վարկառուն վճարման ամսաթվին չի վճարում իր կողմից Ֆինանսական փաստաթղթով վճարման ենթակա որեւէ գումար Ֆինանսական փաստաթղթով պահանջվող կարգով: Այնուամենայնիվ, չհակասելով Շրջանակային համաձայնագրի 7.3 կետին *(Ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը)*՝ «ա» պարբերության համաձայն Պարտավորությունների չկատարման դեպք տեղի չի ունենա, եթե այդպիսի վճարումն ամբողջությամբ կատարվի Վարկառուի կողմից վճարման ամսաթվից հինգ (5) Բանկային օրվա ընթացքում:

բ) Ծրագրի փաստաթղթերը

Ծրագրի ցանկացած փաստաթուղթ կամ դրանով սահմանված ցանկացած իրավունք կամ պարտավորություն, որը դադարում է լիարժեք ուժի եւ գործողության մեջ մնալ, ենթակա է դադարեցման մասին ծանուցման, կամ դրա վավերականությունը, օրինականությունը կամ կատարման ենթակա լինելու հանգամանքը վիճարկվում են:

Սույն «բ» պարբերության համաձայն Պարտավորությունների չկատարման դեպք տեղի չի ունենա, եթե i*)* վիճարկումը կամ դադարեցման մասին ծանուցումը հետ է վերցվում այն օրվանից հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, երբ Վարկատուն տեղեկացրել է Վարկառուին այդպիսի վիճարկման կամ ծանուցման մասին, կամ Վարկառուն տեղեկացել է այդպիսի վիճարկման կամ ծանուցման մասին, եւ ii) Վարկատուի կարծիքով՝ այդպիսի վեճը կամ պահանջն էական բացասական ազդեցություն չի ունեցել այդ երեսուն (30) օրվա ընթացքում:

գ) Հանձնառությունները եւ պարտավորությունները

Վարկառուն չի բավարարում Ֆինանսական փաստաթղթերի որեւէ պայման, այդ թվում, առանց սահմանափակումների, Շրջանակային համաձայնագրի 14-րդ կետով *(Շրջանակային համաձայնագրի շրջանակներում ստանձնած հանձնառությունները)* եւ Շրջանակային համաձայնագրի 15-րդ կետով

*(Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր վարկի շրջանակներում հասանելի տեղեկությունների առնչությամբ հանձնառությունները)* ստանձնած որեւէ հանձնառություն:

Բացառությամբ Շրջանակային համաձայնագրի 14.6 կետի *(Բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվությունը),* 14.13 կետի *(Ֆինանսական պատժամիջոցների ցանկերը եւ էմբարգոն),* ինչպես նաեւ 14.14 կետի (*Օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը)* համաձայն ստանձնած պարտավորությունների, որոնց մասով արտոնյալ ժամկետ չի թույլատրվում, սույն «գ» պարբերության համաձայն Պարտավորությունների չկատարման դեպք տեղի չի ունենա, եթե պարտավորությունները չկատարելը հնարավոր է շտկել եւ շտկվում է հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ա) Փոխատուն Փոխառուին ծանուցում է չկատարման մասին, եւ Բ) Փոխառուն իմացել է խախտման մասին, կամ Փոխատուի կողմից որոշված ժամկետներում Շրջանակային համաձայնագրի 14.14 կետի *(Օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը)* «գ» ենթակետում նշված դեպքում:

դ) Կեղծ հավաստիացումները

Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերում, այդ թվում՝ Շրջանակային համաձայնագրի 13-րդ կետում (Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները) կամ Վարկառուի կողմից կամ անունից Ֆինանսական փաստաթղթերի համաձայն կամ դրա առնչությամբ տրամադրված որեւէ փաստաթղթում արված հավաստիացումները կամ երաշխիքները կեղծ են կամ ապակողմնորոշող կատարման պահին կամ այն պահին, երբ համարվում են կատարված:

ե) Պարտավորությունների խաչաձեւ չկատարումը

*i)* Համաձայն «iii» պարբերության՝ Վարկառուի որեւէ Ֆինանսական պարտք չի վճարվում վճարման ամսաթվին, կամ եթե կիրառելի է, արտոնյալ ժամկետում, որը տրամադրվում է համապատասխան փաստաթղթերի համաձայն:

ii) Համաձայն «iii» պարբերության՝ պարտատերը չեղյալ է հայտարարել կամ կասեցրել է Վարկառուի նկատմամբ իր պարտավորությունը Ֆինանսական որեւէ պարտքի պատճառով կամ նախքան Ֆինանսական պարտքի մարման նշված ժամկետն այն հայտարարել է վճարման ենթակա կամ պահանջել է Ֆինանսական պարտքի մասով լրիվ ծավալով կանխավճար՝ յուրաքանչյուր դեպքում, համապատասխան փաստաթղթերի համաձայն, պարտավորությունների չկատարման կամ համանման ազդեցություն (ինչպես էլ նկարագրված լինի) ունեցող որեւէ դրույթի չկատարման արդյունքում:

iii) Սույն 16.1(ե) կետի համաձայն՝ Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք տեղի չի ունենա, եթե վերոնշյալ «i» եւ «ii» պարբերությունների շրջանակներում Ֆինանսական պարտքի համապատասխան գումարը կամ Ֆինանսական պարտքի մասով պարտավորությունը չի գերազանցում քառասուն միլիոն եվրոն (40 000 000 եվրո) (կամ որեւէ այլ արժույթով (արժույթներով) դրա համարժեք գումարը):

զ) Անօրինականությունը

Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները կատարելն անօրինական է կամ դառնում է անօրինական:

է) Էական բացասական փոփոխությունը

Տեղի է ունենում կամ հավանական է, որ տեղի կունենա որեւէ իրադարձություն (այդ թվում՝ Վարկառուի երկրում քաղաքական իրավիճակի փոփոխություն) կամ միջոցառում, որը, ըստ Վարկատուի, հավանական է, որ էական բացասական ազդեցություն կունենա:

ը) Ծրագրի բաղադրիչից դուրս գալը կամ կասեցնելը

Տեղի է ունենում նշվածներից որեւէ մեկը.

*i)* Ծրագրի բաղադրիչի իրականացումը կասեցվում կամ հետաձգվում է վեց (6) ամիսը գերազանցող ժամկետով, կամ

ii) Ծրագրի բաղադրիչն ամբողջությամբ չի ավարտվել մինչեւ Տեխնիկական ավարտի ամսաթիվը, կամ

iii) Վարկառուն դուրս է գալիս Ծրագրի բաղադրիչից կամ դադարում է մասնակցել դրա իրականացմանը:

թ) Թույլտվությունները

Վարկառուին Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները կամ Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր այլ էական պարտավորություններ կատարելու կամ դրանց հետ համապատասխանություն ապահովելու համար անհրաժեշտ կամ Ծրագրի բաղադրիչի իրականացման բնականոն ընթացքում պահանջվող որեւէ թույլտվություն ձեռք չի բերվել սահմանված ժամկետում կամ չեղարկվել է կամ անվավեր է դարձել կամ այլ կերպ կորցրել է լիարժեք ուժը եւ գործողությունը:

ժ) Էական բացասական ազդեցություն ունեցող վճիռները, ակտերը կամ որոշումները

Ընդունվում է կամ ողջամտորեն հնարավոր է, որ ընդունվի Վարկառուին վերաբերող որեւէ վճիռ կամ արբիտրաժային որոշում կամ որեւէ դատական կամ վարչական որոշում, որն ըստ Վարկատուի՝ հավանական է, որ էական բացասական ազդեցություն կունենա:

ժա) Ազատ փոխարկելիության եւ ազատ փոխանցման կասեցումը

Վտանգվում է Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերով վճարման ենթակա գումարների կամ Վարկատուի կողմից Վարկառուին կամ Վարկառուի իրավասության ներքո գտնվող այլ վարկառուի տրամադրվող որեւէ վարկային գծի ազատ փոխարկելիությունը եւ (կամ) ազատ փոխանցումը:

ժբ) Շրջանակային համաձայնագրի շրջանակներում Վարկատուի կողմից Վարկառուին շնորհված Վարկի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքը

Պարտավորությունների չկատարման դեպք է տեղի ունենում ֆինանսական փաստաթղթի համաձայն, որը կնքվել է Շրջանակային համաձայնագրի շրջանակներում Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված մեկ այլ Վարկի վերաբերյալ:

16.2. <u>Վարկի ժամկետից շուտ մարելու պահանջը</u>

Պարտավորությունների չկատարման դեպք տեղի ունենալու դեպքում եւ դրանից հետո ցանկացած ժամանակ Վարկատուն կարող է առանց որեւէ պաշտոնական պահանջ ներկայացնելու կամ որեւէ դատական կամ արտադատական վարույթ սկսելու Վարկառուին գրավոր ծանուցելու միջոցով՝

ա) չեղարկել համապատասխան Վարկի կամ Վարկերի շրջանակներում, եթե կիրառելի է, Հասանելի վարկը, որն անմիջապես կնվազի մինչեւ զրո, եւ (կամ)

բ) հայտարարել, որ համապատասխան Վարկը կամ Վարկերը, եթե կիրառելի է, ամբողջությամբ կամ մասամբ ցանկացած հաշվեգրված կամ վճարման ենթակա տոկոսի հետ միասին, ինչպես նաեւ Ֆինանսական փաստաթղթերով վճարման ենթակա բոլոր մյուս գումարները ենթակա են անհապաղ վճարման:

Չհակասելով վերոշարադրյալին՝ այն դեպքում, երբ տեղի է ունենում Շրջանակային համաձայնագրի 16.1 (Պարտավորությունների չկատարման դեպքերը) կետով սահմանված՝ Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք, Վարկատուն իրավունք է վերապահում Վարկառուին գրավոր ծանուցելու միջոցով՝ *i)* կասեցնելու կամ հետաձգելու համապատասխան Վարկի կամ Վարկերի շրջանակներում, եթե այդպիսիք կան, որեւէ Մասհանում, եւ (կամ) ii) կասեցնելու հնարավոր որեւէ այլ ֆինանսական առաջարկի հետ կապված՝ Շրջանակային համաձայնագրի շրջանակներում կազմված ցանկացած Ֆինանսական փաստաթղթի կամ ցանկացած համաձայնագրի վերջնականացումը, որի մասին Վարկատուն ծանուցել է Վարկառուին, եւ (կամ) iii) կասեցնելու կամ հետաձգելու Շրջանակային համաձայնագրի շրջանակներում Վարկատուի կողմից

Վարկառուին տրամադրված որեւէ վարկի կամ Վարկառուի եւ Վարկատուի միջեւ կնքված որեւէ վարկային համաձայնագրի ցանկացած Մասհանում:

Եթե Համաֆինանսավորողի կողմից այդ Համաֆինանսավորողի եւ Վարկառուի միջեւ համաձայնության հիման վրա հետաձգվել կամ կասեցվել է որեւէ Մասհանում, կամ եթե ծառայությունների պատվիրակումը կասեցվել կամ տեղարկվել է Համաֆինանսավորման համաձայնագրի հիման վրա, ապա Վարկատուն իրավունք է վերապահում հետաձգելու կամ կասեցնելու համապատասխան Վարկի շրջանակներում որեւէ Մասհանում:

16.3. <u>Պարտավորությունների չկատարման դեպքի մասին ծանուցելը</u>

Վարկառուն, տեղեկանալով որեւէ դեպքի մասին, որը Պարտավորությունների չկատարման դեպք է կամ հավանական է, որ լինի Պարտավորությունների չկատարման դեպք, Շրջանակային համաձայնագրի 15.4 կետին (Այլ տեղեկություններ) համապատասխան անհապաղ ծանուցում է Վարկատուին եւ տեղեկացնում է այն բոլոր միջոցների մասին, որոնք Վարկառուն նախատեսել է այն շտկելու համար:

## 17. ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

17.1. <u>Վճարումները</u>

Ֆինանսական փաստաթղթերի շրջանակներում Վարկատուի կողմից ստացված բոլոր վճարումները կիրառվում են ծախսերի, վճարների, տոկոսների, մայր գումարների կամ Ֆինանսական փաստաթղթերով վճարման ենթակա ցանկացած այլ գումարի վճարման ուղղությամբ՝ հետեւյալ հաջորդականությամբ.

ա) չնախատեսված ծախսեր եւ ծախքեր,

բ) վճարներ,

գ) ժամկետանց վճարման տոկոս եւ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս,

դ) հաշվեգրված տոկոս,

ե) մայր գումարի մարումներ:

Վարկառուի կողմից ստացված ցանկացած վճարում առաջին հերթին կիրառվում է Վարկային միջոցների շրջանակներում վճարման ենթակա գումարներում կամ դրանց ուղղությամբ կամ Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված այլ վարկերի շրջանակներում, եթե Վարկատուի շահերից բխում է այդ գումարները կիրառել այդպիսի այլ վարկերի նկատմամբ՝ վերոնշյալ հաջորդականությամբ:

17.2. Հաշվանցումը

Վարկատուն կարող է ցանկացած ժամանակ, առանց Վարկառուի նախնական հաստատման, հաշվանցել Վարկառուի կողմից վճարման ենթակա պարտավորությունները Վարկառուի անունից Վարկատուի կողմից տիրապետվող գումարների դիմաց կամ Վարկատուի կողմից Վարկառուին վճարման ենթակա որեւէ պարտավորություն: Եթե պարտավորությունները տարբեր արժույթներով են, ապա հաշվանցման նպատակով Վարկատուն կարող է ցանկացած պարտավորություն փոխարկել գերակայող արժույթի փոխարժեքով:

Ֆինանսական փաստաթղթերով Վարկառուի կողմից կատարվող բոլոր վճարումները հաշվարկվում եւ կատարվում են առանց հաշվանցման: Վարկառուին արգելվում է որեւէ հաշվանցում կատարել:

17.3. Բանկային օրերը

Չհակասելով Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի հաշվարկին, որն անփոփոխ կմնա այն դեպքում, երբ վճարումը կատարվում է որեւէ ոչ Բանկային օր, այդ վճարման կատարման օր է համարվում հաջորդ Բանկային օրը, եթե հաջորդ Բանկային օրն օրացուցային նույն ամսվա օր է, կամ նախորդ Բանկային օրը, եթե հաջորդ Բանկային օրն օրացուցային նույն ամսվա օր չէ:

17.4. Վճարման արժույթը

Ֆինանսական փաստաթղթով վճարման ենթակա յուրաքանչյուր գումարի արժույթը եվրոն է՝ բացառությամբ Շրջանակային համաձայնագրի 17.6 կետով *(Վճարման վայրը)* նախատեսված կարգի:

17.5. Տոկոսների հաշվարկման բազան

Ֆինանսական փաստաթղթով հաշվեգրվող ցանկացած տոկոս, վճար կամ ծախս կհաշվարկվի անցած օրերի փաստացի թվի եւ տարեկան երեք հարյուր վաթսունօրյա (360) հաշվարկի հիման վրա՝ եվրոպական միջբանկային շուկայի գործելակերպին համապատասխան:

17.6. Վճարման վայրը

ա) Վարկի շրջանակներում Վարկատուի կողմից Վարկառուին փոխանցվելիք ցանկացած ֆինանսական միջոց կվճարվի համապատասխան Ծրագրի բաղադրիչի հաշվին:

բ) Վարկառուի կողմից Վարկատուին կատարվելիք ցանկացած վճար կատարվում է վճարման ենթակա ամսաթվին, ոչ ուշ, քան ժամը 11:00-ն (Փարիզի ժամանակով)՝ հետեւյալ բանկային հաշվին.

RIB կոդ՝ 30001 00064 00000040235 03

IBAN կոդ՝ FR76 3000 1000 6400 0000 4023 503

Ֆրանսիայի բանկի SWIFT կոդ (BIC)՝ BDFEFRPPCCT,

որը բացվել է Վարկատուի կողմից Փարիզում՝ Ֆրանսիայի բանկում (գլխամասային գրասենյակ/հիմնական մասնաճյուղ), կամ Վարկատուի կողմից Վարկառուին ծանուցված ցանկացած այլ հաշվի:

գ) Վարկառուն Վարկատուին գումարների փոխանցման համար պատասխանատու բանկից պահանջում է բանկային փոխանցման վերաբերյալ ցանկացած հաղորդագրության մեջ համապարփակ ձեւով եւ ստորեւ սահմանված

կարգով ներկայացնել՝

i) Պրինցիպալին՝ անվանումը, հասցեն, բանկային հաշվեհամարը.

ii) Պրինցիպալի բանկը՝ անվանումը եւ հասցեն.

iii) Հղում՝ Վարկառուի անվանումը, Ծրագրի բաղադրիչի անվանումը, Շրջանակային համաձայնագրի հղումային համարը եւ Վարկի համապատասխան հաստատումը:

դ) Կիրառելի փոխարժեքները կլինեն Վարկատուի կողմից Տեղեկատու ֆինանսական հաստատության միջոցով ստացված փոխարժեքները Մասհանման ամսաթվին:

ե) Վարկառուի կողմից կատարված բոլոր վճարումները համապատասխանում են սույն 17.6 կետին (Վճարման վայրը)՝ վճարման համապատասխան պարտավորությունն ամբողջությամբ կատարված համարելու համար:

17.7. <u>Վճարային համակարգերի խափանումը</u>

Եթե Վարկատուն որոշի (իր հայեցողությամբ), որ տեղի է ունեցել Վճարային համակարգերի խափանման դեպք, կամ Վարկառուն ծանուցի Վարկատուին, որ տեղի է ունեցել Վճարային համակարգերի խափանում, ապա Վարկատուն՝

ա) կարող է կազմակերպել եւ Վարկառուի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում կազմակերպում է քննարկումներ Վարկառուի հետ՝ նպատակ ունենալով համաձայնեցնել Վարկի օգտագործման եւ կառավարման առնչությամբ ցանկացած փոփոխություն, որը Վարկատուն կարող է անհրաժեշտ համարել տվյալ հանգամանքներում,

բ) պարտավոր չէ Վարկառուի հետ քննարկումներ կազմակերպել վերոնշյալ «ա» պարբերության մեջ նշված որեւէ փոփոխության առնչությամբ, եթե նրա կարծիքով՝ գործնականում իրագործելի չէ դա անել տվյալ հանգամանքներում, եւ ցանկացած դեպքում, եթե չունի այդպիսի

փոփոխություններին համաձայնելու պարտավորություն, եւ

գ) պատասխանատվություն չի կրում որեւէ ծախսի, կորստի կամ պարտավորության համար, որն առաջանում է սույն 17.7 կետի *(Վճարային համակարգերի խափանումը)* համաձայն իր կողմից գործողությունների ձեռնարկման կամ չձեռնարկման հետեւանքով:

## 18. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18.1. Հավաստումներն ու սահմանումները

Որեւէ Ֆինանսական փաստաթղթից բխող կամ դրա առնչությամբ որեւէ դատավարության կամ արբիտրաժի ընթացքում Վարկատուի կողմից վարվող հաշիվներին արված մուտքերն այն հարցերի *prima facie* (առերեւույթ) ապացույցն են, որոնց վերաբերում են:

Վարկատուի կողմից Ֆինանսական փաստաթղթով նախատեսված տոկոսադրույքի կամ գումարի մասին ցանկացած հավաստում կամ որոշում ակնհայտ սխալի բացակայության դեպքում կլինի այն հարցերի առնչությամբ անհերքելի ապացույց, որին այն վերաբերում է:

18.2. Զիջումը

Վարկառուն չի կարող որեւէ ձեւով զիջել կամ փոխանցել Ֆինանսական փաստաթղթով սահմանված իր բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանցից որեւէ մեկը՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության:

Վարկատուն կարող է Ֆինանսական փաստաթղթերով սահմանված իր ցանկացած իրավունք եւ (կամ) պարտավորություն զիջել կամ փոխանցել որեւէ այլ երրորդ կողմի եւ կարող է կնքել դրա հետ կապված ցանկացած ենթամասնակցության համաձայնագիր:

18.3. Գաղտնիությունը. Տեղեկությունների բացահայտումը

ա) Յուրաքանչյուր Կողմ, առանց մյուս Կողմի նախնական

համաձայնության, չի բացահայտում Ֆինանսական փաստաթղթի բովանդակությունը որեւէ երրորդ կողմի՝ բացառությամբ որեւէ անձի, որի առաջ Կողմն ունի ցանկացած կիրառելի օրենքով, կարգավորմամբ կամ դատական որոշմամբ սահմանված բացահայտման պարտավորություն, կամ

բ) ավելին, Վարկատուն Ծրագրի բաղադրիչին առնչվող ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ կարող է բացահայտել՝ i*)* իր աուդիտորներին, վարկանիշային գործակալություններին, իրավախորհրդատուներին կամ վերահսկող մարմիններին, ii) որեւէ անձի կամ մարմնի, որին Վարկատուն կարող է զիջել կամ փոխանցել Ֆինանսական փաստաթղթերով սահմանված իր բոլոր իրավունքները կամ պարտավորությունները կամ դրանց մի մասը, iii) Ֆրանսիայի պետությանը եւ մասնավորապես՝ այն նախարարություններին, որոնց Վարկատուն հաշվետու է Վարկատուի գործունեության նպատակներով [,/եւ] iv) որեւէ անձի կամ մարմնի՝ պաշտպանության որեւէ միջոց ձեռնարկելու կամ Ֆինանսական փաստաթղթերով սահմանված Վարկատուի իրավունքները պահպանելու նպատակով, եւ **v)** Համաֆինանսավորողին:

գ) Ավելին, Վարկառուն սույնով բացահայտ լիազորում է Վարկատուին՝

i) Ֆրանսիայի կառավարության կայքում հրապարակման համար Ֆրանսիայի Հանրապետության հետ փոխանակում իրականացնելու Միջազգային օժանդակության թափանցիկության նախաձեռնության ցանկացած պահանջով, եւ

ii) հրապարակելու Վարկատուի կայքում՝

Ծրագրի եւ դրա ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նշված է 7-րդ հավելվածում (*Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության կայքում եւ Վարկատուի կայքում):*

18.4. <u>Վաղեմության ժամկետը</u>

Ֆինանսական փաստաթղթերի շրջանակներում ցանկացած պահանջի վաղեմության ժամկետը տասը (10) տարի է՝ բացառությամբ Ֆինանսական փաստաթղթերով վճարման ենթակա տոկոսների առնչությամբ որեւէ պահանջի:

18.5. <u>Դժվարությունները</u>

Կողմերից յուրաքանչյուրը սույնով ընդունում է, որ Ֆրանսիայի *քաղաքացիական օրենսգրքի* 1195-րդ հոդվածի դրույթները չեն կիրառվում իր նկատմամբ՝ կապված Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունների հետ, եւ նա իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնելու Ֆրանսիայի *քաղաքացիական օրենսգրքի* 1195-րդ հոդվածի համաձայն:

18.6. <u>Ֆինանսական միջոցների անվճար փոխանցումը. կիրառելի</u> չէ

18.7. <u>Լեզուն</u>

Շրջանակային համաձայնագրի լեզուն անգլերենն է: Եթե Շրջանակային համաձայնագիրը թարգմանվում է մեկ այլ լեզվով, ապա հակասող մեկնաբանությունների կամ Կողմերի միջեւ վեճի դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Որեւէ Ֆինանսական փաստաթղթի համաձայն կամ դրա առնչությամբ կատարվող բոլոր ծանուցումները կամ տրամադրվող փաստաթղթերն անգլերեն են: ԶՖԳ-ն կարող է պահանջել, որ Ֆինանսական փաստաթղթի համաձայն կամ դրա առնչությամբ տրամադրվող ծանուցումը կամ տրամադրվող փաստաթուղթը, որն անգլերեն չէ, ուղեկցվի անգլերեն վավերացված թարգմանությամբ, որի դեպքում գերակայում է անգլերեն թարգմանությունը, եթե այդ փաստաթուղթը որեւէ ընկերության կանոնադրական փաստաթուղթ, իրավական տեքստ կամ պաշտոնական այլ փաստաթուղթ չէ:

18.8. <u>Մասնակի անվավերությունը</u>

Եթե որեւէ պահի Ֆինանսական փաստաթղթի որեւէ պայման անօրինական է, անվավեր կամ ենթակա չէ կատարման կամ դառնում է այդպիսին, ապա դա որեւէ ազդեցություն չի ունենա այդ Ֆինանսական փաստաթղթի մյուս դրույթների վավերության, օրինականության կամ կատարման ենթակա լինելու վրա կամ չի խաթարի դրանք:

18.9. Իրավունքներից հրաժարման բացառումը

ՀՖԳ-ի կողմից Ֆինանսական փաստաթղթով նախատեսված որեւէ իրավունք չիրականացնելը կամ դրա իրականացումն ուշացնելը չի համարվում այդ իրավունքից հրաժարում:

Որեւէ իրավունքի մասնակի իրականացումը չի խոչընդոտում այդ իրավունքի հետագա իրականացումը կամ կիրառելի օրենքով նախատեսված որեւէ այլ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացումը:

Ֆինանսական փաստաթղթով նախատեսված՝ ՀՖԳ-ի իրավունքներն ու իրավական պաշտպանության միջոցները կուտակային են եւ չեն բացառում կիրառելի օրենքով նախատեսված որեւէ այլ իրավունք կամ պաշտպանության միջոց:

18.10. Իրավաբանական ուժը

Շրջանակային համաձայնագրին կից ներկայացվող հավելվածները, Գնումների ուղեցույցը եւ սույն փաստաթղթի ներածական դրույթները Շրջանակային համաձայնագրի մասն են կազմում եւ ունեն նույն իրավաբանական ուժը:

Յուրաքանչյուր Վարկի հաստատման հավելվածները Վարկի հաստատման մասն են կազմում եւ ունեն նույն իրավաբանական ուժը:

Սույն Շրջանակային համաձայնագրի շրջանակներում Վարկի հաստատումները ենթակա չեն ՀՀ խորհրդարանի (Ազգային ժողովի) կողմից վավերացման եւ Վարկառուի անունից կստորագրվեն ՀՀ ֆինանսների նախարարի կողմից:

18.11. Ամբողջական համաձայնագիրը

Ստորագրման ամսաթվի դրությամբ սույն Շրջանակային համաձայնագրով ներկայացվում է Կողմերի միջեւ ձեռք բերված ամբողջական համաձայնությունը սույն փաստաթղթում շարադրված հարցերի վերաբերյալ, եւ դրանով չեղյալ են

ճանաչվում եւ փոխարինվում են բոլոր նախկին փաստաթղթերը, համաձայնագրերը կամ փոխըմբռնումները, որոնք կարող էին փոխանակված կամ փոխանցված լինել որպես սույն Շրջանակային համաձայնագրի հետ կապված բանակցությունների մաս:

18.12. Փոփոխությունները

Շրջանակային համաձայնագրում կամ Վարկի հաստատման մեջ որեւէ փոփոխություն չի կարող կատարվել, եթե Կողմերի միջեւ այդ մասին հստակ գրավոր համաձայնություն ձեռք չի բերվել:

Շրջանակային համաձայնագրում կատարվող ցանկացած փոփոխություն, որը չի առաջացնի Վարկառուի ֆինանսական կամ գույքային պարտավորությունների փոփոխություն, կարող է կատարվել փոխադարձ գրավոր համաձայնությամբ եւ ուժի մեջ մտնել երկու Կողմերի կողմից ստորագրման ամսաթվին՝ առանց հետագա Վավերացման անհրաժեշտության:

## 19. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

19.1. Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները

Ցանկացած ծանուցում, հարցում կամ այլ հաղորդագրություն, որը պետք է տրվի կամ ուղարկվի Շրջանակային համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ, տրվում կամ ուղարկվում է գրավոր, եթե այլ բան նշված չէ, կարող է տրվել կամ ուղարկվել ֆաքսով կամ նամակով, որը փոստային բաժանմունքի կողմից ուղարկվում է համապատասխան Կողմի ստորեւ նշված հասցեին եւ համարին.

Վարկառուի դեպքում՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Երեւան, 0010, Մելիք-Ադամյան փ. 1

Հեռախոս՝ +374 11 800 333

Հասցեատեր՝ Միջազգային համագործակցության վարչության պետ

Պետական պարտքի կառավարման վարչության պետ

Վարկատուի դեպքում՝

**ՁՖԳ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

Հասցե՝ ՎՐԱՍՏԱՆ, ԹԲԻԼԻՍԻ, 8-0179, Ի. Ճավճավաձե փողոց 34, «Pixel» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոս՝ +995 32 2 500 277

Հասցեատեր՝ ՁՖԳ-ի՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային ներկայացուցչական գրասենյակի տնօրեն

Պատճենը՝

ՁՖԳ. ՓԱՐԻԶԻ ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հասցե՝ Ֆրանսիա, 75598 Փարիզ, Սեդեքս 12, Ռոլան Բաղթ 5

Հեռախոս՝ + 33 1 53 44 31 31

Ֆաքսիմիլ՝ + 33 1 44 87 39 65

Հասցեատեր՝ ՁՖԳ-ի՝ Արեւելյան Եվրոպայի, Միջին Արեւելքի եւ Ասիայի բաժնի տնօրեն

կամ համանման այլ հասցե, ֆաքսի համար, բաժին կամ պաշտոնատար անձ, որի մասին Կողմերից մեկը ծանուցում է մյուս Կողմին:

19.2. Հանձնումը

Յանկացած ծանուցում, հարցում կամ հաղորդագրություն, որը մի Կողմն ուղարկում է մյուս Կողմին Շրջանակային համաձայնագրի առնչությամբ, ուժի մեջ կլինի միայն՝

ա) եթե ստացվել է ընթեռնելի ձեւով՝ ֆաքսի դեպքում, եւ

բ) եթե հանձնվել է ճիշտ հասցեով՝ նամակի դեպքում, եւ այն դեպքում, երբ կոնկրետ անձը կամ բաժինը նշված է որպես 19.1 կետով *(Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները)* նախատեսված հասցեի մանրամասների մաս, եթե այդպիսի ծանուցումը, հարցումը կամ հաղորդագրությունը հասցեագրվել են այդ անձին կամ բաժնին:

19.3. <u>Էլեկտրոնային հաղորդագրությունները</u>

ա) Շրջանակային համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ մի անձի կողմից մյուսին տրամադրվող ցանկացած հաղորդագրություն կարող է տրամադրվել էլեկտրոնային փոստով կամ այլ էլեկտրոնային եղանակով, եթե Կողմերը՝

i) համաձայնում են, որ եթե եւ քանի դեռ հակառակի մասին ծանուցում չի ստացվել, դա լինելու է հաղորդակցության ընդունված ձեւաչափ,

ii) միմյանց գրավոր ծանուցում են իրենց էլեկտրոնային փոստի

հասցեների եւ (կամ) ցանկացած այլ տեղեկության մասին, որը պահանջվում է այդ եղանակով տեղեկություններ ուղարկելն ու ստանալը հնարավոր դարձնելու համար, եւ

iii) միմյանց ծանուցում են իրենց հասցեի կամ իրենց կողմից տրամադրված ցանկացած այլ տեղեկության որեւէ փոփոխության մասին:

բ) Կողմերի միջեւ ուղարկվող ցանկացած էլեկտրոնային հաղորդագրություն ուժի մեջ է միայն այն ընթեռնելի ձեւով փաստացի ստանալու դեպքում:

## 20. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՈՄԻՑԻԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

20.1. Կարգավորող իրավունքը

Շրջանակային համաձայնագիրը կարգավորվում է Ֆրանսիայի իրավունքով:

20.2. Արբիտրաժը

Շրջանակային համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ ուղարկվում է արբիտրաժի եւ վերջնականապես կարգավորվում է դրա միջոցով՝ արբիտրաժային վարույթն սկսվելու օրվա դրությամբ կիրառելի՝ Առեւտրի միջազգային պալատի հաշտարարության եւ արբիտրաժային կանոնների համաձայն, այդ Կանոններին համապատասխան նշանակված մեկ կամ մի քանի արբիտրների կողմից:

Արբիտրաժի վայրը Փարիզն է, իսկ արբիտրաժի լեզուն՝ անգլերենը:

Արբիտրաժի վերաբերյալ սույն դրույթը լիարժեք ուժի եւ գործողության մեջ կմնա, եթե Շրջանակային համաձայնագիրն ուժը կորցրած ճանաչվի, կամ դրա գործողությունը դադարեցվի կամ այն չեղարկվի, ինչպես նաեւ Շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից հետո: Կողմերի՝ Շրջանակային համաձայնագրով սահմանված պայմանագրային պարտավորությունները չեն կասեցվում, եթե Կողմերից մեկը դատական վարույթ է հարուցում մյուս Կողմի դեմ:

Կողմերը բացահայտ համաձայնում են, որ Շրջանակային համաձայնագիրն Ուժի մեջ մտնելու ամսաթվից Վարկառուն անդառնալիորեն հրաժարվում է անձեռնմխելիության բոլոր իրավունքներից՝ կապված իրավազորության կամ կատարման հետ, որոնց վրա նա հակառակ դեպքում կարող էր հիմնվել:

20.3. Դոմիցիլի ընտրությունը

Չհակասելով որեւէ կիրառելի օրենքի՝ վերոնշյալ որեւէ գործողության կամ վարույթի հետ կապված դատական եւ արտադատական փաստաթղթերի

հանձնման նպատակով Վարկառուն դատական փաստաթղթերի հանձնման համար անփոփոխելիորեն ընտրում է 19.1 կետով (*Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները)* սահմանված դոմիցիլի հասցեն, իսկ ՁՖԳ- ն դատական փաստաթղթերի հանձնման համար ընտրում է 19.1 կետով (*Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները)* սահմանված «AFD SIEGE» հասցեն:

## 21. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն դեպքում, երբ սույն Շրջանակային համաձայնագիրը կնքվում է էլեկտրոնային ստորագրության միջոցով՝

ա) Յուրաքանչյուր Կողմ ընդունում եւ գիտակցում է, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծման օգտագործումը, ինչպես նաեւ դրա հետ կապված գործընթացը, էլեկտրոնային ստորագրություն է Քաղաքացիական օրենսգրքի 1367-րդ հոդվածի դրույթների իմաստով:

բ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում եւ ընդունում է, որ «CEGEDIM France»-ի կողմից Շրջանակային համաձայնագրի եւ դրան առնչվող բոլոր այն տեղեկությունների պահպանումը, որոնք գրանցված եւ (կամ) ստորագրված են էլեկտրոնային եղանակով, Քաղաքացիական օրենսգրքի 1379-րդ հոդվածի դրույթների համաձայն համապատասխանում է ամբողջականության վերաբերյալ պահանջին:

գ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում եւ ընդունում է, որ Շրջանակային համաձայնագրում դիտարկվող ամսաթիվը եւ ժամադրոշմը, ինչպես նաեւ էլեկտրոնային ստորագրությունները պարտադիր են եւ գերակայում են Կողմերի միջեւ:

դ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում եւ ընդունում է, որ Շրջանակային համաձայնագրի՝ «CEGEDIM France-ի» կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրությունն ունի հուսալիության բավարար մակարդակ՝ նույնականացնելու համար դա ստորագրողին եւ երաշխավորելու համար նրա կապն այն Շրջանակային համաձայնագրի հետ, որի վրա դրված է նրա ստորագրությունը:

ե) Հետեւաբար Կողմերը համաձայն են, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծումը կրում է հուսալիության կանխավարկած, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, որը համարժեք է Քաղաքացիական օրենսգրքի 1367-րդ հոդվածի 2-րդ կետում եւ «Էլեկտրոնային ստորագրությունների մասին» 2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 2017-1416 որոշման 1-ին հոդվածում նշված որակավորված էլեկտրոնային ստորագրությանը տրված հուսալիության կանխավարկածին այնպես, որ օգտագործված գործընթացի ոչ հուսալիության ապացուցման բեռը կրում է «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծման հուսալիությունը վիճարկող Կողմը: Այսպիսով, Կողմերից յուրաքանչյուրը գիտակցում եւ բացահայտ ընդունում է, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծումն օգտագործելու միջոցով ստորագրված Շրջանակային համաձայնագիրը՝

i) ունի ապացուցողական նույն արժեքը, ինչ ստորագրված եւ (կամ) թվագրված թղթային գրավոր փաստաթուղթը.

ii) վավեր է եւ կատարման ենթակա է իր եւ մյուս Կողմերի համար, եւ

iii) ընդունելի է դատարանների եւ (կամ) ցանկացած մարմնի համար՝ որպես դրանց գոյության եւ դրանց կից իրավական ակտի բովանդակության բառացի ապացույց:

զ) Սույն հոդվածն ապացուցողական համաձայնագիր է՝ համաձայն Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1368-րդ հոդվածի:

Ստորագրվել է էլեկտրոնային եղանակով 2025 թվականի դեկտեմբերի 18-ին:

**ՎԱՐԿԱՌՈՒ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

______________________________________

Ի դեմս՝

**Անունը՝ Պրն Վահե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ**

**Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար**

**ՎԱՐԿԱՏՈՒ՝**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

______________________________

Ի դեմս՝

**Անունը՝ Տկն Ֆեննի ԴԵԼՓԵՅԻ**

**Պաշտոնը՝ ԶՖԳ-ի՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն**

**Համատեղ ստորագրող անձ՝ Նորին գերազանցություն պրն Օլիվիե ԴԸԿՈՏԻՆՅԻ՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան**

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի ջրային եւ գյուղատնտեսության ոլորտների համապարփակ զարգացում» (WAIDA) ծրագիր

«WAIDA» ծրագրի նպատակն է՝ i) բարելավել Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման կայունությունն ու արդյունավետությունը՝ աջակցելով ոռոգման ենթակառուցվածքների (եւ խմելու ջրի հասանելիությանը) վերականգնմանն ու արդիականացմանը եւ ընդհանրապես ոլորտի ինստիտուցիոնալ ամրապնդմանը, եւ ii) փորձնական հիմունքներով աջակցել Սյունիքի մարզի ներառական եւ համապարփակ զարգացմանը եւ դրա դիմակայունության ամրապնդմանը: ՁՖԳ-ի ֆինանսավորումը կազմված է 100 միլիոն եվրո բազմատրանշ վարկային գծից (ԲՎԳ)՝ 3 տրանշով, որոնցից առաջին 2 տրանշները՝ յուրաքանչյուրը 30 միլիոն եվրո, կտրամադրվեն 2025 թվականին: Այս աջակցությունը կլրացվի Եվրոպական միության կողմից տրամադրված 12.456 միլիոն եվրո դրամաշնորհով (ներառյալ ՁՖԳ-ի վարձատրության ծախսերը):

### ***Համատեքստը եւ ռազմավարական մարտահրավերները***

Թեեւ Հայաստանն ունի վերականգնվող քաղցրահամ ջրի պաշարների լավ մակարդակ, դրանց բաշխումը ժամանակի եւ տարածության մեջ շարունակում է շատ անհավասար լինել: Այդ ռեսուրսները նաեւ աստիճանաբար առավել խոցելի են դառնում կլիմայի փոփոխության եւ պահանջարկի վրա աճող ճնշման համակցված հետեւանքների նկատմամբ: Գյուղատնտեսության ոլորտը, որը սերտորեն կապված է ոռոգման զարգացման հետ, որը կազմում է գյուղատնտեսական արտադրանքի 80%-ը, ռազմավարական կարեւորություն ունի այն համատեքստում, երբ պարենային անվտանգությունն ու ինքնիշխանությունը մարտահրավերներ են: Հայաստանի բնակչության մեկ քառորդը կախված է անվստահելի տեղական ցանցերի կողմից մատուցվող ցածրորակ ջրամատակարարման եւ սանիտարական մաքրման ծառայություններից:

Իր տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական կարեւորությամբ պայմանավորված՝ ջրային ոլորտը հատուկ ուշադրության է արժանանում Հայաստանի իշխանությունների կողմից: Դրա կառավարումը համեմատաբար բարդ է եւ մինչ օրս զուրկ է եղել հստակ ղեկավարումից: Ոռոգման ոլորտում ջրային ռեսուրսների կառավարմանը, ներառյալ Հարավային գետավազանի կառավարման պլանի միջոցառումների ծրագրում ներգրավված բոլոր՝ կենտրոնականից մինչեւ տեղական մակարդակի հաստատությունները պետք է աջակցություն ստանան իրենց գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար: Ոլորտի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել գնագոյացման համակարգը: Հաշվի առնելով ենթակառուցվածքների քայքայված վիճակը եւ ոռոգման ներուժի թերի օգտագործումը՝ անհրաժեշտ է մեծ ներդրումներ կատարել ցանցերի վերականգնման եւ արդիականացման մեջ:

Գտնվելով Հայաստանի հարավում՝ Սյունիքի մարզը տնտեսապես կարեւոր եւ աշխարհաքաղաքական առումով ռազմավարական տարածաշրջան է: Շրջանը բնութագրվում է ագրոկլիմայական գոտիների լայն բազմազանությամբ եւ ունի զգալի գյուղատնտեսական ներուժ, սակայն ոռոգման բացակայության պատճառով ոչ ամբողջությամբ է օգտագործվում: Այս շրջանում ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը լծակ կլինի արտադրողականությունը բարելավելու եւ տարածաշրջանային զարգացումը խթանելու համար:

### ***Ծրագրի նպատակները եւ բովանդակությունը***

Ծրագրի նպատակն է՝ *i)* ազգային մակարդակով բարելավել ջրային ռեսուրսների կառավարման կայունությունն ու արդյունավետությունը ոռոգման, խմելու ջրի մատակարարման եւ սանիտարական մաքրման համար՝ կլիմայի փոփոխության համատեքստում, ii) ոռոգման ոլորտի վերականգնման հիման վրա աջակցել Սյունիքի տարածքի ներառական եւ համապարփակ զարգացմանը եւ ամրապնդել դրա դիմակայունությունը, iii) խրախուսել գյուղական վայրերում արժանապատիվ աշխատատեղերի պահպանումը, եւ iv) ամրապնդել Հայաստանի պարենային անվտանգությունն ու ինքնիշխանությունը:

Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ՝

- Առաջին բաղադրիչը («WISE», ազգային մակարդակով, համաֆինանսավորված Համաշխարհային բանկի առաջնորդությամբ) նվիրված է ոռոգման ենթակառուցվածքի եւ խմելու ջրի հասանելիության ոլորտում ներդրումներին՝ ծրագրային մոտեցման կիրառմամբ, եւ ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը.

- Երկրորդ բաղադրիչը (տեղական մակարդակով)՝ փորձնական հիմունքներով, Սյունիքի մարզի ներառական եւ համապարփակ զարգացման համար, որը ներառում է ներդրումներ ոռոգման համակարգերի վերականգնման ու արդիականացման մեջ՝ փուլային մոտեցման կիրառմամբ, ինչպես նաեւ աջակցություն տեխնիկական օժանդակության եւ ներդրումային դրամաշնորհների ձեւով՝ ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու եւ դիմակայուն, կայուն եւ ներառական գյուղատնտեսություն զարգացնելու նպատակով:

***Շահագրգիռ կողմերը եւ գործելակերպը***

Ծրագրի Շահառուն կլինի Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս դրա Ֆինանսների նախարարության: Երկու բաղադրիչների իրականացման պատասխանատուն կլինի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտեն: Ծրագրի վերահսկման նպատակով կմոբիլիզացվի Ծրագրի կառավարման գրասենյակ (ԾԿԳ): Սյունիքի փորձնական բաղադրիչի կառավարման համար տեղական մակարդակով կստեղծվի ԾԿԳ-ի ապակենտրոնացված ստորաբաժանում՝ տարածքին հնարավորինս մոտ վերահսկողություն ապահովելու նպատակով:

***Արժեքը եւ ֆինանսավորումը***

«WAIDA» ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 200 միլիոն եվրո, որը ֆինանսավորվում է հետեւյալ կերպ.

- «WISE» բաղադրիչում «ներդրումների» համար՝ ՁՖԳ-ից մինչեւ 70 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ երկու տրանշով (30 միլիոն եվրո՝ 1-ին տրանշի համար, որը սույն դրամաշնորհի խնդրո առարկան է, եւ առավելագույնը 40 միլիոն եվրո՝ երկրորդ տրանշի համար, որը նախատեսվում է տրամադրել 2027 թվականին), եւ Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող 80 միլիոն ԱՄՆ դոլար վարկի միջոցով (առաջատար) եւ Հայաստանի Հանրապետությունից 31 միլիոն ԱՄՆ դոլարի համարժեք ֆինանսավորում:

- Սյունիքի բաղադրիչի «ներդրումների» համար՝ ՁՖԳ-ից մինչեւ 30 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ մեկ տրանշով, որը ներառված է ներկայիս հատկացման շրջանակում:

- Երկու բաղադրիչների տեխնիկական աջակցության ծրագրի համար՝ 12 միլիոն եվրո՝ պատվիրակված դրամաշնորհի միջոցով: Դրանք կլինեն Եվրոպական միության Հարեւանության ներդրումային հարթակի (Հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինություն (DG NEAR)) կողմից պատվիրակված միջոցներ:

ՁՖԳ-ի՝ պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկային ֆինանսավորումը՝ ընդհանուր՝ առավելագույնը 100 միլիոն եվրոյի չափով, կտրամադրվի երեք տրանշից բաղկացած Բազմատրանշ վարկային գծի ձեւով:

***Հիմնական ակնկալվող ազդեցությունները***

Ակնկալվում է, որ ոռոգման ոլորտի ինստիտուցիոնալ ամրապնդումը, համակցված ենթա կառուցվածքներում ներդրումներով եւ դրանց օգտագործման առավել մեծ արդյունավետության ձգտումով, անկախ այն բանից՝ լինի ազգային մասշտաբով, թե Սյունիքում փորձնական ծրագրի շրջանակներում, կհանգեցնի գյուղատնտեսական արտադրողականության եւ եկամուտների աճի, ինչն անուղղակի ազդեցություն կունենա ամբողջ տնտեսության վրա: Ծրագիրը կօգնի

երկրի պարենային անվտանգության նպատակների իրագործմանը եւ դրա գյուղական վայրերի վերականգնմանը: Հետեւաբար ակնկալվում է, որ այն ուժեղ ազդեցություն կունենա կայուն զարգացման չորս հարաչափերի վրա, որոնք են՝ կառավարում, կայուն եւ դիմակայուն տնտեսություն, կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն եւ կենսաբազմազանություն:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

## ՄԱՍ I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

| | |
|---|---|
| **Հաշվի բանկ** | ունի Շրջանակային համաձայնագրի 6.4.1 կետում *(Յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի բացումը)* դրան տրված իմաստը |
| **Կոռուպցիոն արարք** | նշանակում է ստորեւ նշվածներից որեւէ մեկը.<br>ա) Պետական պաշտոնյային կամ ցանկացած իրավասության շրջանակներում մասնավոր հատվածի կազմակերպություն ղեկավարող կամ այնտեղ աշխատող որեւէ այլ անձի ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած բնույթի ոչ իրավաչափ առավելություն խոստանալու, առաջարկելու կամ տալու արարքը՝ հօգուտ տվյալ անձի կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության, որպեսզի տվյալ անձը կատարի որեւէ գործողություն կամ անգործություն՝ խախտելով իր իրավական, պայմանագրային կամ մասնագիտական պարտավորությունները, նպատակ ունենալով ներգործություն ունենալու նրա սեփական կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության գործողությունների վրա, կամ<br>բ) պետական պաշտոնյայի կամ ցանկացած իրավասության շրջանակներում մասնավոր հատվածի կազմակերպություն ղեկավարող կամ այնտեղ աշխատող որեւէ այլ անձի արարք, որով նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջնորդում կամ ընդունում է ցանկացած բնույթի ոչ իրավաչափ առավելություն՝ տվյալ անձի կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության համար, որպեսզի տվյալ անձը կատարի որեւէ գործողություն կամ անգործություն՝ խախտելով իր իրավական, պայմանագրային կամ մասնագիտական պարտավորությունները, նպատակ ունենալով ներգործություն ունենալու նրա սեփական կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության գործողությունների վրա |
| **Ահաբեկչական գործողություն (գործողություններ)** | նշանակում է՝<br>i) Միավորված ազգերի կազմակերպության՝ ահաբեկչության դեմ պայքարին վերաբերող կոնվենցիաներով եւ արձանագրություններով արգելված ցանկացած գործողություն (որին կարելի է ծանոթանալ հետեւյալ կայքում՝ https://legal.un.org/ola/Default.aspx).<br>ii) Եվրոպական պառլամենտի 2017 թվականի մարտի 15-ի «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» 2017/541 հրահանգի (ԵՄ) 3-10-րդ հոդվածներում նշված հանցանքներից որեւէ մեկը, կամ<br>iii) ցանկացած այլ գործողություն, որը նպատակ ունի մահ կամ լուրջ մարմնական վնասվածք հասցնելու քաղաքացիական անձին կամ զինված հակամարտության իրավիճակում ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող որեւէ այլ անձի, երբ այդպիսի արարքի նպատակն իր բնույթով կամ |

[1] Հեռացնել լրացուցիչ սահմանումները, որոնք անհրաժեշտ չեն:

| | |
|---|---|
| | համատեքստով բնակչությանն ահաբեկելն է կամ կառավարությանը կամ միջազգային կազմակերպությանը որեւէ գործողություն կատարելուն կամ դրանից ձեռնպահ մնալու հարկադրելը |
| **Կանխավճար** | ունի Շրջանակային համաձայնագրի 6.4 կետում (Վարկի մասհանումը վերականգնվող Կանխավճարների միջոցով) դրան տրված իմաստը |
| **ՁՖԳ-ի Բարեվարքության մասին հայտարարություն** | նշանակում է հայտարարություն, որը պետք է ստորագրվի յուրաքանչյուր Կապալառուի կողմից՝ 10-րդ հավելվածում (ՁՖԳ-ի Բարեվարքության մասին հայտարարությունը) նախատեսված կարգով, եւ որի բովանդակությունն անհրաժեշտության դեպքում Վարկատուն կարող է թարմացնել |
| **Հակամրցակցային գործելակերպեր** | նշանակում է՝<br><br>ա) ցանկացած համաձայնեցված կամ ենթադրվող գործողություն, որի նպատակը եւ (կամ) հետեւանքն է խոչընդոտել, սահմանափակել կամ խեղաթյուրել արդար մրցակցությունը շուկայում, այդ թվում, առանց սահմանափակման, երբ այն հակված է՝ i) շուկայի հասանելիությունը կամ այլ ընկերությունների կողմից մրցակցության ազատ իրականացումը սահմանափակելու, ii) շուկաներում «ազատ խաղի» միջոցով գների սահմանումը կանխելու՝ արհեստականորեն նպաստելով այդ գների աճին կամ նվազմանը, iii) ցանկացած արտադրություն, շուկա, ներդրում կամ տեխնիկական առաջընթաց սահմանափակելու կամ վերահսկելու, կամ iv) շուկաները կամ մատակարարման աղբյուրները բաժանելու,<br><br>բ) ընկերության կամ ընկերությունների խմբի կողմից ներքին շուկայում կամ դրա զգալի հատվածում ունեցած գերիշխող դիրքի ցանկացած չարաշահում, կամ<br><br>գ) ցանկացած հայտ կամ նվազեցված գին, որի նպատակը եւ (կամ) հետեւանքն է շուկայից հեռացնել որեւէ ընկերություն կամ դրա որեւէ արտադրանք կամ կանխել ընկերության կամ դրա որեւէ արտադրանքի մուտքը շուկա |
| **Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ուղեցույց** | նշանակում է 2006 թվականի հոկտեմբերի 15-ով թվագրված եւ 2011 թվականի հունվարին վերանայված ու 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ «ՎԶՄԲ-ի վարկերի եւ ԶՄԱ-ի վարկերի ու դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության եւ կոռուպցիայի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» համաֆինանսավորողի ուղեցույցի կիրառելի տարբերակը |
| **Համաֆինանսավորողի գնումների կիրառելի ուղեցույց** | նշանակում է Համաֆինանսավորողի վարկային համաձայնագրում նշված գնումների քաղաքականությունը, ուղեցույցը եւ ընթացակարգերը |
| **Թույլտվություն (թույլտվություններ)** | նշանակում է Լիազոր մարմնից ստացված կամ դրա կողմից տրամադրված ցանկացած թույլտվություն, համաձայնություն, հաստատում, որոշում, գործունեության իրավունք, լիցենզիա, արտոնություն, փաստաթղթավորում, նոտարական վավերացում կամ գրանցում կամ դրանց առնչությամբ ցանկացած բացառում՝ |

| | |
|---|---|
| | անկախ նրանից՝ տրամադրվել է ակտի միջոցով, թե համարվել է տրամադրված սահմանված ժամկետում պատասխան չստանալու դեպքում, ինչպես նաեւ Վարկառուի պարտատերերի կողմից տրված ցանկացած հաստատում եւ համաձայնություն |
| **Լիազոր մարմին (լիազոր մարմիններ)** | նշանակում է ցանկացած պետական կամ օրենքով սահմանված մարմին, վարչություն կամ պետական արտոնություն իրականացնող հանձնաժողով կամ ցանկացած վարչակազմ, դատարան, գործակալություն կամ պետություն կամ ցանկացած պետական, վարչական, հարկային կամ դատական մարմին |
| **Հասանելիության ժամանակահատված** | նշանակում է Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից եւ ներառյալ այն՝ մինչեւ Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը |
| **Հասանելի վարկ** | նշանակում է տվյալ պահին Վարկի համապատասխան հաստատման մեջ նշված Վարկի առավելագույն մայր գումարը՝ հանած՝<br>i) Վարկառուի կողմից կատարված Մասհանումների հանրագումարը.<br>ii) ցանկացած քննարկվող Մասհանման հայտով կատարման ենթակա ցանկացած Մասհանման գումար, եւ<br>iii) Շրջանակային համաձայնագրի 11.3 կետի *(Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը)* եւ (կամ) 11.4 կետի *(Վարկապուի կողմից Վարկի չեղարկումը)* համաձայն Վարկի չեղարկված որեւէ մաս |
| **Բանկային օր** | նշանակում է այն օրը (բացի շաբաթ կամ կիրակի օրերից), երբ Փարիզում բանկերը բաց են սովորական գործառնություններ իրականացնելու համար |
| **Հաստատված** | բնօրինակ փաստաթղթի ցանկացած պատճենի, լուսապատճենի կամ այլ կրկնօրինակի համար նշանակում է պատշաճորեն լիազորված ցանկացած անձի հաստատում՝ բնօրինակ փաստաթղթի հետ տվյալ պատճենի, լուսապատճենի կամ այլ կրկնօրինակի համապատասխանության վերաբերյալ |
| **Համաֆինանսավորող (Համաֆինանսավորողներ)** | նշանակում է Համաշխարհային բանկը, որը Վարկային հայտում նշված Ծրագրի բաղադրիչի համաֆինանսավորողն է |
| **Համաֆինանսավորողի վարկային համաձայնագիր** | նշանակում է Համաֆինանսավորողի եւ Վարկառուի միջեւ կնքվող համաձայնագիրը եւ ֆինանսավորման բոլոր հարակից փաստաթղթերը, որոնցով նախատեսվում են այն պայմանները, որոնցով Համաֆինանսավորողը Վարկառուին վարկ կտրամադրի |
| **Համաֆինանսավորում** | նշանակում է Ծրագիրը մասամբ ֆինանսավորելու համար Համաֆինանսավորողների կողմից տրամադրվող վարկ՝ ընդհանուր առավելագույնը [ ] գումարի չափով |
| **Համաֆինանսավորման համաձայնագիր** | նշանակում է Վարկատուի եւ Համաֆինանսավորողի միջեւ կնքվող համաձայնագիրը, որով նախատեսվում են այն պայմանները, որոնցով, ի թիվս այլնի, Վարկատուն եւ Համաֆինանսավորողը համաֆինանսավորում են Ծրագիրը, եւ որի համաձայն Վարկատուն Համաֆինանսավորողին է պատվիրակում որոշակի ծառայություններ, որոնք վերաբերում են |

| | |
|---|---|
| | Վարկային գծին եւ Ծրագրի իրականացմանը: |
| **Վարկ** | նշանակում է ցանկացած վարկ, որը Վարկատուն, համաձայն Վարկառուի եւ Վարկատուի միջեւ կնքված Վարկի հաստատման պայմանների, կարող է տրամադրել Վարկառուին |
| **Վարկի հաստատում** | նշանակում է էապես Շրջանակային համաձայնագրի 4-րդ հավելվածի *(Վարկի հասանելիության ձեւը)* III մասում *(Վարկի հաստատման ձեւը)* սահմանված ձեւն ունեցող՝ Վարկի հետ կապված հաստատում |
| **Վարկի հաստատման ստորագրման ամսաթիվ** | նշանակում է Վարկառուի կողմից Վարկի հաստատումը կատարելու ամսաթիվը |
| **Վարկի հայտ** | նշանակում է էապես Շրջանակային համաձայնագրի 4-րդ հավելվածի *(Վարկի հասանելիության ձեւը)* I մասի *(Վարկի հայտի ձեւը)* սահմանված ձեւն ունեցող հայտ |
| **Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետ** | նշանակում է այն ամսաթիվը, որից հետո որեւէ հետագա Մասհանում չի կարող իրականացվել, ինչպես նշված է Վարկի հաստատման մեջ |
| **Առաջին մասհանման վերջնաժամկետ** | նշանակում է այն վերջնաժամկետը, որից առաջ պետք է իրականացվի առաջին Մասհանումը, ինչպես նշված է Վարկի հաստատման մեջ |
| **Մասհանում** | նշանակում է Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված կամ տրամադրվելիք ամբողջ Վարկի կամ դրա մի մասի Մասհանում՝ Շրջանակային համաձայնագրի 6-րդ կետով *(Ֆինանսական միջոցների մասհանումը)* սահմանված պայմանների համաձայն, կամ այդ Մասհանման չմարված մայր գումարը, որը ենթակա է վճարման տվյալ պահին, ներառյալ՝ ցանկացած Կանխավճար |
| **Մասհանման ամսաթիվ** | նշանակում է ամսաթիվ, երբ Վարկատուի կողմից տրամադրվում է Մասհանումը |
| **Մասհանման ժամանակահատված** | նշանակում է ժամանակահատված՝ սկսած առաջին Մասհանման ամսաթվից մինչեւ հետեւյալ ամսաթվերից առավել վաղ ամսաթվին անմիջապես հաջորդող օրը.<br>ա) ամսաթիվ, երբ Հասանելի վարկը զրո է, եւ<br>բ) Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետ |
| **Մասհանման հայտ** | նշանակում է էապես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի (Վարկի շրջանակներում Մասհանումների ձեւերը) I մասի *(Մասհանման հայտի ձեւը)* սահմանված ձեւն ունեցող հայտ |
| **Ուժի մեջ մտնելու ամսաթիվ** | նշանակում է այն ամսաթիվը, երբ Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերը կատարվել են, ինչպես տեղեկացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից |
| **Ծրագրի բաղադրիչի թույլատրելի ծախս (ծախսեր)** | նշանակում է Ծրագրի բաղադրիչի հետ կապված ծախսը (ծախսերը), ինչպես նշված է Վարկի հաստատման ժամանակացույցում |

| | |
|---|---|
| **Էմբարգո** | նշանակում է առեւտրային բնույթի ցանկացած սանկցիա, որի նպատակն է արգելել տվյալ ժամանակահատվածում երկիր մուտք գործող կամ այդտեղից դուրս եկող այն մեկ կամ մի քանի ապրանքների, արտադրանքի կամ ծառայությունների ցանկացած ներմուծում եւ (կամ) ցանկացած արտահանում (մատակարարում, վաճառք կամ փոխանցում), որը հրապարակվում ու ժամանակ առ ժամանակ փոփոխության է ենթարկվում Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից |
| **Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլան** | նշանակում է սույն Շրջանակային համաձայնագրի 11-րդ հավելվածում սահմանված պլանը: Վարկառուն պարտավորվում է կիրառել ԲՍՀՊ-ի միջոցառումները Ծրագրի ողջ ընթացքում: |
| **ԲՍ բողոքների կառավարման մեխանիզմի ընթացակարգային կանոններ** | նշանակում է Բնապահպանական եւ սոցիալական բողոքների կառավարման մեխանիզմի ընթացակարգային կանոններում պարունակվող պայմանագրային պայմաններ, որը հասանելի է կայքում՝ ժամանակ առ ժամանակ դրանում կատարվող փոփոխություններով |
| **ԵՎՐԻԲՈՐ** | նշանակում է Բրյուսելի ժամանակով ժամը 11:00-ին Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ Եվրոպական դրամական շուկաների ինստիտուտի (ԵԴՇԻ) կամ որեւէ իրավահաջորդ կառավարչի կողմից սահմանված՝ տվյալ ժամանակահատվածին համապատասխան ժամանակահատվածում եվրոյով արտահայտված ցանկացած դեպոզիտի դեպքում եվրոյի նկատմամբ կիրառվող միջբանկային դրույքաչափ |
| **Եվրո կամ EUR** | նշանակում է Եվրոպական տնտեսական եւ արժութային միության անդամ պետությունների, այդ թվում՝ Ֆրանսիայի միասնական արժույթ, որն օրինական վճարամիջոց է այդ անդամ պետություններում |
| **Պարտավորությունների չկատարման դեպք** | նշանակում է Շրջանակային համաձայնագրի 16.1 կետում (*Պարտավորությունների չկատարման դեպքերը)* սահմանված որեւէ դեպք կամ հանգամանք |
| **Վերջնական ամսաթիվ** | ունի Շրջանակային համաձայնագրի 3-րդ կետում *(Շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետը)* այդ եզրույթին տրված իմաստը |
| **Ֆինանսական պայմանների մասով առաջարկ** | նշանակում է էապես Շրջանակային համաձայնագրի 4-րդ հավելվածի (*Վարկի հասանելիության ձեւը)* II մասի *(Ֆինանսական պայմանների մասով առաջարկի ձեւը)* սահմանված ձեւն ունեցող առաջարկ |
| **Ֆինանսական պարտք** | նշանակում է ցանկացած ֆինանսական պարտք՝ կապված հետեւյալի հետ.<br>գ) կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ փոխառված ցանկացած գումար.<br>դ) պարտատոմսերի, մուրհակների, առեւտրային փաստաթղթերի կամ որեւէ այլ համանման գործիքների թողարկմամբ ստացված ցանկացած գումար. |

| | |
|---|---|
| | ե) փոխառության առեւտրային ազդեցություն ունեցող ցանկացած այլ գործարքի (այդ թվում՝ առքուվաճառքի ֆորվարդային պայմանագրի, հասարակ մուրհակների կամ դեբիտորական պարտքերի հետ կապված գործողությունների, ֆակտորինգի) արդյունքում ստացված ցանկացած գումար.<br><br>զ) ցանկացած դրույքաչափի կամ գնի տատանումներից պաշտպանության կամ դրանցից օգուտ ստանալու մասով կնքված ցանկացած ածանցյալ գործարք (եւ ցանկացած ածանցյալ գործարքի արժեքը հաշվարկելիս հաշվի է առնվում միայն դրա ընթացիկ շուկայական արժեքը (կամ եթե այդ ածանցյալ գործարքի դադարեցման կամ ավարտի արդյունքում առկա է վճարման ենթակա որեւէ փաստացի գումար, ապա այդ գումարը)), կամ<br><br>է) ցանկացած երաշխիքի, փոխհատուցման կամ այլ պարտավորության առնչությամբ ցանկացած պարտավորության գումար |
| **Ֆինանսական պատժամիջոցների ցանկ** | նշանակում է այն անձանց, խմբերի կամ մարմինների ցանկ(եր)ը, որոնց նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ (կամ) Ֆրանսիայի կողմից կիրառվում են ֆինանսական պատժամիջոցներ:<br><br>Միայն տեղեկատվական նպատակներով եւ Վարկառուի համար հարմարավետության համար տրամադրվում են հետեւյալ հղումները կամ կայքերի հասցեները.<br><br>**Այն ցանկերի համար, որոնք վարում է Միավորված ազգերի կազմակերպությունը,** կարելի է այցելել հետեւյալ կայքը.<br><br>https://www.un.org/securitvcouncil/fr/content/un-sc-consolidated-list<br><br>**Այն ցանկերի համար, որոնք վարում է Եվրոպական միությունը,** կարելի է այցելել հետեւյալ կայքը.<br><br>https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/8442/consolidated-list-sanctions_en<br><br>**Այն ցանկերի համար, որոնք վարում է Ֆրանսիան,** կարելի է այցելել հետեւյալ կայքը.<br><br>https://www.tresor.economie.eouv.fr/servic.es-aux-entreprises/sanctions-economiques/dispositif-national-de-gel-des-avoirs |
| **Ֆինանսավորման փաստաթղթեր** | նշանակում է Շրջանակային համաձայնագիրը եւ յուրաքանչյուր Վարկ, Վարկային հայտ, Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկ, Վարկի հաստատում, ինչպես նաեւ դրանց առնչությամբ եւ Կողմերի կողմից որպես այդպիսին սահմանված ցանկացած այլ փաստաթուղթ |
| **Ֆինանսավորման պլան** | նշանակում է Վարկի հաստատման ժամանակացույցում նշված Ծրագրի բաղադրիչի ֆինանսավորման պլանը |
| **Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափ** | նշանակում է Վարկի հաստատման մեջ նշված տոկոսը |
| **Շրջանակային համաձայնագիր** | նշանակում է Վարկառուի եւ ՀՖԳ-ի միջեւ կնքված չհաստատված |

| | |
|---|---|
| | վարկային գիծ տրամադրելու մասին շրջանակային համաձայնագիրը, այդ թվում՝ դրա ներածական մասը, հավելվածները եւ կիրառելիության դեպքում՝ դրանցում գրավոր կատարված ցանկացած Փոփոխություն |
| **Խարդախություն** | նշանակում է ցանկացած անբարեխիղճ գործելակերպ (գործողություն կամ անգործություն), որը միտումնավոր կերպով նպատակադրված է այլոց մոլորության մեջ գցելու, նրանցից դիտավորյալ կերպով տարրեր թաքցնելու կամ իր համաձայնությանն անհավատարիմ մնալու կամ այն անվավեր դարձնելու, ցանկացած իրավական կամ նորմատիվ պահանջ շրջանցելու եւ (կամ) Վարկառուի կամ երրորդ կողմի ներքին կանոններն ու ընթացակարգերը խախտելու համար՝ անօրինական օգուտ ստանալու նպատակով |
| **Եվրոպական միության ֆինանսական շահերի դեմ ուղղված խարդախություն** | նշանակում է ցանկացած դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որի նպատակն է վնաս հասցնել Եվրոպական միության բյուջեին, եւ ներառում է հետեւյալը. i) կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի հաշվետվություններ կամ փաստաթղթեր օգտագործելը կամ ներկայացնելը, ինչը հանգեցնում է ֆինանսական միջոցների յուրացման կամ անօրինական պահման կամ Եվրոպական միության ընդհանուր բյուջեի միջոցների ցանկացած այլ անօրինական նվազեցման, ii) տեղեկություններ չբացահայտելը՝ նույն հետեւանքների առաջացմամբ, եւ iii) այդ ֆինանսական միջոցները դրանք սկզբնապես տրամադրելու նպատակներից բացի այլ նպատակներով յուրացնելը |
| **Արտոնյալ ժամկետ** | նշանակում է Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից մինչեւ Վարկի մայր գումարի առաջին մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Այս ժամկետը Սյունիքի վարկի եւ առաջին «WISE» վարկի համար 6 տարի է |
| **Ապօրինի ծագում** | նշանակում է ֆինանսական միջոցներ, որոնք ստացվել են՝<br><br>ա) ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականների բառարանում *«Իրավախախտումների սահմանված կատեգորիաներ»-ի* ներքո սահմանված որեւէ հիմնական իրավախախտում կատարելու միջոցով ([http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF](http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF) Recommendations, pdfl.<br><br>բ) ցանկացած կոռուպցիոն արարքի միջոցով, կամ<br><br>գ) Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի դեմ ուղղված ցանկացած խարդախության միջոցով, եթե կամ երբ դա կիրառելի է |
| **Իրականացնող մարմին** | նշանակում է Վարկառուի անունից Ծրագրի բաղադրիչի իրականացման համար պատասխանատու եւ այդ նպատակով պատշաճ կերպով նշանակված գրասենյակը, ինչպես նշված է Վարկային հայտում |
| **Ինդեքսային դրույքաչափ** | նշանակում է TEC 10 օրական ինդեքս՝ տասնամյա անփոփոխ մարման դրույքաչափ, որը ցուցադրվում է յուրաքանչյուր օր Տեղեկատու ֆինանսական հաստատության գնանշման համապատասխան էջում, կամ ցանկացած այլ ինդեքս, որը կարող է Փոխարինել TEC 10 օրական ինդեքսին: Վարկի հաստատման |

| | |
|---|---|
| | ստորագրման պահին ինդեքսային դրույքաչափը նշված է Վարկի հաստատման մեջ |
| **Ապահովագրական պոլիսներ** | նշանակում է այն ապահովագրական պոլիսները, որոնց Վարկառուն պարտավոր է բաժանորդագրվել եւ դրանք պահպանել Ծրագրի բաղադրիչի իրականացման առնչությամբ՝ Վարկատուի համար ընդունելի ձեւով |
| **Տոկոսների հաշվարկման ժամանակահատված (ժամանակահատվածներ)** | նշանակում է Վճարման ամսաթվից (բացառությամբ) մինչեւ հաջորդ Վճարման ամսաթիվը (ներառյալ) ընկած յուրաքանչյուր ժամանակահատված: Համապատասխան Վարկով իրականացվող յուրաքանչյուր Մասհանման դեպքում տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածի մեկնարկը Մասհանման ամսաթիվն է (բացառությամբ), իսկ ավարտը՝ հաջորդ հերթական Վճարման ամսաթիվը (ներառյալ) |
| **Տոկոսադրույք** | նշանակում է տոկոսադրույք, որն արտահայտված է տոկոսային հարաբերակցության ձեւով եւ սահմանվում է Շրջանակային համաձայնագրի 7.1 կետին *(Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույք)* համապատասխան |
| **Թույլատրելի սահմանաչափ** | Սյունիքի բաղադրիչի 30 000 000 եվրոյի չափով վարկի հաստատման համար նշանակում է տարեկան մեկ ամբողջ քսան տոկոս (1,20%):<br><br>«WISE» բաղադրիչի 30 000 000 եվրոյի չափով առաջին տրանշի մասով վարկի հաստատման համար նշանակում է տարեկան մեկ ամբողջ քսան տոկոս (1,20%):<br><br>«WISE» բաղադրիչի երկրորդ տրանշի մասով վարկի հաստատման համար նշանակում է Վարկի հաստատման մեջ նշված դրույքաչափը |
| **Շուկայի ապակայունացման դեպք** | նշանակում է հետեւյալ դեպքերից որեւէ մեկի առաջանալը.<br><br>ա) Բրյուսելի ժամանակով ժամը 11:00-ին Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ կամ Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ Եվրոպական դրամական շուկաների ինստիտուտի (ԵԴՇԻ) կամ որեւէ իրավահաջորդ կառավարչի կողմից չի սահմանվել ԵՎՐԻԲՈՐ-ը. կամ<br><br>բ) Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ կամ Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ՝ մինչեւ եվրոպական միջբանկային շուկայի աշխատանքային օրվա ավարտը, Վարկառուն Վարկատուից ստանում է ծանուցում առ այն, որ i) համապատասխան միջբանկային շուկայում համարժեք միջոցների ձեռքբերման՝ Վարկատուին վճարման ենթակա արժեքը Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում կգերազանցի ԵՎՐԻԲՈՐ-ը. կամ ii) համապատասխան միջբանկային շուկայում գործունեության բնականոն ընթացքում այն չի կարող կամ չի կարողանալու ձեռք բերել համարժեք միջոցներ՝ համապատասխան ժամանակահատվածում համապատասխան Մասհանման ֆինանսավորումն ապահովելու համար |

| | |
|---|---|
| **Էական բացասական ազդեցության** | նշանակում է էական եւ բացասական ազդեցություն՝<br><br>ա) Ծրագրի համապատասխան բաղադրիչի վրա այնքանով, որքանով այն կվտանգի Ֆինանսական փաստաթղթերի եւ (կամ) Ծրագրի փաստաթղթերի համապատասխան դրա իրականացումը եւ կատարումը.<br><br>բ) Վարկառուի ձեռնարկատիրական գործունեության, ակտիվների, ֆինանսական դրության կամ Ֆինանսական փաստաթղթերով ու Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները կատարելու կարողության վրա.<br><br>գ) ցանկացած Ֆինանսական փաստաթղթի եւ Ծրագրի փաստաթղթի վավերության կամ կատարման ենթակա լինելու վրա. կամ<br><br>դ) Վարկատուի՝ ցանկացած Ֆինանսական փաստաթղթով սահմանված ցանկացած իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի վրա |
| **ՁՖԳ-ի ֆինանսական միջոցների կամ ակտիվների ոչ նպատակային օգտագործում** | նշանակում է Վարկատուին պատկանող ռեսուրսների, գույքի կամ ակտիվների՝ պահանջներին ոչ համապատասխան, ոչ պատշաճ օգտագործում եւ (կամ) չարաշահում, որը կատարվել է գիտակցաբար, անփութորեն կամ անզգուշությամբ |
| **Փողերի լվացում** | նշանակում է՝<br><br>i) այնպիսի ծանր հանցագործություն կամ զանցանք կատարած անձի ակտիվների կամ եկամուտների ծագման կեղծ հիմնավորմանը ցանկացած միջոցով նպաստելու արարք, որը նրան ուղղակի կամ անուղղակի օգուտ է բերել, կամ<br><br>ii) ծանր հանցագործությունից կամ հանցանքից ստացված ուղղակի կամ անուղղակի եկամուտներում ներդրումներ կատարելուն աջակցելու, դրանք թաքցնելու կամ փոխակերպելու գործողություն |
| **Ոչ համագործակցային գործելակերպեր** | նշանակում է՝<br><br>i) քննությունն էականորեն խոչընդոտելու նպատակով այնպիսի ապացույցներ կամ այլ տեղեկություններ, փաստաթղթեր կամ գրառումներ ոչնչացնելու, կեղծելու, փոփոխելու, թաքցնելու կամ անհիմն կերպով պահելու գործողություն, որոնք պետք է բացահայտվեն Արգելված գործելակերպերի վերաբերյալ պնդման հետ կապված Վարկատուի կողմից իրականացվող քննության առնչությամբ, կամ սուտ ցուցմունքներ տալու գործողություն՝ Արգելված գործելակերպերի վերաբերյալ պնդման քննությունն էականորեն խոչընդոտելու նպատակով, կամ<br><br>ii) որեւէ կողմի սպառնալու, նրա նկատմամբ<br><br>ոտնձգություն կատարելու կամ նրան ահաբեկելու գործողությունը՝ Վարկատուի կողմից իրականացվող քննության վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը կամ քննության շարունակումը թույլ չտալու նպատակով, կամ<br><br>iii) ցանկացած գործողություն, որն իրականացվում է՝ նպատակ ունենալով էականորեն խոչընդոտել Արգելված գործելակերպերի վերաբերյալ պնդման վրա հիմնված քննության համատեքստում |

| | |
|---|---|
| | Վարկատուի՝ աուդիտ, տեսչական ստուգումներ անցկացնելու կամ տեղեկություններին հասանելիություն ունենալու պայմանագրային իրավունքները վերջինիս կողմից իրականացնելը |
| **Մայր գումարի չմարված մնացորդ** | նշանակում է ցանկացած Մասհանման առնչությամբ այդ Մասհանման մասով Վարկառուի կողմից վճարման ենթակա մայր գումարի չմարված մնացորդի գումարը |
| **Վճարման ամսաթվեր** | նշանակում է այն վճարման ամսաթվերը, որոնք նշված են 4-րդ հավելվածում (Վարկի հասանելիության ձեւը) |
| **Վճարային համակարգերի խափանման դեպք** | նշանակում է ստորեւ նշվածներից որեւէ մեկը կամ երկուսն էլ.<br><br>ա) վճարային կամ հաղորդակցական համակարգերի կամ ֆինանսական շուկաների գործունեության էական խափանում, որոնցից յուրաքանչյուր դեպքում պահանջվում է գործել Վարկի մասով վճարումները կատարելու համար (կամ այլ կերպ՝ Ֆինանսավորման փաստաթղթերով նախատեսված գործարքներն իրականացնելու համար)՝ պայմանով, որ խափանումը չի պատճառվում Կողմերից որեւէ մեկի կողմից, կամ այն Կողմերի վերահսկողությունից դուրս է. կամ<br><br>բ) որեւէ այլ դեպքի առաջացում, որի հետեւանքով տեղի է ունենում Կողմի գանձապետական կամ վճարային գործառնությունների իրականացման խափանում (տեխնիկական կամ համակարգային բնույթի), ինչը թույլ չի տալիս, որ այդ Կողմը կամ որեւէ այլ Կողմ՝<br><br>i) կատարի Ֆինանսական փաստաթղթերով սահմանված իր վճարային պարտավորությունները, կամ<br><br>ii) հաղորդակցվի մյուս Կողմերի հետ՝ Ֆինանսական փաստաթղթերի պայմաններին համապատասխան,<br><br>եւ որը (երկու դեպքում էլ) չի պատճառվում Կողմերից որեւէ մեկի կողմից եւ նրա վերահսկողությունից դուրս է |
| **Կանխավճարի փոխհատուցում** | նշանակում է փոխհատուցում, որը հաշվարկվում է՝ Վարկի կամ Վարկերի նախապես մարվող գումարին ավելացնելով ստորեւ նշված տոկոսները.<br><br>i) եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի եւ Ստորագրման ամսաթվից 6-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ երեք տոկոս (3%).<br><br>ii) եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվից 6-րդ տարվա (ներառյալ) եւ 10-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ երկու ամբողջ հինգ տոկոս (2.5%).<br><br>iii) եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի 10-րդ տարվա (ներառյալ) եւ 15-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ երկու տոկոս (2%).<br><br>iv) եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի 5-րդ տարվա (ներառյալ) եւ 18-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ մեկ ամբողջ հինգ տոկոս (1.5%).<br><br>v) եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի 18-րդ |

| | |
|---|---|
| | տարին (ներառյալ) լրանալուց հետո՝ մեկ տոկոս (1%) |
| **Գնումների ուղեցույց** | նշանակում է Ստորագրման ամսաթվի դրությամբ գործող, Վարկատուի կայքում հասանելի «Օտարերկրյա պետություններում ՁՖԳ-ի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի գնումների ուղեցույց» վերտառությամբ փաստաթղթում պարունակվող պայմանագրային դրույթները |
| **Արգելված գործելակերպ (գործելակերպեր)** | նշանակում է Հակամրցակցային գործելակերպեր, Կոռուպցիոն արարքներ, Խարդախություն, Եվրոպական միության ֆինանսական շահերի դեմ ուղղված խարդախություն, Ոչ համագործակցային գործելակերպեր, ՁՖԳ-ի ֆինանսական միջոցների կամ ակտիվների ոչ նպատակային օգտագործում, ինչպես նաեւ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ցանկացած օրենքի ցանկացած խախտում |
| **Ծրագիր** | ունի Շրջանակային համաձայնագրի ներածական մասում այդ եզրույթին տրված իմաստը |
| **Ծրագրի թույլտվությունները** | նշանակում է այն Թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են, որ i) Վարկառուն իրականացնի Ծրագրի բաղադրիչը եւ ստորագրի Ծրագրի բոլոր փաստաթղթերը, որոնց կողմ է ինքը, եւ իրականացնի Ծրագրի այն փաստաթղթերով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները, որոնց կողմ է ինքը, եւ ii) Ծրագրի այն փաստաթղթերը, որոնց կողմ է Վարկառուն, ընդունելի լինեն Վարկառուի իրավազորության ներքո գտնվող դատարաններում կամ իրավասու արբիտրաժային տրիբունալում որպես ապացույց |
| **Ծրագրի բաղադրիչ** | նշանակում է Վարկի շրջանակներում ֆինանսավորվող կամ ֆինանսավորման ենթակա Ծրագրի ցանկացած մաս կամ Բաղադրիչ, որի ֆինանսավորման համար Վարկառուն խնդրում է Վարկատուին իրեն Վարկ տրամադրել, եւ ինչպես նկարագրված է կիրառելի Վարկի հաստատման հավելվածում |
| **Ծրագրի փաստաթղթեր** | նշանակում է բոլոր փաստաթղթերը եւ մասնավորապես՝ համաձայնագրերը (ներառյալ Ծրագրի գործառնական ձեռնարկը), որոնք Վարկառուի կողմից տրամադրվել կամ կնքվել են Ծրագրի համապատասխան բաղադրիչի իրականացման առնչությամբ, ինչպես սահմանված է Համաֆինանսավորողի փոխառության համաձայնագրում եւ (կամ) թվարկված է Վարկային հայտում |
| **Ծրագրի բաղադրիչի հաշիվ** | ունի Շրջանակային համաձայնագրի 6.4.1 կետում *(Յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի բացումը)* այդ եզրույթին տրված իմաստը |
| **Ծրագրի գործառնական ձեռնարկ** | նշանակում է Համաֆինանսավորողի եւ ՁՖԳ-ի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ ձեռնարկ, որում պարունակվում են Ծրագրի իրականացման մանրամասն ուղեցույց եւ ընթացակարգեր |
| **Ծառայություն մատուցող (մատուցողներ)** | նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պայմանագիր է ստորագրել Վարկառուի կամ Իրականացնող մարմնի հետ, որը կարող է ներառել մատակարար, |

| | |
|---|---|
| | աշխատանքային ընկերություն կամ կապալառու, խորհրդատու կամ ծառայություն մատուցող |
| **Ծառայություն մատուցողի երաշխիք (երաշխիքներ)** | նշանակում է ցանկացած երաշխիք, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվում է Վարկառուին նրա ցանկացած մատակարարի կողմից, որը պատասխանատու է Ծրագրի կամ դրա որեւէ մասի իրականացման նպատակով կնքված պայմանագրերի կատարման համար, ինչպես օրինակ՝ կատարման ապահովումը կամ կանխավճարի ապահովումը |
| **Պետական պաշտոնյա** | նշանակում է օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ՝ նշանակված կամ ընտրված, որը գործում է մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կամ այլ կերպ եւ վարձատրվում է կամ չի վարձատրվում՝ անկախ կոչումից, կամ ցանկացած այլ անձ, որը սահմանված է որպես պետական պաշտոնյա՝ Վարկառուի երկրի ներպետական իրավունքի համաձայն, եւ պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ, այդ թվում՝ պետական գործակալության կամ կազմակերպության համար, կամ պետական ծառայություն մատուցող ցանկացած այլ անձ |
| **Դրույքաչափի փոխարկում** | նշանակում է ամբողջ Վարկի կամ դրա մի մասի նկատմամբ կիրառելի Լողացող դրույքաչափի փոխարկումը Ֆիքսված դրույքաչափի՝ համաձայն Շրջանակային համաձայնագրի 7.1 կետի (*Յուրաքանչյուր Վարկի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը*): |
| **Դրույքաչափի փոխարկման հայտ** | նշանակում է էապես որպես Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածի *(Վարկի շրջանակներում մասհանումների ձեւերը)* III մաս *(Դրույքաչափի փոխարկման հայտի ձեւը)* կցված ձեւն ունեցող հայտ |
| **Դրույքաչափի սահմանման ամսաթիվ** | յուրաքանչյուր Ֆիքսված տոկոսադրույքով Մասհանման կամ Դրույքաչափի փոխարկման համար՝ Վարկատուի կողմից Մասհանման հայտ կամ Դրույքաչափի փոխարկման հայտ ստանալու ամսաթվին հաջորդող երեքշաբթին կամ հինգշաբթին (կամ եթե այդ ամսաթիվը Բանկային օր չէ, ապա անմիջապես հաջորդող Բանկային օրը)՝ պայմանով, որ այդ հայտը Վարկատուն ստանա հիշյալ երեքշաբթիից կամ հինգշաբթիից առնվազն երկու (2) լրիվ Բանկային օր առաջ |
| **Վավերացում** | նշանակում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Շրջանակային համաձայնագրի վավերացման մասին, որը պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար |
| **Տեղեկատու ֆինանսական հաստատություն** | նշանակում է ֆինանսական հաստատություն, որը Վարկատուի կողմից ընտրվել է որպես համապատասխան տեղեկատու ֆինանսական հաստատություն, եւ որը պարբերաբար հրապարակում է ֆինանսական գործիքների գնանշումներ ֆինանսական տեղեկատվության միջազգային ցանցերից որեւէ մեկում՝ բանկային ոլորտում ընդունված գործելակերպերին համապատասխան |
| **Վերակազմավորում** | նշանակում է պարտքի ցանկացած վերակազմավորում եւ ավելի լայն առումով՝ պարտքի կարգավորման ցանկացած |

| | |
|---|---|
| | գործողություն, որը նախաձեռնվել է եւ (կամ) կազմակերպվել, ընդունվել է այնպիսի պաշտոնական կամ ոչ պաշտոնական շրջանակում, ինչպիսին Փարիզի ակումբն է |
| **Հավելված (հավելվածներ)** | նշանակում է Շրջանակային համաձայնագրի որեւէ հավելված կամ հավելվածներ՝ ըստ կոնկրետ դեպքի |
| **Ստորագրման ամսաթիվ** | նշանակում է բոլոր Կողմերի կողմից Շրջանակային համաձայնագիրը կնքելու ամսաթիվը |
| **Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթիվ** | նշանակում է Վարկի հաստատման մեջ նշված ամսաթիվը |
| **Սյունիքի բաղադրիչ** | նշանակում է Ծրագրի Սյունիքի բաղադրիչը, ինչպես նկարագրված է Շրջանակային համաձայնագրի 1-ին հավելվածում *(Ծրագրի նկարագրությունը)* |
| **Սյունիքի մասով վարկ** | նշանակում է Վարկ, որի նպատակը Սյունիքի բաղադրիչը ֆինանսավորելն է, ինչպես նշված է համապատասխան Վարկային հայտում եւ Վարկի հաստատման մեջ |
| **Սյունիքի Ղեկավար կոմիտե** | նշանակում է Սյունիքի բաղադրիչի եւ Եվրոպական միության կազմից տրամադրվող դրամաշնորհի կառավարման համար ստեղծված ղեկավար կոմիտե, որը պատասխանատու կլինի բարձր մակարդակի ռազմավարական որոշումների կայացման, միջգերատեսչական համագործակցության եւ համակարգման խթանման, ինչպես նաեւ Սյունիքի բաղադրիչի ընդհանուր առաջընթացի, ինչպես նաեւ «WISE» եւ Սյունիքի բաղադրիչների տեխնիկական աջակցության ծրագրի վերահսկման եւ մոնիթորինգի համար |
| **Սյունիքի տարածքային զարգացման կոմիտե** | նշանակում է Սյունիքի բաղադրիչի ազդեցության տակ գտնվող տարածքների բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից կազմված կոմիտե: Այն կծառայի որպես տարածաշրջանային խորհրդակցությունների շրջանակ՝ մարզպետարանի մանդատի ներքո, առանց իրավական կառուցվածքի, եւ նախատեսված է շարունակել իր գործունեությունը Ծրագրի ավարտից հետո |
| **Հարկ (Հարկեր)** | նշանակում է ցանկացած հարկ, գանձում, հավաքագրում, տուրք կամ ցանկացած այլ վճարում կամ համանման պահում (այդ թվում՝ վճարման ենթակա ցանկացած տուգանք կամ տոկոս՝ չվճարելու կամ ցանկացած այդպիսի գումարի վճարումը որեւէ կերպ ուշացնելու կապակցությամբ) |
| **Տեխնիկական ավարտի ամսաթիվ** | նշանակում է Ծրագրի բաղադրիչի տեխնիկական ավարտի ամսաթիվը, ինչպես նշված է Վարկային հայտում |
| **Գործողության դադարեցման ամսաթիվ** | ունի 3-րդ կետում *(Շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետը)* այդ եզրույթին տրված իմաստը |
| **Ահաբեկչության ֆինանսավորում** | նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական միջոցների տրամադրում կամ հավաքագրում կամ կառավարում այն մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ իմանալով, որ դրանք պետք է օգտագործվեն Ահաբեկչական գործողություն կատարելու նպատակով |
| **Տեսանելիության եւ** | նշանակում է Վարկառուի համար պարտադիր ուժ ունեցող բոլոր պայմանագրային դրույթները, որոնք վերաբերում են ՀՖԳ-ի |

| | |
|---|---|
| **հաղորդակցության ուղեցույց** | կողմից ֆինանսավորվող ծրագրերի առնչությամբ հաղորդակցությանը եւ դրանց տեսանելիությանը եւ ներառված են համապատասխանաբար «ՀՖԳ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի տեսանելիության ուղեցույց. Մակարդակ 1» կամ «ՀՖԳ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի առնչությամբ հաղորդակցության ուղեցույց. Մակարդակ 2» վերտառությամբ փաստաթղթում, որի օրինակը տրվել է Վարկառուին մինչեւ Ստորագրման ամսաթիվը |
| **Կայք** | նշանակում Ի ՀՖԳ-ի կայքը (http://www.afd.fr/) կամ այդ կայքին փոխարինող ցանկացած այլ կայք |
| **«WISE» բաղադրիչ** | նշանակում է Ծրագրի «WISE» բաղադրիչը, ինչպես նկարագրված է Շրջանակային համաձայնագրի 1-ին հավելվածում *(Ծրագրի նկարագրությունը)* |
| **«WISE» Ղեկավար կոմիտե** | նշանակում է «WISE» բաղադրիչի իրականացման համար ստեղծված ղեկավար կոմիտե, որը՝ ա) նախագահում է Վարկառուի փոխվարչապետը, բ) ներառում է Ֆինանսների նախարարության, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Ջրային կոմիտեի, Էկոնոմիկայի նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության եւ այլ համապատասխան ոլորտային նախարարությունների, պետական գերատեսչությունների, ինչպես նաեւ տեղական եւ տարածաշրջանային մարմինների ներկայացուցիչների՝ ըստ անհրաժեշտության, եւ գ) պատասխանատու է բարձր մակարդակի ռազմավարական որոշումների կայացման, միջգերատեսչական համագործակցության եւ համակարգման խթանման, ինչպես նաեւ «WISE» բաղադրիչի ընդհանուր առաջընթացի վերահսկման եւ մոնիթորինգի համար |
| **Առհանման դիմում** | նշանակում է Համաֆինանսավորողի վարկային համաձայնագրում սահմանված ձեւով հատկացման հայտ |
| **Պահվող հարկ** | նշանակում է Ֆինանսական փաստաթղթերին համապատասխան կամ դրանց հետ կապված ցանկացած վճարման նկատմամբ հաշվարկվող Հարկի մասով ցանկացած նվազեցում կամ պահում |

ՄԱՍ II. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

ա) **«ակտիվներ»-ը** ներառում են ցանկացած տեսակի ներկա եւ ապագա գույք, եկամուտ եւ իրավունք.

բ) **«Վարկառու»-ին, «Կողմ»-ին, «ՀՖԳ»-ին** կամ **«Վարկատու»-ին** կատարվող ցանկացած հղում ներառում է նրա իրավահաջորդներին, այն անձանց, որոնց մասով թույլատրվել է իրավունքների ու պարտավորությունների զիջումն ու փոխանցումը.

գ) որեւէ Ֆինանսական փաստաթղթի կամ այլ փաստաթղթի կամ ապահովման միջոցի կատարվող ցանկացած հղում համարվում է այդ ֆինանսական փաստաթղթին կամ այդպիսի այլ փաստաթղթի կամ ապահովման միջոցի կատարվող հղում՝ փոփոխված, լրամշակված կամ լրացված, եւ կիրառելիության դեպքում ներառում է ցանկացած փաստաթուղթ, որը փոխարինում է դրան պարտավորությունների նորացման միջոցով՝ Ֆինանսական փաստաթղթերին համապատասխան.

դ) **«երաշխիք»-ը** ներառում է ցանկացած ապահովման *միջոց, մուրհակային պարտավորություն* եւ ցանկացած *երաշխիք,* որը կախված չէ այն պարտքից, որին այն վերաբերում է.

ե) **«պարտք»** նշանակում է ցանկացած անձի ցանկացած պարտավորություն (անկախ այն հանգամանքից, թե այդ պարտավորությունը կրում է որպես պրինցիպալ, թե երաշխավոր)՝ կապված գումարի վճարման կամ մարման հետ՝ ներկա, ապագա, փաստացի կամ պայմանական.

զ) **«անձ»-ը** ներառում է ցանկացած անձ, ընկերություն, կորպորացիա, ընկերակցություն, տրաստ, կառավարություն, պետություն կամ պետական գերատեսչություն կամ ցանկացած միավորում կամ վերոնշյալ երկու կամ ավելի սուբյեկտներից կազմված խումբ (անկախ առանձին իրավասուբյեկտություն ունենալու կամ չունենալու հանգամանքից).

է) **«կարգավորում»-ը** ներառում է ցանկացած պետական, միջպետական կամ վերազգային մարմնի, վերահսկող մարմնի, կարգավորող մարմնի, անկախ վարչական մարմնի, գործակալության, ցանկացած այլ մարմնի կամ կազմակերպության վարչության կամ որեւէ բաժնի ցանկացած օրենսդրություն, կարգավորում, կանոն, հրաման, պաշտոնական հրահանգ, հանձնարարական, պահանջով դիմում, խորհուրդ, առաջարկություն, որոշում կամ ուղենիշ (անկախ օրենքի ուժ ունենալու կամ չունենալու հանգամանքից) (այդ թվում՝ արդյունաբերական կամ առեւտրային հանրային մարմնի կողմից ընդունված ցանկացած կարգավորում), որն ազդեցություն ունի ցանկացած Ֆինանսական փաստաթղթի կամ Կողմի իրավունքների եւ պարտավորությունների վրա.

ը) «օրենքի դրույթը» հղում է դրա փոփոխված տարբերակին.

թ) եթե այլ բան նախատեսված չէ, օրվա ժամի համար հղումային ժամը Փարիզի ժամանակն է.

ժ) բաժնի, կետի եւ հավելվածի վերնագրերը նախատեսված են միայն որոնման հարմարավետության համար եւ որեւէ ազդեցություն չունեն որեւէ Ֆինանսական փաստաթղթի մեկնաբանման վրա.

ժա) եթե այլ բան նախատեսված չէ, ապա Շրջանակային համաձայնագրին առնչվող ցանկացած այլ փաստաթղթում կամ Շրջանակային համաձայնագրի առնչությամբ տրված ցանկացած ծանուցման մեջ օգտագործված բառերն ու արտահայտություններն այդ փաստաթղթում կամ ծանուցման մեջ ունեն միեւնույն նշանակությունը, ինչ Շրջանակային համաձայնագրում.

ժբ) Պարտավորությունների չկատարման դեպքը համարվում է «շարունակական», եթե այն չի վերացվել, կամ եթե Վարկատուն չի հրաժարվել դրա հետ կապված իր որեւէ իրավունքից, եւ

ժգ) հոգնակի թիվ ունեցող բառերը ներառում են նաեւ եզակի թիվը եւ հակառակը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ներքոհիշյալները որպես նախապայմաններ կիրառվում են Վարկառուի կողմից տրամադրվող բոլոր փաստաթղթերի նկատմամբ.

ա) եթե տրամադրված փաստաթուղթը բնօրինակը չէ, այլ դրա լուսապատճենն է, ապա Վարկատուին տրամադրվում է պատճենի հաստատված բնօրինակը,

բ) հիմնավորող փաստաթղթերը, ինչպիսիք են հուշագրերը կամ հաստատված հաշիվ-վավերագրերը, կարող են տրամադրվել Վարկատուի կամ Իրականացնող մարմնի կողմից որպես իսկական պատճեններ վավերացված պատճենների կամ կրկնօրինակների տեսքով եւ ներառում են վճարման հանձնարարականների հղումներն ու ամսաթվերը,

գ) այն փաստաթղթի վերջնական տարբերակը, որի նախագիծը նախկինում ուղարկվել է Վարկատուին եւ համաձայնեցվել է նրա հետ, էապես չի տարբերվում համաձայնեցված նախագծից,

դ) նախկինում չուղարկված եւ չհամաձայնեցված փաստաթղթերը Վարկատուի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ են:

### Ա. ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՄԱՍ I. Շրջանակային համաձայնագրի ստորագրման նախապայմանները**

ա) Վարկառուի կողմից Վարկատուին հետեւյալ փաստաթղթերի տրամադրում.

*i)* Վարկառուի պետության օրենսդրության համաձայն կայացված համապատասխան որոշման (որոշումների) հաստատված օրինակ, որով՝

- հաստատվում են Շրջանակային համաձայնագրի պայմանները.

- հաստատվում է Շրջանակային համաձայնագրի եւ Շրջանակային համաձայնագրին վերաբերող բոլոր մյուս փաստաթղթերի կնքումը, ինչպիսիք են մասնավորապես Վարկի հաստատումները.

- Վարկառուն լիազորվում է կնքելու Շրջանակային համաձայնագիրը եւ Շրջանակային համաձայնագրին վերաբերող բոլոր մյուս անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաեւ փոխառելու ցանկացած գումար այն Վարկերի շրջանակներում, որոնք ԶՖԳ-ն, Շրջանակային համաձայնագրի համաձայն, կարող է համաձայնել տրամադրելու Վարկառուին. եւ

- կոնկրետ անձ կամ անձինք լիազորվում են իրենց անունից կնքելու Շրջանակային համաձանագիրը:

ii) Վարկառուի անունից Շրջանակային համաձայնագիրը ստորագրելու համար նշված անձանց տրված լիազորագրի վավերացված պատճեն դրա վավերացված թարգմանության հետ միասին.

iii) Վարկառուի պատշաճ լիազորված ներկայացուցչի կողմից տրամադրված հավաստագիր, որում նշվում է (են) այն անձը (անձինք), որը (որոնք) լիազորված է (են) Վարկառուի անունից ստորագրելու Վարկի հայտերը, Ֆինանսական պայմանների մասին ծանուցումները, Վարկի հաստատումները եւ Շրջանակային համաձայնագրի առնչությամբ ցանկացած հավաստագիր կամ ձեռնարկելու ցանկացած այլ միջոցառում եւ (կամ) Վարկառուի անունից Ֆինանսական փաստաթղթերի շրջանակներում ստորագրելու բոլոր մյուս անհրաժեշտ փաստաթղթերը (ինչպիսիք են, ըստ կոնկրետ դեպքի, Մասհանման հայտերը).

iv) վերոնշյալ «i»-ից «iii» պարբերություններում նշված յուրաքանչյուր անձի ստորագրության նմուշ.

v) Վարկատուի իրավախորհրդատուի կողմից կազմված՝ ձեւի եւ բովանդակության առումով ԶՖԳ-ի համար ընդունելի իրավաբանական կարծիքի

վերջնական նախագիծ, որով հաստատվում է i*)* Վարկառուի՝ Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի հաստատումն ստորագրելու իրավունակությունը եւ դրանց հետ կապված պարտավորությունների կատարումը, ii) Շրջանակային համաձայնագրի եւ Վարկի հաստատման նկատմամբ Ֆրանսիայի օրենսդրության կիրառելիությունը, եւ iii) Շրջանակային համաձայնագրի կամ Վարկի հաստատման կատարման ընթացքում ծագած վեճի շրջանակներում արբիտրաժային դատարանի կողմից կայացված արբիտրաժային որոշման կատարման ենթակա լինելը **(Իրավաբանական կարծիք):**

բ) Եվրոպական միության եւ ՁՖԳ-ի կողմից ծրագրին առնչվող դրամաշնորհի տրամադրումը Եվրոպական պատվիրակված միջոցներից:

**ՄԱՍ II. Յուրաքանչյուր Վարկի հաստատման ստորագրման նախապայմանները**

Վարկառուի կողմից Վարկատուին հետեւյալ փաստաթղթերի տրամադրում.

*i)* ի կատարումն Վարկառուի երկրի օրենսդրության՝ պահանջվող որոշումների վավերացված պատճեն, որով Վարկառուն լիազորվում է փոխառելու ցանկացած գումար այն Վարկի շրջանակներում, որը ՁՖԳ-ն, Շրջանակային համաձայնագրի դրույթների համաձայն, կարող է տրամադրել, կամ որպես այլընտրանք՝ Վարկառուի պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից տրված վկայական, որը հստակորեն հաստատում է, որ Վարկառուի երկրի օրենսդրությամբ այս նպատակով որոշումներ չեն պահանջվում.

ii) Էապես սույն 3-րդ հավելվածի (*Նախապայմանները*) I մասի «v» կետի համաձայն ներկայացված նախագծի ձեւն ունեցող Իրավաբանական կարծիքի նախագիծ այն դեպքում, երբ այդ նախագծում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն լինի.

iii) ապացույց առ այն, որ Վարկով չի խախտվելու փոխառության որեւէ սահմանաչափ կամ որեւէ այլ համանման սահմանաչափ, որը պարտադիր է Վարկառուի համար.

iv) սույն հավելվածի I մասի «ա» կետի «i»-ից «iv» ենթակետերում նշված փաստաթղթերի թարմացված տարբերակներ, եթե Շրջանակային համաձայնագրի ստորագրումից հետո լիազորված ստորագրող անձանցից որեւէ մեկը փոփոխվել է:

v) Վարկառուի պատշաճ լիազորված ներկայացուցչի կողմից տրված վկայագիր, որը հաստատում է, որ Վարկառուի երկրի օրենսդրությամբ սահմանված բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են Վարկ վերցնելու համար, որը ՀՖԳ-ն կարող է տրամադրել Շրջանակային համաձայնագրի դրույթներին համապատասխան, բավարարված են, եւ որը հաստատում է, թե որ պետական մարմինն ու պաշտոնատար անձն են լիազորված ստորագրելու փաստաթղթերը, որոնք նշված են I մասի (ա)(iii) կետում՝ Վարկառուի երկրի՝ տվյալ ժամանակ գործող օրենսդրությանը համապատասխան:

## ՄԱՍ III ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա) <u>Սյունիքի համար նախատեսված Վարկի շրջանակներում առաջին Մասհանումը</u>

1. Վարկառուի կողմից Վարկատուին հետեւյալ փաստաթղթերի տրամադրում.

i) Ֆինանսական փաստաթղթերի ներկայացման կամ գրանցման, ի պահ հանձնման, վավերացման կամ հրապարակման ցանկացած պահանջի եւ Ֆինանսական փաստաթղթերի հետ կապված ցանկացած դրոշմատուրքի, գրանցման վճարների կամ համանման տուրքերի վճարման մասին ապացույց՝ ըստ կիրառելիության:

ii) Արտաքին գործերի նախարարության գրավոր ծանուցում, որը հաստատում է Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերի ավարտը:

iii) Ծրագրի հետեւյալ փաստաթղթերը՝

- Ծրագրի գործառնական եւ ֆինանսական ձեռնարկ եւ Ծրագրի շրջանակներում թվարկված փաստաթղթերի համար Ծրագրի փաստաթղթի՝ այդ փաստաթղթի կողմ հանդիսացող կողմերից յուրաքանչյուրի պատշաճ կերպով ստորագրած՝ վավերացված պատճեն.

- ապացույց առ այն, որ այդպիսի Ծրագրի փաստաթղթի կնքման, կատարման եւ երրորդ կողմերի համար կատարման ենթակա լինելու համար Ծրագրի փաստաթղթով պահանջվող բոլոր ձեւական պահանջները կատարվել են. եւ

- ապացույց առ այն, որ Ծրագրի փաստաթղթի կնքման եւ կատարման, ինչպես նաեւ այդ փաստաթղթերով նախատեսված գործարքների համար Վարկատուի կողմից անհրաժեշտ կամ նախընտրելի համարվող ցանկացած Թույլտվություն պատշաճ կերպով ձեռք է բերվել, ինչպես նաեւ այդպիսի Թույլտվության վավերացված պատճենի տրամադրում:

iv) Գնումների ձեռնարկներով սահմանված Գնումների պլան, որը նախապես արժանացել է Վարկատուի հավանությանը:

v) Վարկառուի կողմից Իրականացնող մարմնին շնորհված մանդատի վավերացված պատճեն, որն արժանացել է Վարկատուի հավանությանը՝ պատշաճ կերպով ստորագրված Վարկառուի եւ Իրականացնող մարմնի կողմից եւ անհրաժեշտության դեպքում՝ ուղեկցվող ապացույցով առ այն, որ դրա կնքման, կատարման եւ երրորդ կողմերի համար կատարման ենթակա լինելու համար անհրաժեշտ բոլոր ձեւական պահանջները կատարվել են:

vi) Հաշվի բանկի կողմից տրված վկայական, որը հավաստում է, որ համապատասխան Ծրագրի բաղադրիչի հաշիվը բացվել է Ծրագրի բաղադրիչի անվանմամբ եւ պարունակում է Ծրագրի բաղադրիչի այդպիսի հաշվի մանրամասները:

vii) Ծրագրի բաղադրիչի տեւողության համար ծախսերի նախնական կանխատեսում:

2. Վարկատուին պատշաճ կերպով կազմված Իրավաբանական կարծիքի տրամադրում՝ I մասի «v» կամ II մասի «ii» կետերի համաձայն տրված նախագծի ձեւով, որը բավարար է Վարկատուի համար եւ ըստ կիրառելիության՝ կարող է կազմված լինել Վարկատուի իրավախորհրդատուների կողմից՝ Վարկառուի երկրում:

3. ՀՀ արդարադատության նախարարության կողմից Վարկատուին պատշաճ կերպով կնքված իրավաբանական եզրակացության տրամադրում՝ Վարկատուի համար բավարար ձեւով եւ բովանդակությամբ, որը մասնավորապես հաստատում է՝ *i)* Վարկառուի կարողությունը՝ ստորագրելու եւ կնքելու Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումը, ii) որ Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումը վավեր են եւ պարտադիր են Վարկառուի համար, iii) Ֆրանսիայի իրավունքի կիրառելիությունը՝ Շրջանակային համաձայնագրի եւ Վարկի համապատասխան հաստատման համար, եւ Ֆինանսավորման փաստաթղթերից բխող վեճի կապակցությամբ կայացված արբիտրաժային որոշումների կատարման ապահովման հնարավորությունը, եւ iv) Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության բոլոր ներքին ընթացակարգերի ավարտը:

4. Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերի համաձայն վճարման ենթակա բոլոր վճարների եւ ծախսերի վճարում Վարկատուին:

5. Ապացույց՝ Սյունիքի տարածքային զարգացման կոմիտեի նշանակման վերաբերյալ:

6. Ապացույց՝ Սյունիքի Ղեկավար կոմիտեի նշանակման վերաբերյալ:

7. Գետերի ջրերի մասով միջսահմանային համագործակցության հարցի բավարար հաշվառում՝ գործող միջազգային չափորոշիչների լույսի ներքո (հայեցակարգային գրությունն արժանացել է ՁՖԳ-ի հավանությանը):

բ) <u>«WISE» բաղադրիչի մասով Վարկի շրջանակներում առաջին Մասհանումը</u>

1. Վարկառուի կողմից Վարկատուին հետեւյալ փաստաթղթերի տրամադրում.

i) Ֆինանսական փաստաթղթերի ներկայացման կամ գրանցման, ի պահ հանձնման, վավերացման կամ հրապարակման ցանկացած պահանջի եւ Ֆինանսական փաստաթղթերի հետ կապված ցանկացած դրոշմատուրքի, գրանցման վճարների կամ համանման տուրքերի վճարման մասին ապացույց՝ ըստ կիրառելիության:

ii) Արտաքին գործերի նախարարության գրավոր ծանուցում, որը հաստատում է Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերի ավարտը:

iii) ՀՖԳ-ի եւ Համաշխարհային բանկի միջեւ Համաֆինանսավորման համաձայնագրի ստորագրում:

iv) Գնումների ձեռնարկներով սահմանված Գնումների պլան, որը նախապես արժանացել է Վարկատուի հավանությանը:

v) Փաստաթղթեր, որոնք վկայում են, որ Համաֆինանսավորողների իրավասու մարմինները համաձայնել են երկարաձգել իրենց ֆինանսավորումը Ֆինանսավորման պլանում նշված կարգով, եւ որ այդ ֆինանսավորման մասով առաջին հատկացման նախապայմանները կատարվել են:

vi) Վարկառուի կողմից Իրականացնող մարմնին շնորհված մանդատի վավերացված պատճեն, որն արժանացել է Վարկատուի հավանությանը՝ պատշաճ կերպով ստորագրված Վարկառուի եւ Իրականացնող մարմնի կողմից եւ կիրառելիության դեպքում՝ ուղեկցվող ապացույցով առ այն, որ դրա կնքման, կատարման եւ երրորդ կողմերի համար կատարման ենթակա լինելու համար անհրաժեշտ բոլոր ձեւական պահանջները կատարվել են:

vii) Հաշվի բանկի կողմից տրված վկայական, որը հավաստում է, որ Ծրագրի բաղադրիչի համապատասխան հաշիվը բացվել է Ծրագրի բաղադրիչի անվանմամբ եւ պարունակում է Ծրագրի բաղադրիչի այդպիսի հաշվի մանրամասները:

viii) Ծրագրի բաղադրիչի տեւողության համար ծախսերի նախնական կանխատեսում:

2. Վարկատուին պատշաճ կերպով կազմված Իրավաբանական կարծիքի տրամադրում՝ I մասի «vi» կամ II մասի «ii» կետերի համաձայն տրված նախագծի տեսքով, որը բավարար է Վարկատուի համար եւ ըստ կիրառելիության՝ կարող է կազմված լինել Վարկատուի իրավախորհրդատուների կողմից՝ Վարկառուի երկրում:

3. ՀՀ արդարադատության նախարարության կողմից Վարկատուին պատշաճ կերպով կնքված իրավաբանական եզրակացության տրամադրում՝ Վարկատուի համար բավարար ձեւով եւ բովանդակությամբ, որը մասնավորապես հաստատում է՝ *i)* Վարկառուի կարողությունը՝ ստորագրելու եւ կնքելու Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումը, ii) որ Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումը վավեր են եւ պարտադիր են Վարկառուի համար, եւ iii) Շրջանակային համաձայնագիրը եւ Վարկի համապատասխան հաստատումն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության բոլոր ներքին ընթացակարգերի ավարտը:

4. Վարկառուի կողմից Ֆինանսական փաստաթղթերի համաձայն վճարման ենթակա բոլոր վճարների եւ ծախսերի վճարում Վարկատուին:

5. Համաշխարհային բանկի կողմից ծանուցում՝ Համաշխարհային բանկի եւ Վարկառու միջեւ ստորագրված ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում նախատեսված հատկացման նախապայմանների կատարման մասին:

6. ՁՖԳ-ի հավանություն՝ կապված ծրագրի իրականացմանը հետեւելու համար առաջարկվող հատուկ թիմի հետ:

7. Ապացույց՝ «WISE» Ղեկավար կոմիտեի նշանակման վերաբերյալ:

8. Գետերի ջրերի մասով միջսահմանային համագործակցության հարցի բավարար հաշվառում՝ գործող միջազգային չափորոշիչների լույսի ներքո (հայեցակարգային գրությունն արժանացել է ՁՖԳ-ի հավանությանը):

## Բ. ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄԻՑ ԲԱՑԻ ՄՅՈՒՍ ԲՈԼՈՐ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վարկառուի կողմից Վարկատուին հետեւյալ փաստաթղթերի տրամադրում.

ix) Վարկառուի պատշաճ լիազորված ներկայացուցչի կողմից ստորագրված հավաստագիր, որը վկայում է այն մասին, որ օգտագործվել են Մասհանման հայտում նշված Կանխավճարին անմիջապես նախորդող Կանխավճարի առնվազն ութսուն տոկոսը (80%) եւ նախավերջին Կանխավճարի հարյուր տոկոսը (100%), այդ թվում՝ համապատասխան ժամանակահատվածում Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վճարման մանրամասն վերլուծություն.

x) Նախքան Մասհանման հայտը տրամադրված Կանխավճարի գումարի օգտագործման վերաբերյալ բոլոր պայմանագրերն ու պատվերների ձեւերն այն պլանների եւ գնանշումների հետ միասին (եթե այդպիսիք կան), որոնք նախկինում տրամադրվել են Վարկատուին Գնումների ձեռնարկին համապատասխան եւ դրանով սահմանված կարգով.

xi) Վարկատուի համար բավարար ձեւով եւ բովանդակությամբ ապացույցներ առ այն, որ Ծրագրի բաղադրիչի բոլոր համապատասխան Թույլատրելի ծախսերը վճարվել են.

xii) Ծրագրի բաղադրիչի տեւողության համար ծախսերի նախնական կանխատեսում, որը թարմացվել է համապատասխան Մասհանման ամսաթվին.

xiii) Ծրագրի բաղադրիչի ծախսերի, ինչպես նաեւ Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վերանայված գնահատում.

xiv) Շրջանակային համաձայնագրի 6.4.8 կետի *(Վերահսկողությունը, աուդիտը)* համաձայն պատրաստված տարեկան աուդիտի վերջին հաշվետվությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՎԱՐԿԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

### ՄԱՍ I. Վարկի հայտի ձեւը

*(Վարկառուի ձեւաթղթի վրա)*

Ում կողմից՝ *Վարկառուի* կողմից **(Վարկառու)**

Ում՝ Զարգացման ֆրանսիական գործակալությանը **(Վարկատու)**

Ամսաթիվը՝ *[ամսաթիվ]*

Թեմա՝ Վարկի հայտ

Վարկառուի անվանումը, շրջանակային համաձայնագիր թիվ [●]

Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [•]-ին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր):** Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում դրանց տրված իմաստները:

Խնդրում ենք, որ Վարկատուն մեզ տրամադրի Վարկ՝ հետեւյալ պայմաններով.

Վարկի գումարի չափը՝ *[մուտքագրել գումարի չափը տառերով* ([•])

Ծրագրի՝ Վարկի առարկա բաղադրիչը՝ *[«WISE» բաղադրիչ/ Սյունիքի բաղադրիչ]*

Իրականացնող մարմինը՝ [●][2]

Տեխնիկական ավարտի ամսաթիվը՝ [●]

[Համաֆինանսավորող (Համաֆինանսավորողներ)՝ [●]

[2] Եթե չկա Ծրագրի պատվիրակված սեփականատեր, ապա այս մասը ջնջվում է, եւ պահպանվում է Վերջնական շահառուի հղումը:

*[մուտքագրել գումարի չափը տառերով* ([●])-ի չափով գումարի համար (հայտնի կամ նախատեսված չափը)][3]

[Համաֆինանսավորումը (Համաֆինանսավորումները)՝ [●][4]]

Ծրագրի փաստաթղթերը՝ [●]

Վարկի սույն հայտը հետկանչի ենթակա չէ:

Սույն փաստաթղթի ամսաթվին Վարկառուն հավաստիացնում է, որ 13-րդ կետի *(Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* համաձայն շարադրված դրույթները [բացառությամբ 13.14 կետի *(Ֆինանսական միջոցների օրինական ծագումը)* համաձայն արված հավաստիացումների] ճիշտ են:

Մենք սույն Վարկի հայտին ենք կցում Շրջանակային համաձայնագրի 5-րդ կետում *(Նախապայմանները)* *նշված հետեւյալ փաստաթղթերը*.

*[Փաստաթղթերի ցանկը]*

Հարգանքով՝

*Վարկառուի* լիազորված ստորագրող՝

……………………………………………

[3] Համաֆինանսավորող չլինելու պարագայում ջնջվում է:
[4] Համաֆինանսավորում չլինելու պարագայում ջնջվում է:

**ՄԱՍ II. <u>Ֆինանսական պայմանների մասով առաջարկի ձեւը</u>**

*(ՀՖԳ-ի ձեւաթղթի վրա)*

Ում կողմից՝ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից **(Վարկատու)**

Ում՝ Վարկառուին **(Վարկառու)**

Ամսաթիվը՝ [*ամսաթիվ*]

Թեմա՝ Ֆինանսական պայմանների մասով առաջարկ

**Վարկառուի անվանումը, շրջանակային համաձայնագիր թիվ [●]**

Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [●] թվականին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր):** Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում դրանց տրված իմաստները:

[●]-ով թվագրված Վարկի հայտի համաձայն՝ Վարկառուն խնդրել է, որ Վարկատուն իրեն [*մուտքագրել գումարի չափը տառերով*] եվրո ([*մուտքագրել գումարի չափը թվերով*] եվրո) գումարի չափով Վարկ տրամադրի՝ Շրջանակային համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան:

Շրջանակային համաձայնագրի 4-րդ կետի *(Վարկի հասանելիությունը)* համաձայն՝ պայմանով, որ սա որեւէ դեպքում չի ընկալվի այնպես, որ ՀՖԳ-ն պարտավորվում է տրամադրել Վարկի հայտով հայցվող Վարկը, եթե ՀՖԳ-ն որոշել է Վարկը տրամադրել Վարկառուին, ապա այդպիսի Վարկի պայմանները պետք է լինեն հետեւյալը.

- Գումարի չափը՝ *[մուտքագրել գումարի չափը տառերով}* եվրո *([մուտքագրել գումարի չափը թվերով]* եվրո)

- *վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը՝ գումարած Թույլատրելի սահմանաչափը՝ տարեկան* [մուտքագրել տոկոսը տառերով] *([• ]%)]*

- *[***ինդիկատիվ** Ֆիքսված տոկոսադրույք][5]՝ տարեկան **[***մուտքագրել տոկոսը տառերով] ([●]%):*

[Բացի այդ, եթե ՁՖԳ-ն համաձայնի Վարկը տրամադրել Վարկառուին, ապա Վարկի նկատմամբ կիրառելի Շրջանակային համաձայնագիրը կփոփոխվի հետեւյալ կերպ.

*(հղում կատարել հոդվածին եւ առաջարկվող փոփոխությանը)*][6]*:*

Հարգանքով՝

………………………………………………………………………………

*Զարգացման ֆրանսիական գործակալության* լիազորված ստորագրող՝

Սույնով մենք ընդունում ենք Ֆինանսական պայմանների մասով սույն առաջարկի դրույթներն ու պայմանները:

………………………………………………

*Վարկառուի* լիազորված ստորագրող՝

Ամսաթիվ՝ [●]

[5] Սույն ինդիկատիվ Ֆիքսված տոկոսադրույքը նշված է սույն ծանուցման ամսաթվի դրությամբ՝ ի գիտություն Վարկառուի: Այս տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ աճել կամ նվազել, եւ Վարկի համար կարող է սահմանվել միայն Վարկ տրամադրելու վերաբերյալ Համաձայնագիր կնքելու ամսաթվին:

[6] Այս մասը ջնջվում է, եթե ՁՖԳ-ն չի ցանկանում փոփոխել Ընդհանուր դրույթների եւ պայմանների որեւէ կետ:

**ՄԱՍ III. <u>Վարկի հաստատման ձեւը</u>**

*(ՁՖԳ-ի ձեւաթղթի վրա)*

Ում կողմից՝ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից **(Վարկատու)**

Ում՝ [Վարկառուին] **(Վարկառու)**

Ամսաթիվը՝ [*ամսաթիվ]*

Թեմա՝ Վարկի հաստատում

**Վարկառուի անվանումը, շրջանակային համաձայնագիր թիվ [●]**

Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [•] թվականին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր):** Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն

չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում դրանց տրված իմաստները:

1. <u>Քանի որ՝</u>

Մենք հասկանում ենք, որ Վարկառուն մտադիր է իրականացնել *[«WISE» բաղադրիչը / Սյունիքի բաղադրիչը]*՝ Վարկի սույն հաստատման հավելվածում մանրամասն նկարագրված կարգով:

[●]-ով թվագրված Վարկի հայտի համաձայն՝ Վարկառուն խնդրել է, որ Վարկատուն իրեն տրամադրի Վարկ՝ վերոնշյալ Ծրագրի բաղադրիչի [ամբողջական/մասնակի][7] ֆինանսավորման նպատակով՝ Շրջանակային համաձայնագրին համապատասխան:

[7] Ընտրեք Ծրագրի բաղադրիչին առավել հարմար տարբերակը:

Շրջանակային համաձայնագրի 4-րդ կետի (*Վարկի հասանելիությունը)* համաձայն՝ Վարկատուն [●]-ին Վարկառուին ներկայացրել է Ֆինանսական պայմանների մասով առաջարկ, որը Վարկառուն ընդունել է [●]-ին:

2. Վարկը

Վարկառուի կողմից Վարկի սույն հաստատման պայմաններն ընդունվելու դեպքում եւ Վարկառուի կողմից այդ ընդունման ամսաթվից սկսած՝ Վարկատուն, *[● մուտքագրել ՀՖԳ-ի՝ որոշումն ընդունող մարմնի անունը*]-ի *[●մուտքագրել որոշման ընդունման ամսաթիվը]-ի* թիվ *[●մուտքագրել որոշման համարը] որոշման* հիման վրա Վարկառուին տրամադրում է *[մուտքագրել գումարի չափը տառերով]* եվրո ([*մուտքագրել գումարի չափը թվերով]* եվրո) հիմնական գումարի ընդհանուր առավելագույն գումարի չափով Վարկ՝ Ֆինանսական փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

3. Վարկի հասանելիությունը եւ մարումը

Վարկի նկատմամբ կիրառելի Առաջին մասհանման վերջնաժամկետը [●]-ն[8] է:

Վարկի նկատմամբ կիրառելի Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը [●]-ն[9] է:

Շրջանակային համաձայնագրի 6.4.7 կետում (*Ֆինանսական միջոցներն օգտագործելու վերջնաժամկետը)* նշված ֆինանսական միջոցների օգտագործման վերջնաժամկետը [●]-ն[10] է:

Ֆիքսված դրույքաչափով Մասհանումների համար յուրաքանչյուր Մասհանում կազմում է նվազագույնը երեք միլիոն եվրո (3 000 000 եվրո) կամ

[8] Նշել Վարկ տրամադրելու վերաբերյալ որոշումն ընդունելու ամսաթվից սկսած տասնչորսամսյա (14-ամսյա) ժամկետը լրանալու ամսաթիվը:

[9] Դրամական միջոցների վճարման վերջնաժամկետը պետք է լինի ոչ ուշ, քան *i)* մինչեւ Վարկի մայր գումարի կայուն վճարման համար առաջին մարման ամսաթիվը, կամ ii) Վարկի մայր գումարի կայուն վճարման համար Տոկոսային ժամանակահատվածին համապատասխանող ժամանակահատվածը՝ գումարած տոկոսները:

[10] Այս ամսաթիվը պետք է համապատասխանի վերջին Կանխավճարի մարման ամսաթվին՝ գումարած վեց (6) ամիս: Ծրագրով պայմանավորված՝ այս ամսաթիվը կարող է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար փոփոխվել:

Հասանելի վարկի գումարին համարժեք գումարի չափ, եթե այդ գումարը երեք միլիոն եվրոյից (3 000 000 եվրո) պակաս է:

Լողացող տոկոսադրույքով Մասհանումների համար յուրաքանչյուր Մասհանում կազմում է նվազագույնը հարյուր հազար եվրո (100 000 եվրո) կամ Հասանելի վարկի գումարին համարժեք գումարի չափ, եթե այդ գումարը հարյուր հազար եվրոյից (100 000 եվրո) պակաս է:

Շրջանակային համաձայնագրի 6.4.2 կետում *(Նախնական Կանխավճարը)* նշված նախնական Կանխավճարի գումարը կազմում է [*մուտքագրել գումարի չափը պառերով]* եվրո ([*մուտքագրել գումարի չափը թվերով]* եվրո):

Արտոնյալ ժամկետն ավարտվում է [●]-ին:

Շրջանակային համաձայնագրի 10-րդ կետին համապատասխան՝ Վարկառուն պետք է Վարկատուին վերադարձնի Վարկի հիմնական գումարը [վերջնաժամկետների քանակը բառերով] ([● վերջնաժամկետների քանակը թվերով]) հավասար կիսամյակային վճարումներով, որոնք ենթակա են վճարման յուրաքանչյուր Վճարման ամսաթվի:

Առաջին վճարումը պետք է կատարվի [●]-ին, իսկ վերջին վճարումը՝ [●]-ին:

Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա [●]-ը եւ [●]-ը:

4. <u>Ֆինանսական պայմանները</u>

- Վարկի ֆինանսական պայմանները հետեւյալն են.
- Գումարի չափը՝ *[մուտքագրել գումարի չափը պառերով* եվրո *([մուտքագրել գումարի չափը թվերով]* եվրո)
- Վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը՝ գումարած Թույլատրելի սահմանաչափը՝ *[մուտքագրել տոկոսը պառերով]* (տարեկան [●]%)[11]

[11] Ջնջվում է, եթե խոսքը միայն Ֆիքսված դրույքաչափի մասին է:

- Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափ[12]՝ *[մուտքագրել տոկոսը տառերով* ([●]%)

- Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթիվը՝ *[մուտքագրել* ամսաթիվը]

- Ինդեքսային դրույքաչափը՝ Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթվի դրությամբ՝ [*մուտքագրել տոկոսը տառերով]* ([●]%)։

5. <u>Փաստացի համաշխարհային դրույքաչափը *(Taux Effectif Global)*</u>

Ֆրանսիայի սպառողների իրավունքների մասին օրենսգրքի L.314-1-ից L.314-5, R.314-1 եւ հաջորդող հոդվածներով, ինչպես նաեւ Ֆրանսիայի դրամավարկային եւ ֆինանսական օրենսգրքի L.313-4 հոդվածով սահմանված պահանջները բավարարելու նպատակով Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին, իսկ Վարկառուն գիտակցում եւ ընդունում է, որ Վարկի նկատմամբ կիրառելի փաստացի համաշխարհային դրույքաչափը (*taux effectif global)* կարող է սահմանվել *[մուտքագրել դրույքաչափը տառերով] (դրույքաչափը մուտքագրել թվերով %)* տարեկան դրույքաչափով՝ տարեկան երեք հարյուր վաթսունհինգօրյա (365) հաշվարկի եւ *[մուտքագրել կիսամյակային դրույքաչափը տառերով] (դրույքաչափը*

[12] Տեղեկատվական նպատակներով Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափը ԵՎՐԻԲՈՐ-ին համարժեք ֆիքսված շուկայական դրույքաչափն է՝ ճշգրտված ըստ Թույլատրելի սահմանաչափի։ Այդպիսով, Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափը որոշվում է Վարկատուի կողմից՝ հիմք ընդունելով պայմանական վարկի դրույքաչափը, որի բնութագրիչները հետեւյալն են.
- մարման վերջնաժամկետը Վարկի մայր գումարի վերջին մարումը կատարելու ամսաթիվն է,
- արտոնյալ ժամկետը հավասար է Դրույքաչափի սահմանման ամսաթվի եւ Վարկի մայր գումարի առաջին մարման ամսաթվի միջեւ մինչեւ մոտակա վեցամսյա ժամանակահատվածը կլորացված ժամանակահատվածին,
- մարումների հաճախականությունը՝ կիսամյակը մեկ անգամ։
Տեսական վարկի նկատմամբ կիրառվող հավասարակշիռ տոկոսադրույքն այն դրույքաչափն է, որը վերը նկարագրված տեսական վարկի նկատմամբ կիրառվելիս թույլ է տալիս ապագա տոկոսային հոսքերի եւ կապիտալի վճարումների ներկա արժեքը հավասարեցնել այդ վարկի գումարին։ Այսպիսի հաշվարկի դեպքում զեղչը հիմնվում է զրոյական կտրոնով եվրոյի տոկոսադրույքի սվոփի շուկայական կորի վրա, որը սահմանված է Վարկային համաձայնագրի ստորագրման ամսաթվին նախորդող՝ Դրույքաչափը որոշելու ամսաթվին՝ հիմնվելով Փարիզի ժամանակով ժամը 11:00-ի դրությամբ Հղումային ֆինանսական հաստատության գնանշումների վրա։ Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափը համապատասխանում է վերոնշյալ համարժեք դրույքաչափին՝ ճշգրտված ըստ թույլատրելի սահմանաչափի։

*մուտքագրել թվերով %)* տարեկան դրույքաչափով, Տոկոսների հաշվարկման վեցամսյա (6)[13] ժամանակահատվածի հիման վրա՝ հաշվի առնելով հետեւյալը.

ա) վերոնշյալ դրույքաչափերը ներկայացված են միայն տեղեկատվական նպատակներով.

բ) վերոնշյալ դրույքաչափերը հաշվարկվում են հետեւյալ հիմքով.

i) Վարկի մասհանումն ամբողջությամբ կատարվում է Ֆիքսված դրույքաչափով՝ Ստորագրման ամսաթվին.

ii) վարկային գծի տրամադրման ժամանակահատվածի համար Ֆիքսված դրույքաչափը հավասար է տարեկան [●] տոկոսի ([●]%).

գ) վերոնշյալ դրույքաչափերով հաշվի են առնվում Վարկի սույն հաստատման համաձայն Վարկառուի կողմից կատարման ենթակա վճարները եւ ծախսերը՝ ենթադրելով, որ այդ վճարները եւ ծախսերը կմնան ֆիքսված եւ կկիրառվեն մինչեւ Վարկի ամբողջական մարումը:

6. <u>Հավաստիացումները</u>

Վարկի հաստատման ստորագրման ամսաթվին Վարկառուն հավաստիացնում է, որ 13-րդ կետի (*Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* համաձայն արված հավաստիացումներն ու երաշխիքները ճիշտ են:

7. [Վարկի շրջանակներում ստորագրված Շրջանակային համաձայնագրում կատարվող փոփոխությունները][14]

[Վարկի սույն հաստատման նպատակով Շրջանակային համաձայնագրի հետեւյալ դրույթները փոփոխվում են եւ շարադրվում հետեւյալ խմբագրությամբ].

[13] Ենթակա է փոփոխության, եթե ժամկետները կիսամյակային կտրվածքով չեն:
[14] Ջնջվում է, եթե Ընդհանուր դրույթներում եւ պայմաններում փոփոխություններ չեն կատարվում:

8. Կարգավորող իրավունքը, կատարումը եւ դոմիցիլի ընտրությունը

ա) Կարգավորող իրավունքը

Շրջանակային համաձայնագիրը կարգավորվում է Ֆրանսիայի իրավունքով:

բ) Արբիտրաժը

Վարկի հաստատումից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ ուղարկվում է արբիտրաժի եւ վերջնականապես կարգավորվում է դրա միջոցով՝ արբիտրաժային վարույթը սկսվելու օրվա դրությամբ կիրառելի՝ Առեւտրի միջազգային պալատի հաշտարարության եւ արբիտրաժային կանոնների համաձայն, այդ Կանոններին համապատասխան նշանակված մեկ կամ մի քանի արբիտրների կողմից:

Արբիտրաժի վայրը Փարիզն է, իսկ արբիտրաժի լեզուն՝ անգլերենը:

Արբիտրաժի վերաբերյալ սույն դրույթը լիարժեք ուժի եւ գործողության մեջ կմնա, եթե Վարկի հաստատումն ուժը կորցրած ճանաչվի, կամ դրա գործողությունը դադարեցվի, կամ այն չեղարկվի, ինչպես նաեւ Վարկի հաստատման գործողության ժամկետի ավարտից հետո: Կողմերի՝ Վարկի հաստատմամբ սահմանված պայմանագրային պարտավորությունները չեն կասեցվում, եթե Կողմերից մեկը դատական վարույթ է հարուցում մյուս Կողմի դեմ:

Կողմերը բացահայտ համաձայնում են, որ ստորագրելով Վարկի հաստատումը՝ Վարկառուն անդառնալիորեն հրաժարվում է անձեռնմխելիության բոլոր իրավունքներից՝ կապված իրավազորության կամ կատարման հետ, որոնց վրա նա հակառակ դեպքում կարող էր հիմնվել:

գ) Դոմիցիլի ընտրությունը

Չհակասելով որեւէ կիրառելի օրենքի՝ վերոնշյալ որեւէ գործողության կամ վարույթի հետ կապված դատական եւ արտադատական փաստաթղթերի հանձնման նպատակով Վարկառուն դատական փաստաթղթերի հանձնման

համար անփոփոխելիորեն ընտրում է Շրջանակային համաձայնագրի 19.1 կետով *(Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները)* սահմանված դոմիցիլի հասցեն, իսկ ՁՖԳ-ն դատական փաստաթղթերի հանձնման համար ընտրում է Շրջանակային համաձայնագրի 19.1 կետով (*Գրավոր հաղորդագրությունները եւ հասցեները)* սահմանված «AFD SIEGE» հասցեն:

Հարգանքով՝

……………………………………

*Ձարգացման ֆրանսիական գործակալության* լիազորված ստորագրող՝

Սույնով մենք ընդունում ենք Վարկի սույն հաստատման պայմանները:

……………………………………

*Վարկառուի* լիազորված ստորագրող՝

Ամսաթիվ՝ [●]

***Վարկի հաստատման հավելված***

Ծրագրի բաղադրիչի նկարագրությունը

- Տրամաբանական շրջանակ

**Ֆինանսավորման պլանը**

- Ֆինանսավորման պլան
- Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսեր
- Ոչ թույլատրելի ծախսեր

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԸ

### ՄԱՍ I. Մասհանումների հայտի ձեւը

*[Վարկառուի ձեւաթղթի վրա]*

**Ում՝** *Զարգացման Ֆրանսիական գործակալությանը*

*[մուտքագրել ԶՖԳ-ի՝ Շրջանակային համաձայնագրի 8.1 կետում նշված գրասենյակի անվանումը]* **գրասենյակ**

*[մուտքագրել ԶՖԳ-ի՝ Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված գրասենյակի հասցեն]*

Հասցեատեր՝ ԶՖԳ տնօրեն

**Ում կողմից՝** *[Շրջանակային համաձայնագրի 8.1 կետում նշված Վարկառուի անվանումը եւ հասցեն]*

Ամսաթիվը՝ [ամսաթիվ]

Հղում՝ Մասհանման հայտ

**Վարկառուի անվանումը. Շրջանակային համաձայնագիր թիվ [●]**

Հարգելի՛ պարոնայք,

1. Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [•]-ին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր)** եւ [●]-ին ներկայացված Վարկի հաստատմանը **(Վարկի հաստատում)**: Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում կամ Վարկի հաստատման մեջ դրանց տրված իմաստները:

2. Սույն գրությունը Մասհանման հայտ է:

3. Մենք անվերապահորեն խնդրում ենք, որ Վարկատուն Մասհանում տրամադրի հետեւյալ պայմաններով.

Գումարի չափը՝ [●] եվրո, կամ պակաս լինելու դեպքում՝ Հասանելի վարկի չափով:

Տոկոսադրույքը՝ [*Ֆիքսված/Լողացող]*

4. Տոկոսադրույքը կսահմանվի Շրջանակային համաձայնագրի 7-րդ կետի *(Յ*ուրաքանչյուր վարկի նկատմամբ կիրառելի տոկոսը*) եւ 8-րդ կետի* (Տոկոսների հաշվարկման եղանակի փոփոխությունը) *եւ Վարկի հասփափման 4-րդ կետի (Վարկի հասանելիությունը) դրույթներին համապափասխան: Հայցվող* Մասհանման նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքը մեզ կներկայացվի գրավոր, եւ մենք ընդունում ենք այդ Տոկոսադրույքը [(ստորեւ նշված պարբերության համաձայն, եթե կիրառելի է)], ներառյալ այն դեպքում, երբ Տոկոսադրույքը սահմանվում է՝ նշելով Փոխարինված բազային դրույքաչափը՝ գումարած ճշգրտման թույլատրելի սահմանաչափը, որի մասին ծանուցել է Վարկատուն Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք տեղի ունենալուց հետո:

**Միայն Ֆիքսված տոկոսադրույքի համար.** Եթե պահանջվող Մասհանման նկատմամբ կիրառվող Տոկոսադրույքն ավելին է, քան [«մուտքագրել տոկոսը տառերով] ([●]%)-ը, ապա մենք խնդրում ենք, որ Դուք չեղարկեք սույն Մասհանման հայտը:

5. Մենք հաստատում ենք, որ Շրջանակային համաձայնագրի 5.5 կետում (*Նախապայմանները)* նշված յուրաքանչյուր պայման բավարարվում է սույն Մասհանման հայտի ամսաթվի դրությամբ, եւ որ Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք շարունակական բնույթ չի կրում, կամ հավանական չէ, որ տեղի կունենա: Մենք համաձայնում ենք Վարկատուին անհապաղ տեղեկացնել, եթե վերեւում նշված պայմաններից որեւէ մեկը չի բավարարվում Մասհանման ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ:

6. Սույն Մասհանումից ստացված միջոցները պետք է մուտքագրվեն Ծրագրի բաղադրիչի հաշվին՝

| | |
|---|---|
| ա) [Վարկառուի/Վերջնական շահառուի/Իրականացնող մարմնի] անվանումը՝ | [●] |
| բ) [Վարկառուի/Վերջնական շահառուի/Իրականացնող մարմնի] հասցեն՝ | [●] |
| գ) IBAN հաշվեհամարը՝ | [●] |
| դ) SWIFT համարը՝ | [●] |
| ե) Բանկը եւ բանկի հասցեն՝ | [●] |
| զ) [Եվրոյից բացի այլ արժույթի դեպքում] թղթակցային բանկը եւ Վարկառուի բանկի հաշվեհամարը՝ | [●] |

7. Սույն Մասհանման հայտը հետկանչման ենթակա չէ:

8. Մենք սույն Մասհանման հայտին կցել ենք Շրջանակային համաձայնագրի 3-րդ հավելվածում (*Նախապայմանները) [եւ Վարկի հասփափման մեջ]*[15] նշված բոլոր համապատասխան հիմնավորող փաստաթղթերը:

[Հիմնավորող փաստաթղթերի ցանկ]

Հարգանքով՝

...........................................

Վարկառուի լիազորված ստորագրող՝

[15] Մուտքագրվում է կիրառելիության դեպքում, եթե Վարկային համաձայնագրով նախատեսված են վճարումների նոր նախապայմաններ, կամ ջնջվում է, եթե կիրառելի չէ:

## ՄԱՍ II. <u>Մասհանման եւ Դրույքաչափի հաստատման ձեւը</u>

*[Զարգացման ֆրանսիական գործակալության ձեւաթղթի վրա]* [15]

Ում՝ *[Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված Վարկառուի անվանումը եւ հասցեն]*

Հասցեատեր՝ [*Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված անունը]*

Ում կողմից՝ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից

Ամսաթիվ՝ [●]

Հղումներ՝ [●]-ով թվագրված Մասհանման հայտ

Վարկառուի անվանումը. Շրջանակային համաձայնագիր թիվ [•]

Հարգելի՛ պարոնայք,

1. Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [•]-ին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր)** եւ [●]-ին ներկայացված Վարկի հաստատմանը **(Վարկի հաստատում)**: Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում կամ Վարկի հաստատման մեջ դրանց տրված իմաստները:

2. [●]-ով թվագրված Մասհանման հայտի վերաբերյալ գրությամբ Վարկառուն խնդրել է, որ Վարկատուն տրամադրի [●] եվրոյի չափով Մասհանում՝ համաձայն Շրջանակային համաձայնագրի եւ Վարկի հաստատման պայմանների:

3. Մասհանումը, որը տրամադրվել է Ձեր Մասհանման հայտի համաձայն, հետեւյալն է.

Գումարի չափը՝ [● *գումարի չափը պառերով]* ([●])

***[Տարբերակը՝ Լողացող փոկոսադրույք՝***

• Կիրառելի տոկոսադրույքը հավասար է վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ-ի հանրագումարին[16] եւ Թույլատրելի սահմանաչափին][17]

***[Տարբերակը՝ Ֆիքսված տոկոսադրույքով՝***

• Կիրառելի տոկոսադրույքը՝ *[● տոկոսը տառերով]* [●]%)[18]

Միայն տեղեկատվական նպատակով՝

• Դրույքաչափի սահմանման ամսաթիվը՝ [●]

• Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափը՝ տարեկան [● տոկոսը տառերով] ([●]%)

• Ինդեքսային դրույքաչափը Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթվի դրությամբ՝ [● տոկոսը տառերով] ([●]%)

• Ինդեքսային դրույքաչափը Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ՝ [●]

• Փաստացի համաշխարհային դրույքաչափը (վեցամսյա ժամանակահատվածի համար)՝ [●տոկոսը տառերով] ([●]%)

• Փաստացի համաշխարհային դրույքաչափը (տարեկան)՝ *[• տոկոսը տառերով]* ([●]%)

[Նշվում է, որ վերոնշյալ Տոկոսադրույքը կարող է տարբեր լինել՝ համաձայն Շրջանակային համաձայնագրի 7.1.1(ա) *(Լողացող տոկոսադրույքը)* եւ 8.2 *(Հրապարակված դրույքաչափի փոխարինումը)* կետերի դրույթների][19]:

[16] Եթե վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը հասանելի չէ Մասհանման հաստատման ամսաթվի դրությամբ՝ Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքով պայմանավորված, ապա Փոխարինման բազային դրույքաչափը, այդ Հրապարակված դրույքաչափը Փոխարինման բազային դրույքաչափով փոխարինելու հստակ պայմանները եւ հարակից ընդհանուր փաստացի դրույքաչափերն առանձին գրությամբ կուղարկվեն Վարկատուին:

[17] Ենթակա է հանման Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում:

[18] Դրույքաչափի սահմանման արդյունքում:

[19] Ենթակա է հանման Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում:

Հարգանքով՝

…………………………………………

*Զարգացման ֆրանսիական գործակալության* լիազորված ստորագրող՝

ՄԱՍ III. <u>Դրույքաչափի փոխարկման հայտի ձեւը</u>

*[Վարկառուի ձեւաթղթի վրա]*

Ում՝ Զարգացման Ֆրանսիական գործակալությանը

*[մուտքագրել ԶՖԳ-ի՝ Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված գրասենյակի անվանումը]* գրասենյակ

*[մուտքագրել ԶՖԳ-ի՝ Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված գրասենյակի հասցեն]*

Հասցեատեր՝ ԶՖԳ տնօրեն

Ում կողմից՝ *[Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված Վարկառուի անվանումը եւ հասցեն]*

Ամսաթիվը՝ [ամսաթիվ]

Հղում՝ Դրույքաչափի փոխարկման հայտ

Վարկառուի անվանումը. Շրջանակային համաձայնագիր թիվ [●]

Հարգելի՛ պարոնայք,

1. Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [●]-ին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր)** եւ [●]-ին ներկայացված Վարկի հաստատմանը **(Վարկի հաստատում):** Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում կամ Վարկ տրամադրելու վերաբերյալ հաստատման մեջ դրանց տրված իմաստները:

2. Համաձայն Շրջանակային համաձայնագրի 7.1.2 կետի (Նվազագույն տոկոսադրույք)

3. Համաձայն 7.1.1 կետի (Տոկոսադրույքի ընտրությունը) որոշված տոկոսադրույքը, անկախ ընտրված տարբերակից, չպետք է ցածր լինի տարեկան զրո ամբողջ քսանհինգ տոկոսից (0.25%)՝ անկախ տոկոսադրույքների ցանկացած անկումից:

4. Շրջանակային համաձայնագրի՝ *Լողացող տոկոսադրույքի փոխարկումը Ֆիքսված տոկոսադրույքի*. սույնով Ձեզ խնդրում ենք փոխարկել հետեւյալ Մասհանումների Լողացող տոկոսադրույքը՝

8.1- ***[թվարկել համապատասխան Մասհանումները]***,

Ֆիքսված տոկոսադրույքի՝ Շրջանակային համաձայնագրի դրույթներին համապատասխան:

5. Դրույքաչափի փոխարկման սույն հայտը կհամարվի առոչինչ, եթե կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքը գերազանցում է *[մուտքագրել տոկոսը պառերով] [●%]:*

Սույն փաստաթղթի ամսաթվին մենք հայտարարում ենք, որ 13-րդ կետի *(Շրջանակային համաձայնագրի եւ յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները եւ երաշխիքները)* համաձայն շարադրված դրույթները ճիշտ են:

Հարգանքով՝

...................................................

Վարկառուի լիազորված ստորագրող՝

## ՄԱՍ IV. <u>Դրույքաչափի փոխարկման հաստատման ձեւը</u>

*[Զարգացման ֆրանսիական գործակալության ձեւաթղթի վրա]*

Ում՝ *[Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված Վարկառուի անվանումը եւ հասցեն]*

Հասցեատեր՝ [*Շրջանակային համաձայնագրի 19.1 կետում նշված անունը]*

Ում կողմից՝ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից

Ամսաթիվ՝ [●]

Հղումներ՝ [●]-ի Դրույքաչափի փոխարկման հայտ

Վարկառուի անվանումը. Շրջանակային համաձայնագիր թիվ [●]

Հարգելի՛ պարոնայք,

1. Մենք հղում ենք կատարում Վարկառուի եւ Վարկատուի միջեւ [●]-ին կնքված թիվ [●] շրջանակային համաձայնագրին **(Շրջանակային համաձայնագիր)** եւ [●]-ին ներկայացված Վարկի հաստատմանը **(Վարկի հաստատում):** Սույն փաստաթղթում օգտագործված, սակայն չսահմանված՝ մեծատառերով գրված բառերն ու արտահայտություններն ունեն Շրջանակային համաձայնագրում կամ Վարկ տրամադրելու վերաբերյալ հաստատման մեջ դրանց տրված իմաստները:

2. Մենք հղում ենք կատարում նաեւ Ձեր՝ Դրույքաչափի փոխարկման հայտին՝ թվագրված [●]-ով: Մենք հաստատում ենք, որ Ձեր տոկոսադրույքի փոխարկման հայտում նշված նվազեցման (նվազեցումների) նկատմամբ կիրառվող Ֆիքսված տոկոսադրույքը տրամադրվել է 7.1.2 կետի (Նվազագույն տոկոսադրույք) համաձայն:

3. Համաձայն 7.1.1 կետի (Տոկոսադրույքի ընտրությունը) որոշված տոկոսադրույքը, անկախ ընտրված տարբերակից, չպետք է ցածր լինի տարեկան

զրո ամբողջ քսանհինգ տոկոսից (0.25%)՝ անկախ տոկոսադրույքների ցանկացած անկումից:

4. Շրջանակային համաձայնագրի Լողացող տոկոսադրույքից Ֆիքսված տոկոսադրույքի փոխակերպումը հետեւյալն է.

8.2- տարեկան [●]%:

5. Շրջանակային համաձայնագրի 7.1.1 կետի *(Տոկոսադրույքի ընտրությունը)* համաձայն հաշվարկվող այս Ֆիքսված տոկոսադրույքը Ձեր՝ Դրույքաչափի փոխարկման հայտում նշված Մասհանման (Մասհանումների) նկատմամբ կկիրառվի [●] (ուժի մեջ մտնելու ամսաթիվը)-ից:

4. Նաեւ հայտնում ենք, որ՝

8.3- Վարկի տարեկան փաստացի համաշխարհային դրույքաչափը կազմում է [●]%. եւ

8.4- Վարկի [կիսամյակային *ԿԱՄ* եռամսյակային] փաստացի համաշխարհային դրույքաչափը կազմում է [●]%:

Հարգանքով՝

…………………………………………

*Զարգացման ֆրանսիական գործակալության* լիազորված ներկայացուցիչ՝

## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒԻ ԿԱՅՔՈՒՄ

1. Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ

- ՁՖԳ-ի մատյանում ունեցած համարն ու անվանումը,
- Նկարագրությունը,
- Գործառական ոլորտը,
- Իրականացման վայրը,
- Մեկնարկի ակնկալվող ամսաթիվը,
- Տեխնիկական ավարտի ակնկալվող ամսաթիվը,
- Իրականացման կարգավիճակը, որը թարմացվում է յուրաքանչյուր կիսամյակ.

2. Ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ

- Ֆինանսավորման տեսակը (վարկ, դրամաշնորհ, համաֆինանսավորում, պատվիրակված ֆինանսական միջոցներ),
- Վարկի Մայր գումարը,
- Մասհանված Վարկային գծի չափը (թարմացվում է Ծրագրի իրականացմանը զուգահեռ),
- Վարկառուի նշանակումը.

3. Այլ տեղեկություններ

- Գործարքի վերաբերյալ տեղեկատվական ծանուցումը եւ (կամ) տեղեկատվական թերթիկը, որում ներկայացվում է սույն հավելվածին կցված գործարքը,
- Ծրագրի գնահատման վերաբերյալ հաշվետվությունը, որի բովանդակությունը սահմանված է 14.12 կետում *(Ծրագրի բաղադրիչի գնահատումը)*:

# <u>ՀԱՅԱՍՏԱՆ</u>

## <u>«Հայաստանի ջրային եւ գյուղատնտեսության ոլորտների համապարփակ զարգացում» (WAIDA) ծրագիր</u>

Ծրագրով ֆինանսավորվում են ոռոգման եւ խմելու ջրի ենթակառուցվածքը, ոլորտի ինստիտուցիոնալ ամրապնդումը եւ Սյունիքի մարզի համապարփակ զարգացումը: Այն աջակցություն է ստանում 100 միլիոն եվրո վարկի (բազմատրանշ վարկային գիծ) եւ 12 միլիոն եվրո ԵՄ դրամաշնորհի միջոցով:

### *ՀԱՄԱՏԵՔՍՏԸ*

*Հայաստանն ունի վերականգնվող ջրային պաշարներ, սակայն դրանց բաշխումը ժամանակի եւ տարածության մեջ անհավասար է, եւ դրանք ավելի ու ավելի խոցելի են դառնում կլիմայի փոփոխության եւ պահանջարկի վրա աճող ճնշման նկատմամբ: Ոռոգվող գյուղատնտեսությունը, որը կազմում է ընդհանուր արտադրանքի 80%-ը, ռազմավարական կարեւորություն ունի պարենային ինքնիշխանության համատեքստում: Բնակչության մեկ քառորդը շարունակում է ծառայություն ստանալ խմելու ջրի եւ ջրահեռացման ոչ վստահելի ցանցերի կողմից: Ոռոգման ոլորտը տառապում է բարդ կառավարումից, հնամաշ ենթակառուցվածքից եւ ոչ պատշաճ գներից:*

ԵՐԿԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ
Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը
ՕՐ/ԱՄԻՍ/ՏԱՐԻ
Ոլորտները
Ջրային եւ գյուղատնտեսական

Վայրը
Ազգային/Տեղական (Սյունիք)

Ժամկետը
8 տարի
Ֆինանսավորման գործիքը
Բազմատրանշ վարկային գիծ (պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկեր)
ԵՄ պատվիրակված դրամաշնորհ
Գումարը
100 միլիոն եվրո (վարկեր)
12 միլիոն եվրո (դրամաշնորհ)

Շահառու
Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի պատասխանատու
Ջրային կոմիտե
Կայուն զարգացման թիրախավորված հիմնական նպատակները




1 Աղքատության վերացում
6 Մաքուր ջուր եւ սանիտարական պայմաններ
13 Գործողություն հանուն կլիմայի
Ծրագրի ծածկագիրը՝ CAM 1029

Գտնվելով Հայաստանի հարավում՝ Սյունիքի մարզը տնտեսապես կարեւոր տարածաշրջան է: Բնութագրվելով ագրոկլիմայական գոտիների լայն բազմազանությամբ՝ այն ունի զգալի, սակայն ոչ բավարար հիդրոգյուղատնտեսական ենթակառուցվածքի հետեւանքով ոչ ամբողջությամբ օգտագործվող գյուղատնտեսական ներուժ: Այս շրջանում ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը լծակ կծառայի արտադրողականությունը բարելավելու եւ տարածքային զարգացման դինամիկան խթանելու համար:

***ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ***

Ծրագրի նպատակն է՝ i) ազգային մակարդակով բարելավել ջրային ռեսուրսների կառավարման կայունությունն ու արդյունավետությունը ոռոգման, խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համար, ii) ոռոգման ոլորտի վերականգնման միջոցով աջակցել Սյունիքի մարզի ներառական եւ համապարփակ զարգացմանը եւ ամրապնդել դրա դիմակայունությունը, iii) խրախուսել գյուղական վայրերում արժանապատիվ աշխատատեղերի պահպանումը, եւ iv) ամրապնդել երկրի պարենային անվտանգությունն ու ինքնիշխանությունը:

Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ.

- Առաջին բաղադրիչը («WISE», ազգային մակարդակով, համաֆինանսավորված Համաշխարհային բանկի առաջնորդությամբ) նվիրված է ոռոգման եւ խմելու ջրի ենթակառուցվածքում ներդրումներին (90%) եւ ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը (10%).

- Երկրորդ՝ տեղական եւ փորձնական բաղադրիչը՝ Սյունիքի մարզի ներառական եւ համապարփակ զարգացման համար, որը ներառում է ներդրումներ ոռոգման համակարգերի վերականգնման ու արդիականացման մեջ, տեխնիկական աջակցություն եւ դրամաշնորհներ՝ ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու եւ դիմակայուն, կայուն եւ ներառական գյուղատնտեսություն զարգացնելու նպատակով:

## *ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ոռոգման ոլորտի ինստիտուցիոնալ ամրապնդումը, համակցված ենթակառուցվածքներում ներդրումներով եւ ջրային պաշարների առավել արդյունավետ օգտագործմամբ ինչպես ազգային մակարդակում, այնպես էլ Սյունիքում փորձնական ծրագրի շրջանակներում, պետք է հանգեցնի գյուղատնտեսական արտադրողականության եւ եկամուտների զգալի աճի: Այս լծակը կարեւոր է տեղական տնտեսությունը խթանելու, գյուղական վայրերի դիմակայունությունն ամրապնդելու, ինչպես նաեւ պարենային անվտանգության ու ինքնիշխանության նպատակներին նպաստելու համար:

Ծրագրով նաեւ աջակցություն կցուցաբերվի կլիմայական փոփոխություններին հարմարվողականությանը եւ բնական պաշարների պահպանմանը: Հետեւաբար ակնկալվում է, որ այն ուժեղ ազդեցություն կունենա կայուն զարգացման չորս հարաչափերի վրա, որոնք են բարելավված կառավարումը, դիմակայուն գյուղական տնտեսության վերականգնումը, կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմակայունությունը եւ կենսաբազմազանության պահպանման խթանումը:

## *ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ*

Ծրագրի Շահառուն կլինի Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս դրա Ֆինանսների նախարարության: Երկու բաղադրիչների իրականացման պատասխանատուն կլինի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտեն: Ծրագրի վերահսկման նպատակով կմոբիլիզացվի Ծրագրի կառավարման գրասենյակ (ԾԿԳ): Սյունիքի փորձնական բաղադրիչի կառավարման համար տեղական մակարդակով կստեղծվի ԾԿԳ-ի ապակենտրոնացված ստորաբաժանում՝ տարածքին հնարավորինս մոտ վերահսկողություն ապահովելու նպատակով:

***ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ***

«WAIDA» ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 210 միլիոն եվրո, որը ֆինանսավորվում է հետեւյալ կերպ.

- «WISE» ծրագրի «ներդրումներ» բաղադրիչի համար՝ ՁՖԳ-ից մինչեւ 70 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ երկու տրանշով (30 միլիոն եվրո՝ առաջին տրանշի համար, որը սույն հաստատման խնդրո առարկան է, եւ 40 միլիոն եվրո՝ վերջնական տրանշի համար, որի հաստատումը նախատեսված է 2027 թվականին), եւ Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող 80 միլիոն ԱՄՆ դոլար վարկի միջոցով.

- Սյունիքի «ներդրումներ» բաղադրիչի համար՝ ՁՖԳ-ից մինչեւ 30 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ մեկ տրանշով, որը սույն հաստատման խնդրո առարկան է.

- Երկու բաղադրիչների տեխնիկական աջակցության ծրագրի համար՝ Եվրոպական միության պատվիրակված դրամաշնորհի միջոցով, որը կազմում է 12 միլիոն եվրո:

ՁՖԳ-ի՝ պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկային ֆինանսավորումը՝ ընդհանուր՝ առավելագույնը 100 միլիոն եվրոյի չափով, կտրամադրվի երեք տրանշից բաղկացած Բազմատրանշ վարկային գծի ձեւով:

## ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ Է ԲՍ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

*[լրացվում է Ծրագրի թիմի ղեկավարի եւ ԲՍ հարցերով խորհրդատուի կողմից՝ կախված Ծրագրից]*

- ԲՍ աշխատանքների ծավալի վերաբերյալ հաշվետվություն
- Բնապահպանական եւ սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ)
- Բնապահպանական եւ սոցիալական կառավարման ծրագիր (ԲՍԿԾ)
- Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակ (ԲՍԿՇ)
- Վերաբնակեցման գործողությունների ծրագիր (ՎԳԾ)
- Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ (ՎՔՇՓ)
- Բնապահպանական եւ սոցիալական ներգրավման ծրագիր (ԲՍՆԾ)
- Բնապահպանական եւ սոցիալական ազդեցության սահմանափակ գնահատում
- Բնապահպանական եւ սոցիալական ազդեցության սահմանափակ գործողությունների ծրագիր
- Բնապահպանական եւ սոցիալական իրագործելիության ուսումնասիրությունից վերցված գլուխ
- Բնապահպանական եւ սոցիալական հայեցակետերի մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություններից վերցված գլուխներ
- ԲՍՆԾ իրականացման մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություններ:

## ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Տվյալների բնույթը

Սույն Համաձայնագրի՝ Կենսաբազմազանության տվյալների փոխանակման վերաբերյալ կետի շրջանակներում ընդգրկված կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները բուսական եւ կենդանական աշխարհի դիտարկումներից ստացված տվյալներն են, որոնք հավաքագրվել են Ծրագրի շրջանակում բնապահպանների կողմից իրականացված դաշտային ուսումնասիրությունների ընթացքում: Այս տվյալները կարող են ստացվել տեսողական դիտման, ձայնային դիտարկումների, գրառումների կամ նույնիսկ նմուշառումների միջոցով:

Տվյալների յուրաքանչյուր հրապարակված միավոր պետք է նվազագույնը պարունակի հետեւյալ տեղեկությունները՝ դիտարկման տեսակը, տաքսոնի գիտական անվանումը, դիտարկման ամսաթիվը եւ վայրը:

Եթե տվյալները չեն կարող համարվել զգայուն, ապա դիտարկումները հրապարակվում են՝ օգտագործելով վայրի նույն ճշգրտությունը, որն արձանագրվել է դաշտային ուսումնասիրությունների ընթացքում:

Տվյալները, որոնք կարող են զգայուն համարվել, մասնավորապես այն դիտարկումներն են, որոնք վերաբերում են բուսական եւ կենդանական աշխարհի տվյալ տարածքին բնորոշ տեսակներին, որոնց գոյությունը տեղական պոպուլյացիայի մակարդակում վտանգված է տեսակների կանխամտածված հեռացման կամ ոչնչացման պատճառով: Տվյալների մատակարարը գիտակցաբար նվազեցնում է այսպես կոչված զգայուն տեսակների գտնվելու վայրի ճշգրտության մակարդակը: Գտնվելու վայրի վերաբերյալ տվյալների ճշգրտության նվազեցման չափը համապատասխանեցվում է տվյալ տեսակի զգայունության աստիճանին՝ այդ տեսակների պոպուլյացիաների վրա ցանկացած լրացուցիչ ճնշում կանխելու նպատակով:

Տվյալների փոխանակման ընթացակարգը

Ծրագրի կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները հրապարակվում են՝ օգտագործելով ԳԿՏՄ-ի հարթակը՝ www.gbif.org կայքում:

ԳԿՏՄ-ով պահանջվող պարտադիր մետատվյալների հետ մեկտեղ տրամադրվում են տեղեկություններ այն Ծրագրի վերաբերյալ, որի առնչությամբ տվյալները հավաքագրվել են: Ներառվում է Ծրագրի համառոտ նկարագրությունը, որին հաջորդում են կապալառուների եւ ֆինանսավորող կողմերի, այդ թվում՝ ՁՖԳ-ի անվանումները:

Տվյալների մատակարարը տվյալների օգտագործման պայմանների մասով պետք է ընտրի իրավունքների երկու ամենաքիչ սահմանափակող մակարդակներից մեկը, այսինքն՝ «Public Domain» (CCO) արտոնագիր կամ «Creative Commons Attribution» (CC-BY) արտոնագիր:

Բացի սույն հավելվածից՝ Կապալառուն եւ նրա համակապալառուները կարող են հիմք ընդունել ՁՖԳ-ի կողմից հրապարակված՝ Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հրապարակման վերաբերյալ գործնական առաջարկությունների ուղեցույցը, որը կարելի է ներբեռնել հետեւյալ հղմամբ.

*https://www.afd.fr/en/ressources/data4nature-practical-recommendations-guide-publishing-primary-biodiversity-data*:

## ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՁՖԳ-Ի ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ[20]

Հայտեր/Առաջարկներ ներկայացնելու հրավեր/Պայմանագիր [անունը]

Թիվ ________________

Հասցեատեր՝ ________________________________

Մենք հայտարարում եւ պարտավորվում ենք, որ ոչ մենք, ոչ էլ որեւէ մեկը, այդ թվում՝ մեր համատեղ ձեռնարկության որեւէ անդամ կամ մեր մատակարարներից, կապալառուներից, ենթակապալառուներից, խորհրդատուներից, ենթախորհրդատուներից որեւէ մեկը, եթե այդպիսիք գոյություն ունեն, որոնք գործում են մեր անունից՝ պատշաճ լիազորություններով կամ մեր գիտությամբ կամ համաձայնությամբ կամ մեր կողմից աջակցությամբ, չեն զբաղվել կամ չեն զբաղվի ՁՖԳ խմբի՝ Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված քաղաքականությամբ արգելված որեւէ գործունեությամբ[21]՝ կապված սույն գնումների գործընթացի եւ (շնորհման դեպքում) վերը նշված պայմանագրի (Պայմանագիր) կատարման, այդ թվում՝ դրա ցանկացած փոփոխության հետ:

Մենք համաձայն ենք պահպանել Պայմանագրի գնման եւ կատարման հետ կապված բոլոր հաշիվները, գրառումները եւ այլ փաստաթղթեր (թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային տարբերակով):

[20] Ծանոթագրություն պատրաստման մասով. Գնումների մրցակցային գործընթացների դեպքում սույն փաստաթուղթը կցվում է հայտի/առաջարկի ներկայացման ձևին: Գնումների ոչ մրցակցային գործընթացի դեպքում սույն փաստաթուղթը կցվում է համապատասխան պայմանագրին:
[21] Հասանելի է հետեւյալ հղմամբ՝ https://www.afd.fr/en:

Մենք, մեր անունից գործող ցանկացած կողմ, մեր համատեղ ձեռնարկության անդամները, մեր ենթակապալառուները, մեր ուղղակի կամ անուղղակի բաժնետերերը եւ մեր դուստր ձեռնարկությունները լիազորում ենք

ՀՖԳ-ին անցկացնելու քննություններ եւ մասնավորապես ստուգելու Պայմանագրի գնման եւ կատարման հետ կապված փաստաթղթերն ու հաշվապահական գրառումները, այդ թվում՝ մեր ներքին գործընթացներն ու կանոնները, որոնք վերաբերում են Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ (կամ) Ֆրանսիայի կողմից սահմանված միջազգային պատժամիջոցների պահպանմանը, սակայն չսահմանափակվելով դրանցով, եւ դրանք ստուգելու ՀՖԳ-ի կողմից նշանակված աուդիտորների կողմից:

Մենք հայտարարում ենք, որ վճարել ենք կամ կվճարենք Պայմանագրի գնման ընթացակարգին կամ կատարմանը վերաբերող միջնորդավճարները, պարգեւավճարները, վճարները, դրամական պարգեւները կամ գանձումները հետեւյալ երրորդ կողմին/կողմերին (օրինակ՝ միջնորդ/գործակալ)(*).

| Շահառուի անունը | Կոնտակտային տվյալները | Նպատակը | Գումարը (նշել արժույթը) |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

(*). Եթե որեւէ գումար չի վճարվել կամ չի վճարվելու, ապա նշել՝ «Առկա չէ»:

Մենք ընդունում ենք, որ ՀՖԳ-ի մասնակցությունը Պայմանագրի ֆինանսավորմանը կախված է ՀՖԳ խմբի՝ Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված քաղաքականության կանոնների պահպանումից:

Մենք ընդունում ենք, որ ՁՖԳ-ն չի կարողանա մասնակցել Պայմանագրի ֆինանսավորմանը, եթե մենք, այդ թվում՝ մեր անունից գործող ցանկացած կողմ[22], մեր համատեղ ձեռնարկության որեւէ անդամ, մեր մատակարարներից, կապալառուներից, ենթակապալառուներից, խորհրդատուներից կամ ենթախորհրդատուներից որեւէ մեկը, մեր ուղղակի կամ անուղղակի բաժնետերերից որեւէ մեկը կամ մեր գործող դուստր ձեռնարկություններից որեւէ մեկը՝

- ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթակա է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ (կամ) Ֆրանսիայի կողմից ընդունված անհատական պատժամիջոցների ենթակա անձի կամ կազմակերպության անունից կամ ի շահ դրա գործող անձին կամ կազմակերպությանը կամ վերահսկվում է դրա կողմից[23].

- ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթակա է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ (կամ) Ֆրանսիայի կողմից ընդունված ոլորտային պատժամիջոցների ենթակա անձի կամ կազմակերպության անունից կամ ի շահ դրա գործող անձին կամ կազմակերպությանը կամ վերահսկվում է դրա կողմից[24].

- Պայմանագրի կատարման մասով՝ ձեռք բերի կամ մատակարարի ապրանքներ, որոնք ենթակա են Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ (կամ) Ֆրանսիայի կողմից ընդունված էմբարգոների:

[22] Տնօրեններ (այդ թվում՝ վարչական կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամ հանդիսացող կամ ներկայացուցչության, որոշումներ կայացնելու կամ վերահսկողության լիազորություններ ունեցող ցանկացած անձ), աշխատողներ կամ գործակալներ (անկախ նրանից՝ նրանք հայտարարագրված են, թե՝ ոչ):

[23] Հետեւյալ հղումները կամ կայքերի հասցեները տրամադրվում են միայն տեղեկատվական նպատակներով այն ցանկի համար, որը վարում է Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպական միությունը եւ Ֆրանսիան, կարելի է այցելել հետեւյալ կայքը՝ https://g61տ-*avoirs.dgtresor.gouv.fr/List:*

[24] Միայն տեղեկատվական նպատակներով ԵՄ ոլորտային պատժամիջոցները հասանելի են հետեւյալ հղմամբ՝ https://www,sanctionsrnap.eu/#/main:

Մենք պարտավորվում ենք անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին, որը կտեղեկացնի ԶՖԳ-ին, մեր կողմից սույն Հայտարարությունը ստորագրվելուց հետո վերը նշված բաժինների հետ կապված հանգամանքների ցանկացած փոփոխության մասին:

Անունը՝_____________Որպես____________________

Պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու ________________ ի անունից եւ ի շահ _______________-ի[25]՝

Ստորագրություն՝___________________ Թվագրված՝ ___________________

[25] Համատեղ ձեռնարկության դեպքում այստեղ պետք է նշվի համատեղ ձեռնարկության անվանումը, եւ դիմումը, հայտը կամ առաջարկը դիմողի, առաջարկը ներկայացնողի, մասնակցի կամ խորհրդատուի անունից ստորագրելու համար պատշաճ լիազորված անձը պետք է ստորագրի Հայտարարությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| Ա | **ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կպատրաստի եւ ՁՖԳ-ին կներկայացնի Ծրագրի բնապահպանական, սոցիալական, առողջապահական եւ անվտանգության (ԲՍԱԱ) կատարողականի վերաբերյալ կանոնավոր մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություններ, այդ թվում՝ հետեւյալը, սակայն չսահմանափակվելով դրանցով. ԲՍՀՊ-ի իրականացում, ներառյալ՝ ԲՍ այնպիսի տարբեր փաստաթղթերում ներկայացվող առաջարկությունները, ինչպիսիք են Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակը (ԲՍԿՇ), Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (ՇԿՆՊ), Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը (ՎՔՇՓ) եւ ԲՍԱԱ-ի շրջանակներում պահանջվող ԲՍ գործիքների իրականացումը, շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները եւ բողոքարկման մեխանիզմի գործունեությունը | Ծրագրի իրականացման ողջ ընթացքում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ հաշվետվություններ ներկայացնել ՁՖԳ-ին:<br>Յուրաքանչյուր հաշվետվություն ներկայացնել ՁՖԳ-ին հաշվետու ժամանակահատվածի ավարտից ոչ ուշ, քան 15 օր հետո | Ջրային կոմիտե / Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | Համաշխարհային բանկի («WISE» բաղադրիչի մասով) եւ ՁՖԳ-ի (Սյունիքի բաղադրիչի մասով) կողմից հաստատված ԲՍՀՊ կատարման վերաբերյալ կիսամյակային հաշվետվություններ |
| Բ | **ՄԻՋԱԴԵՊԵՐ ԵՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն անհապաղ կտեղեկացնի ՁՖԳ-ին Ծրագրին վերաբերող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որը զգալի բացասական ազդեցություն ունի կամ | ՁՖԳ-ին միջադեպի կամ պատահարի մասին ծանուցել դրա տեղեկանալուց հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում:<br>ՁՖԳ-ին հետագա հաշվետվություն տրամադրել 5 օրվա | Ջրային կոմիտե / Ծրագրի իրականացման գրասենյակ | Առկա չէ | Գրավոր ծանուցում ՁՖԳ-ին<br>Հաշվետվությունները, այդ թվում՝ կիրառված եւ նախատեսված միջոցառումները, եթե պահանջվում են, բավարար են համարվում ՁՖԳ-ի |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | հավանական է, որ կունենա շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա, ներառյալ, ի թիվս այլնի, սեռական շահագործման եւ բռնության (ՍՇԲ), սեռական ոտնձգության (ՍՈ) եւ մահվան, լուրջ կամ բազմակի վնասվածքների հանգեցնող պատահարների դեպքերը:<br><br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կտրամադրի բավարար մանրամասներ միջադեպի կամ պատահարի ծավալի, ծանրության եւ հնարավոր պատճառների վերաբերյալ՝ նշելով դրանք վերացնելու համար ձեռնարկված կամ նախատեսվող միջոցառումները, ինչպես նաեւ ցանկացած կապալառուի եւ (կամ) վերահսկող ընկերության կողմից տրամադրված ցանկացած տեղեկություն՝ ըստ անհրաժեշտության:<br><br>Այնուհետեւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն ՀՖԳ-ի պահանջով կպատրաստի զեկույց միջադեպի կամ պատահարի վերաբերյալ եւ կառաջարկի այն վերացնելուն եւ կրկնությունը կանխելուն ուղղված ցանկացած միջոցառում | ընթացքում | | | կողմից |
| Գ | **ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապալառուներից եւ | Ամենամսյա հաշվետվություններ ներկայացնել ՀՖԳ-ին ըստ պահանջի եւ որպես վերը նշված «Ա» գործողության շրջանակներում ներկայացվելիք | Ջրային կոմիտե / Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | *Հաշվետվությունները բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից* |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | վերահսկող ընկերություններից կպահանջի մշտադիտարկման վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններ տրամադրել ԲՍԱԱ կատարողականի վերաբերյալ՝ համապատասխան մրցութային փաստաթղթերում եւ պայմանագրերում նշված չափանիշներին համապատասխան, եւ այդ հաշվետվությունները ներկայացնել ՋՖԳ-ին | հաշվետվության հավելվածներ | | | |
| | **ԲՍՍ N 1. ՀԲ** | | | | |
| 1.1 | **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**<br><br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն Ծրագրի իրականացման թիմի կազմում կստեղծի ԲՍ ստորաբաժանում, որի խնդիրն է ԲՍԱԱ կառավարումը՝ որակյալ անձնակազմով եւ ռեսուրսներով՝ Ծրագրի ԲՍԱԱ ռիսկերի եւ ազդեցությունների կառավարմանն աջակցելու համար: Այս ստորաբաժանումը կներառի միջազգային բնապահպանական եւ սոցիալական մասնագետ, ազգային բնապահպանական մասնագետ եւ ազգային սոցիալական մասնագետ: Միջազգային ԲՍ մասնագետը եւ ազգային սոցիալական մասնագետը կունենան գենդերային մարտահրավերների վերաբերյալ հատուկ հմտություններ եւ փորձ: Նրանք կունենան գործառական աջակցություն եւ ֆինանսավորում՝ ԲՍԿՇ-ում նկարագրված ձեւին համապատասխան գործելու համար: Նրանք կզարգացնեն ծրագրի շահագրգիռ կողմերի կարողությունները ԲՍ | ԲՍ ստորաբաժանումը կստեղծվի Ծրագրի գործունեության սկզբում եւ տեղում որեւէ գործունեություն իրականացնելուց առաջ: Ստորաբաժանումը կպահպանվի մինչեւ նախագծի գործունեության ավարտը | Ջրային կոմիտե | Ծրագիր | ԾԻԳ-ի վերջնական կառուցվածք |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | թեմաներով | | | | |
| 1.2 | **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**<br>1. Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի Ծրագրի համար նախատեսված Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակ (ԲՍԿՇ) եւ Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ (ՎՔՇՓ), որոնք համապատասխանում են համապատասխան ԲՍՍ-ներին եւ մշակվել են ՀՖԳ-ի կողմից՝ որպես Ծրագրի նախապատրաստական փուլի մաս:<br><br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ ԲՍԿՇ-ում նշված բացառությունների ցանկում նկարագրված գործողությունները թույլատրելի չլինեն Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման համար: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն նաեւ կընդունի ԲՍԿՇ-ի 1-ին հավելվածում ներկայացված ԲՍ սքրինինգի մեթոդաբանությունը՝ ծրագրի ենթածրագրերը վերլուծելու եւ դասակարգելու համար:<br><br>2. ԲՍԿՇ ընդունման եւ ԲՍ սքրինինգի կիրառման արդյունքում Տարածքային | Ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման ամսաթվին ընդունել ԲՍԿՇ-ն եւ ՎՔՇՓ-ն, իսկ դրանից հետո իրականացնել ԲՍ սքրինինգ, ԲՍԱԳ, ԲՍԿՊ, ՎԳԾ, ԳԳԾ, ՇԿՆՊ եւ կենսաբազմազանության կառավարման պլան Ծրագրի իրականացման ողջ ընթացքում եւ համապատասխան դեպքում<br><br>Յուրաքանչյուր ընտրված ոռոգման համակարգի աշխատանքները սկսելուց առաջ<br><br>Յուրաքանչյուր ընտրված ոռոգման համակարգի աշխատանքները սկսելուց առաջ | Ջրային կոմիտե / Ծրագրի իրականացման գրասենյակ / Կապալառուներ եւ վերահսկող ընկերություններ | Ծրագիր | *Հաշվետվությունները բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից* |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն անհրաժեշտության դեպքում կանցկացնի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ) և կընդունի ու կիրականացնի համապատասխան Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ) Ծրագրի համար՝ համապատասխան ԲՍՍ-ների համաձայն: | Ֆինանսավորման համաձայնագրի ստորագրումից հետո մեկ տարվա ընթացքում | | | |
| | 3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն անհրաժեշտության դեպքում կմշակի վերաբնակեցման գործողությունների ծրագրեր և կապահովի, որ հողի օտարումից կամ տեղահանումից տուժած անձինք (ներառյալ տնտեսական) պատշաճ կերպով փոխհատուցվեն, և նրանց կենսապայմանները վերականգնվեն կամ բարելավվեն: | Ֆինանսավորման համաձայնագրի ստորագրումից հետո մեկ տարվա ընթացքում | | | |
| | 4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն կմշակի, կընդունի և կիրականացնի Ծրագրի գենդերային գործողությունների ծրագիր, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր: | | | | |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | 5. Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի կենսաբազմազանության կառավարման պլան | | | | |
| **1.3** | **ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**<br>Ծրագրի իրականացման գրասենյակը ԲՍՀՊ համապատասխան հայեցակետերը, այդ թվում, ի թիվս այլնի, համապատասխան ԲՍ գործիքները, Աշխատանքի կառավարման ընթացակարգերը եւ վարքագծի կանոնագիրքը կներառի գնման փաստաթղթերի եւ կապալառուների ու վերահսկող ընկերությունների հետ կնքվող պայմանագրերի ԲՍԱԱ մասնագրերի մեջ: Ծրագրի իրականացման գրասենյակը կապահովի, որ կապալառուները եւ վերահսկող ընկերությունները համապատասխանեն իրենց համապատասխան պայմանագրերի ԲՍԱԱ մասնագրերին եւ ապահովեն, որ ենթակապալառուները համապատասխանեն դրանց:<br>Ծրագրի իրականացման գրասենյակը կապալառուներից կպահանջի պատրաստել կապալառուի ԲՍԿՊ, որը կվերանայվի եւ կհաստատվի ԾԻԳ-ի կողմից | Որպես գնումների փաստաթղթերի եւ համապատասխան պայմանագրերի պատրաստման մաս:<br><br>Հսկել կապալառուներին Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե / Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | Գնման փաստաթղթերը բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից |
| **1.4** | **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ Ծրագրի շրջանակներում խորհրդատվությունները, | Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ | *Ծրագիր* | ՏԱ-ները բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | ուսումնասիրությունները (ներառյալ մանրամասն նախագծային ուսումնասիրությունները), կարողությունների զարգացումը, վերապատրաստումը եւ ցանկացած այլ տեխնիկական աջակցության գործունեություն, ներառյալ՝ կենսաբազմազանության նախնական գնահատումը եւ մշտադիտարկումը, իրականացվեն ՁՖԳ-ի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն, որոնք համապատասխանում են ԲՍՍ-ներին:<br><br>Այնուհետեւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ այդպիսի գործունեության արդյունքները համապատասխանեն տեխնիկական առաջադրանքին | | | | |
| 1.5 | **ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br><br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն ստանում եւ ըստ պատշաճության ապահովում է համապատասխան ազգային մարմիններից Ծրագրի նկատմամբ կիրառելի թույլտվությունների, համաձայնությունների եւ լիազորությունների ստացումը՝ համաձայն կիրառելի ազգային օրենքների, այդ թվում՝ հետեւյալի.<br><br>1. Բնապահպանական մարմինների կողմից Ծրագրի հաստատումը ԲՍԱԳ հաշվետվության եւ հարակից | Մինչեւ տեղում իրականացվող որեւէ գործունեության իրականացումը | Ջրային կոմիտե/Ծրագրի իրականացման գրասենյակ | *Ծրագրեր* | Թույլտվություններ, համաձայնություններ եւ լիազորություններ |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | փաստաթղթերի/շրջանակների ներկայացումից հետո:<br>2. Ծրագրի ազդակիր մասնակիցներից գծեր անցկացնելու իրավունքներ եւ համաձայնություն:<br>3. Հողի փորվածքի տեղանքի որոշում եւ համապատասխան գործունեության համար հողի փորվածքի թույլտվության ստացում: Հումքի եւ համապատասխան այլ շինանյութերի բոլոր մատակարարներին պետք է օրինական փաստաթղթերով թույլատրված լինի գործունեություն իրականացնել:<br>4. Թափոնների թափման վայրերի թույլտվությունների ստացում:<br>5. Համաձայնագիր կոմունալ ծառայությունների մատակարարների հետ՝ կոմունալ ծառայությունների տեղափոխման համար: Ծրագիրը պետք է համապատասխանի կամ ըստ պատշաճության ապահովի համապատասխանությունն այդ թույլտվություններում, համաձայնություններում եւ լիազորություններում սահմանված պայմաններին Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | | | | |
| | **ԲՍՍ N 2. ՀԲ** | | | | |
| 2.1 | **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ Ծրագրի շրջանակներում իրականացվեն միջազգային լավագույն գործելակերպերի վրա հիմնված Աշխատանքի կառավարման ընթացակարգեր | Ծրագրի ցանկացած գործունեության մեկնարկից առաջ եւ ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/<br>Ծրագրի իրականացման գրասենյակ / Կապալառուներ | Ծրագիր | Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություննե րը բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | (ԱԿԸ), այդ թվում, ի թիվս այլնի, աշխատանքային պայմանների, աշխատողների հարաբերությունների կառավարման, մասնագիտական առողջության եւ անվտանգության (ներառյալ անհատական պաշտպանության միջոցները եւ արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունն ու արձագանքը), վարքագծի կանոնագրքի (այդ թվում՝ ՍՇԲ-ի եւ ՍՈ-ի հետ), հարկադիր աշխատանքի, երեխաների աշխատանքի, Ծրագրի աշխատողների համար նախատեսված բողոքարկման վերաբերյալ կարգավորումների եւ կապալառուների, ենթակապալառուների եւ վերահսկող ընկերությունների համար կիրառելի պահանջների վերաբերյալ դրույթները:<br><br>Ծրագրի իրականացման ողջ ընթացքում անցկացվում են մասնագիտական, առողջության եւ անվտանգության հարցերի վերաբերյալ պարբերական վերապատրաստումներ | | | | |
| 2.2 | **ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կստեղծի եւ կգործարկի Ծրագրի աշխատողների համար նախատեսված բողոքարկման մեխանիզմ, ինչպես նկարագրված է ԲՍԿՇ-ում եւ համապատասխանում է ԲՍՍ2-ին | Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծումից երկու ամիս անց եւ ծրագրի՝ տեղում իրականացվող գործունեության մեկնարկից առաջ եւ ծրագրի իրականացման ողջ ընթացքում | *Ջրային կոմիտե/*<br>*Ծրագրի իրականացման գրասենյակ* | Ծրագիր | Բողոքարկման ստեղծված մեխանիզմի վերաբերյալ հաշվետվությունը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |
| | **ԲՍՍ N 3. ՀԲ** | | | | |
| 3.1 | **ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**<br>Տարածքային կառավարման եւ | Նույն ժամկետը, ինչ ԲՍԿՊ-ի ընդունման եւ իրականացման | *Ջրային կոմիտե/*<br>*Ծրագրի իրականացման* | *Ծրագիր* | *Թափոնների կառավարման պլանը բավարար է* |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի թափոնների կառավարման ծրագիր (ԹԿՊ)՝ վտանգավոր եւ ոչ վտանգավոր թափոնները կառավարելու համար, համաձայն ԲՍՍՅ-ի: Այս թափոնների կառավարման ծրագիրը կլինի ԲՍԿՊ-ի մասը | համար | *գրասենյակ* | | *համարվում ՀՖԳ-ի կողմից* |
| **3.2** | **ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն վերը նշված 1.2 գործողության շրջանակներում մշակվելիք ԲՍԿՊ-ում կներառի ռեսուրսների արդյունավետության եւ աղտոտման կանխարգելման ու կառավարման միջոցառումներ | Նույն ժամկետը, ինչ ԲՍԿՊ-ի ընդունման եւ իրականացման համար | *Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ* | Ծրագիր | ԲՍԿՊ-ի թարմացումը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |
| | **ԲՍՍ N 4. ՀԲ** | | | | |
| **4.1** | **ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կներառի երթեւեկության եւ ճանապարհային անվտանգության ռիսկերի կառավարման միջոցառումներ, ինչպես պահանջվում է վերը նշված 1.2 գործողության շրջանակներում մշակվելիք ԲՍԿՊ-ում | Նույն ժամկետը, ինչ ԲՍԿՊ -ի ընդունման եւ իրականացման համար | *Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման* գրասենյակ | *Ծրագիր* | ԲՍԿՊ-ի թարմացումը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |
| **4.2** | **ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կգնահատի եւ | Նույն ժամկետը, ինչ ԲՍԿՊ -ի ընդունման եւ իրականացման համար | Ջրային կոմիտե/<br>Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | ԲՍԿՊ-ի թարմացումը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | կկառավարի համայնքի վրա Ծրագրի գործունեությունից առաջացող կոնկրետ ռիսկերն ու ազդեցությունները եւ կներառի մեղմացնող միջոցառումներ ԲՍԿԾ-ի համաձայն մշակվելիք ԲՍԿՊ-ներում | | | | |
| 4.3 | **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կգնահատի եւ կիրականացնի միջոցառումներ՝ Ծրագրի անվտանգության ռիսկերը կառավարելու համար: Այս միջոցառումները կներառվեն վերը նշված 1.2 գործողության շրջանակներում մշակվելիք ԲՍԿՊ-ում | Նույն ժամկետը, ինչ ԲՍԿՊ-ի ընդունման եւ իրականացման համար | Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ | | |
| | **ԲՍՍ N 5. ՀԲ** | | | | |
| 5.1 | **ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**<br>Ինչպես նշված է 1.2 գործողության մեջ, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ (ՎՔՇՓ)՝ մշակված ՀՖԳ-ի կողմից Ծրագրի համար՝ համաձայն ԲՍՍ5-ի | Ընդունել ՎՔՇՓ-ն ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման ամսաթվին, իսկ դրանից հետո այն կիրառել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | *Ջրային կոմիտե/*<br>*Ծրագրի իրականացման գրասենյակ* | *Ազգային գործընկեր* | ՎՔՇՓ-ն բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |
| 5.2 | **ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ**<br>Ինչպես նշված է 1.2 գործողության մեջ, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի վերաբնակեցման գործողությունների ծրագիր | Ընդունել եւ իրականացնել համապատասխան ՎԳԾ-ն, ներառյալ՝ ապահովել, որ հողի եւ դրան կից ակտիվների տիրապետումը ստանձնելուց առաջ | *Ջրային կոմիտե /Ծրագրի իրականացման գրասենյակ* | *Ազգային գործընկեր* | *Վերաբնակեցման պլանները (անհրաժեշտության դեպքում) բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից* |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | (ՎԳԾ), ինչպես սահմանված է ՎՔՇՓ-ում եւ համապատասխանում է ԲՍՍ5-ին: | տրամադրվի ամբողջական փոխհատուցում, եւ տեղահանված անձինք վերաբնակեցվեն եւ նրանց տեղափոխման նպաստներ տրամադրվեն | | | |
| **5.3** | **ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ վերաբնակեցման վերաբերյալ բողոքները լուծող բողոքարկման մեխանիզմը (ԲՄ) նկարագրված լինի ՎՔՇՓ-ում, ՎԳԾ-ներում եւ ՇԿՆՊ-ում եւ գործի ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Տեղում աշխատանքների մեկնարկից առաջ եւ ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/<br>Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | *ՎՔՇՓ-ներ, ՎԳԾ-ներ եւ ՇԿՆՊ-ն բավարար են համարվում ՀՖԳ-ի կողմից* |
| | **ԲՍՍ N 6. ՀԲ** | | | | |
| **6.1** | **ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կսահմանի կենսաբազմազանության նախնական գնահատում՝ համապատասխան ԲՍԿՇ առաջարկություններին:<br>Կենսաբազմազանության նախնական գնահատման արդյունքների հիման վրա եւ անհրաժեշտության դեպքում Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի Կենսաբազմազանության կառավարման պլան (ԿԲԿՊ)՝ համապատասխան ԲՍՍ6-ին: Եթե կրիտիկական բնակավայրը, | Ընդունել ԿԲԿՊ-ն եւ սահմանել կենսաբազմազանության նախնական գնահատումը տեղում իրականացվող որեւէ գործունեությունից առաջ, իսկ դրանից հետո իրականացնել ԿԲԿՊ-ն ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/<br>Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | *Կենսաբազմազանության կառավարման պլանը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից* |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | Ջրոյական ոչնչացման դաշինքի տարածքը (ԶՈՏ), Կենսաբազմազանության առանցքային տարածքների (ԿԱՏ) տարածքը կամ պահպանվող տարածքները համընկնում են ծրագրի միջամտության տարածքի հետ, ապա գործընկերոջ կողմից պետք է մշակվեն ՁՖԳ բացառման ցանկի 17-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ՝ ցույց տալու համար, որ ծրագիրը թույլատրելի է ֆինանսավորման համար | | | | |
| | **ԲՍՍ N 8. ՀԲ** | | | | |
| **8.1** | **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի Մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ)՝ որպես ԲՍԿՊ-ի մաս եւ ԲՍՍ8-ին համապատասխան, երբ դա անհրաժեշտ է | Ընդունել ՄԺԿՊ տեղում իրականացվող աշխատանքներից առաջ, իսկ դրանից հետո իրականացնել ՄԺԿՊ-ն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | *Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ* | *Ազգային գործընկեր* | *Մշակութային ժառանգության կառավարման պլանը, որը համապատասխանության դեպքում ընդունելի է համարվում ՁՖԳ-ի կողմից* |
| **8.2** | **ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐ**<br>Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կնկարագրի եւ կիրականացնի պատահական գտածոների հայտնաբերման դեպքում գործողությունների ընթացակարգեր՝ որպես Ծրագրի ԲՍԿՊ-ի մաս | Նկարագրել ԲՍԿՊ-ում պատահական գտածոների ընթացակարգերը:<br>Կիրառել ընթացակարգերը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | *Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ* | *Ազգային գործընկեր* | ԲՍԿՊ-ի թարմացումը բավարար է համարվում ՁՖԳ-ի կողմից |
| | **ԲՍՍ N 10. ՀԲ** | | | | |
| **10.1** | **ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ** | Հաստատել ՇԿՆՊ-ն ԾԻԳ-ի ստեղծումից ոչ ուշ, քան մեկ ամիս անց, եւ | *Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ* | *Ազգային գործընկեր* | ՇԿՆՊ-ն բավարար է համարվում ՁՖԳ-ի կողմից |

| | ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի Ծրագրի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇԿՆՊ)՝ ԲՍՍ10-ին համապատասխան: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն շահագրգիռ կողմերին կտրամադրի ժամանակին, վերաբերելի, հասկանալի եւ մատչելի տեղեկություններ եւ խորհրդատվություն կտրամադրի նրանց մշակութային առումով համապատասխան եղանակով, որը զերծ կլինի մանիպուլյացիայից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից եւ ահաբեկումից | դրանից հետո իրականացնել ՇԿՆՊ-ն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | | | |
| **10.2** | **ԾՐԱԳՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**<br>Ինչպես նշված է 1.2 գործողության մեջ, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կստեղծի, կհրապարակի, կպահպանի եւ կգործարկի հասանելի բողոքարկման մեխանիզմ՝ Ծրագրի հետ կապված մտահոգություններն ու բողոքները ստանալու եւ դրանց լուծումը դյուրացնելու համար՝ արագ եւ արդյունավետ, թափանցիկ եղանակով, որը մշակութային առումով պատշաճ է եւ հեշտ հասանելի Ծրագրի բոլոր ազդակիր կողմերի համար, առանց որեւէ վճարի եւ առանց հատուցման, ներառյալ՝ անանուն ներկայացված մտահոգություններն ու | Ստեղծել բողոքարկման մեխանիզմ ԾԻԳ-ի ստեղծումից ոչ ուշ, քան երկու ամիս անց, եւ տեղում իրականացվող որեւէ գործունեությունից առաջ, եւ դրանից հետո պահպանել եւ գործարկել մեխանիզմը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/<br>Ծրագրի իրականացման գրասենյակ | Ազգային գործընկեր | *Բողոքարկման մեխանիզմը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից* |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | բողոքները՝ ԲՍՍ10-ին համապատասխան եղանակով: Բողոքարկման մեխանիզմը պետք է հագեցած լինի ՍՇԲ/ՍՈ բողոքներ ստանալու, գրանցելու եւ դրանց լուծումը դյուրացնելու համար, այդ թվում՝ զոհերին գենդերային հիմքով բռնության հետ կապված համապատասխան ծառայություններ մատուցողներին ուղղորդելու միջոցով՝ այս ամենն անվտանգ, գաղտնի եւ զոհակենտրոն եղանակով | | | | |
| **10.3** | **ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ** Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կընդունի եւ կիրականացնի հաղորդակցության ծրագիր, որի նպատակն է ապահովել ֆինանսավորող եւ իրականացնող մարմինների տեսանելիությունը, շահագրգիռ կողմերի պատշաճ ներգրավվածությունը, ծրագրերի գործունեության եւ օգուտների պատշաճ ըմբռնումը | Հաղորդակցության պլանի ընդունում ԾԻԳ-ի ստեղծումից ոչ ուշ, քան չորս ամիս անց, եւ իրականացում Ծրագրի ողջ ընթացքում | Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր | *Հաղորդակցության պլանը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից* |
| CS1 | ԲՍԿՇ-ի, ԲՍԱԳ-ի, ԲՍԿՊ-ի, ՎՔՇՓ-ի, ՎԳԾ-ի, ԳԳԾ-ի, ՇԿՆՊ-ի հաջող իրականացումը եւ ԲՍ ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու համար Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն կապահովի, որ բոլոր հիմնական շահագրգիռ կողմերին արդյունավետորեն տրամադրվեն կարողությունների զարգացմանն ուղղված թիրախային ջանքեր, այդ թվում՝ *Ջրային կոմիտեին/Ծրագրի* | Կարողությունների զարգացման ծրագրի սահմանում ԾԻԳ-ի ստեղծումից ոչ ուշ, քան երկու ամիս անց | Ջրային կոմիտե/ Ծրագրի իրականացման գրասենյակ | Ծրագիր եւ ազգային գործընկեր | Կարողությունների զարգացման պլանը բավարար է համարվում ՀՖԳ-ի կողմից |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | *իրականացման գրասենյակին (ԾԻԳ).*<br>• Բնապահպանական եւ սոցիալական սքրինինգի վերաբերյալ վերապատրաստում, ներառյալ՝ Բնապահպանական եւ սոցիալական գնահատման այնպիսի գործիքների իրականացումը, ինչպիսիք են ԲՍԱԳ-ն եւ ԲՍԿՊ-ն:<br>• Կենսաբազմազանության հարցերի վերաբերյալ վերապատրաստումներ (ներառյալ խիստ կարեւոր բնակավայրերը, մնացորդային ազդեցության գնահատումները եւ պահպանվող տարածքներում ռիսկերի կառավարումը)<br>• Խորհրդատվության եւ բացահայտման գործընթացների վերաբերյալ աշխատաժողովներ՝ շահագրգիռ կողմերի թափանցիկ եւ ներառական ներգրավվածությունն ապահովելու համար<br>• Ուղղորդում ԲՍԱԳ/ԲՍԿՊ, ԲԳԾ եւ ՇԿՆՊ պահանջները ծրագրային փաստաթղթերում ինտեգրելու, ինչպես նաեւ ԲՍ կատարողականի վերաբերյալ վերահսկողության, մշտադիտարկման եւ հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ: Շահառուներին (ֆերմերներ եւ տեղական համայնքներ)՝<br>• Կայուն գյուղատնտեսական գործելակերպերի վերաբերյալ կարողությունների զարգացում՝ կլիմայական առումով խելացի գյուղատնտեսությունը | Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | | | |

| ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|---|
| | խթանելու եւ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:<br>• Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման գործելակերպերի վերաբերյալ վերապատրաստում՝ ջրային պաշարների կայուն օգտագործումն ապահովելու եւ տեղական էկոհամակարգերը պաշտպանելու համար:<br>• Իրազեկման ծրագրեր՝ բողոքարկման մեխանիզմների եւ շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցով ծրագրի պատասխանատվությունն ապահովելու գործում տեղական համայնքների դերի վերաբերյալ:<br>• Այս կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնությունները կարեւոր են ապահովելու համար, որ շահագրգիռ բոլոր կողմերը տեղեկացված լինեն եւ հագեցած լինեն ծրագրի բնապահպանական եւ սոցիալական հայեցակետերն արդյունավետ կառավարելու համար՝ ապահովելով երկարաժամկետ կայունություն եւ միջազգային չափանիշներին համապատասխանություն: | | | | |